# Մասիս ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

34ՐԴ. ՏԱՐԻԹԻՒ 26 (1676) ՇԱԲԱԹ, ՅՈՒԼԻՍ 12, 2014
VOLUME 34, NO. 26 (1676) SATURDAY, JULY 12, 2014

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## Թուրք Իրաւապաշտպանը Ս.Դ.Հ.Կ. Ներկայացուցիչներուն Առջեւ Կ'ընդգծէ Թուրքիոյ Կողմէ Ցեղասպանութեան Ճանաչման Անհրաժեշտութիւնը




*Թուրք իրաւապաշտպան եւ հրատարակիչ Ռակըպ Զարաքօլու Երեւանի Հնչակեան կեդրոնէն ներս*

*Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Երեւանի Ստեփան Սապահ Կիւլ կեդրոնին մէջ Ս.Դ.Հ.Կ. Հայաստանի վարչութեան ներկայացուցիչներ Վազգէն Մեսրոպեան, Տմիթրի Մարտիրոսեան ու Գագիկ Մելիքեան հանդիպած են յայտնի թուրք իրաւապաշտպան եւ հրատարակիչ Ռակըպ Զարաքօլուի հետ:*

*Այս հանդիպմանը թաց քին թուրք իրաւապաշտպանը անգամ մը եւս հաստատած է Թուրքիոյ կողմէ Հայոց Ցեղասպանութեան ճանաչման անհրա ժեշտութիւնն ու համաձայնած է ՍԴՀԿ ներկայացուցիչներու այն դիտարկ ման հետ, որ ժամանակն է նաեւ պաշտօնական Անգարային հետ խօսելու պահանջատիրութեան լեզուով:*

*«Հայերունը պէտք է վերադարձուի հայերուն», նշած է Զարաքօլու աւելցնելով, որ Թուրքիոյ պետութիւնը հիմնուած է հայերու եւ յոյներու հողերուն վրայ:*

*Զարաքօլուն նաեւ հանդիպած է Հնչակեան կուսակցութեան »Սարգիս Տխրունի« Ուսանողական երիտասարդական միութեան ներկայացուցիչներուն հետ:*

*Զարաքօլու Հայաստան եկած է ներկայացնելու համար «Հայոց ցեղասպանութիւնը Օսմանեան Թուրքիայում. վերապրածների վկայութիւններ» արխիւային փաստաթղթերու եռահատոր ժողովածուն, որու առաջին հատորի թուրքերէն տարբերակը հրատարակուեցաւ վերջերս:*

## Սերժ Սարգսեան. «Մեծ Եղեռնի Հարիւրամեակն Աւարտի Սահմանագիծ Չէ, Այլ Իւրատեսակ Հանգրուան




*Նախագահ Սերժ Սարգսեան Պուէնոս Այրէսի մէջ կը մասնակցի Հայոց ցեղասպանութեան թանգարանի հիմնարկէքի արարողութեան*

*Յուլիսի 8-ին՝ Արժանթին կատարած պաշտօնական այցի երկրորդ օրը, ՀՀ նախագահ Սերժ Սարգսեան Պուէնոս Այրէսի քաղաքային կառավարութեան նախարարներու խորհուրդի նախագահ Օռասիօ Լառետայի, տեղական ինքնակառավարման մարմիններու եւ արժանթինահայ համայնքի ներկայացուցիչներուն հետ ներկայ գտնուած է Պուէնոս Այրէսի Փալերմօ թաղամասին վրայ Հայոց ցեղասպանութեան թանգարանի հիմնարկէքի արարողութեան:*

*Այս առթիւ իր ունեցած ելոյթի ընթացքին Սարգսեան յայտարարած է. «Յաջորդ տարի լրանում է Հայոց ցեղասպանութեան 100-ամեայ տարելիցը: Սակայն բոլորին է յայտնի՝ մարդկութեան դէմ ոճիրները վաղեմութեան ժամկէտ չունեն: Մեծ Եղեռնի հարիւրամեակն աւարտի սահմանագիծ չէ, այլ իւրատեսակ հանգրուան : Հարիւրամեակով մենք ամփոփելու ենք պատմական մի փուլ եւ ազդարարելու յանուն արդարութեան վերականգման պայքարի մի նոր փուլ, որը համալրուելու է ժխտողականութեան քաղաքականութեանը դիմակայելու նոր գործիքներով, որտեղ մենք լինելու ենք աւելի հզօր, հզօր միջազգային հանրութեան հետ միասին, քանզի միասնութեան մէջ է ուժի գաղտնիքը եւ արդարութեան յաղթանակը»:*

*Նախագահ Սարգսեան առանձին հանդիպում ունեցած է նաեւ արժանթինահայ համայնքի ներկայացուցիչներուն հետ, որու ըն-*

*Շար.ը էջ 4*

## Թուրքիոյ Արտաքին Գործոց Նախարարութիւնը Հերքեց Հայ թրքական Սահմանի Բացման Մասին Տեղեկութիւնը

*Թուրքիոյ Արտաքին Գործոց Նախարարութիւնը հերքեց թրքական «Թարաֆ» թերթի լուրը այն մասին, թէ Թուրքիոյ վարչապետ Ռեճեփ Թայիփ Էրտողան յանձնարարած է բանալ հայ թրքական սահմանի Ալիճանի անցակէտը:*

*Թուրքիոյ Արտաքին Գործոց Նախարարութեան պաշտօնական կայքի լրատուութեամբ, արտաքին գործոց նախարարու թեան խօսնակը յայտնած է, որ հայ թրքական սահմանի բացման մասին խօսակցութիւնները չեն համապատասխաներ իրականութեան:*

*«Սահմանի բացումը կրնայ օրակարգ գալ միայն Հարաւային Կովկասի մէջ համապարփակ եւ շարունակական բնականոնացման համար հնարաւորութիւն ապահովող զարգացումներու շրջանակին մէջ: Այդ հարցով որոշիչ կ'ըլլայ Հայաստանի կողմէ բոլոր դրացիներուն հետ խնդիրները լուծելու կամքի դրսեւորումը եւ այդ ուղղութեամբ քայլեր կատարելը», ըսած է Թուրքիոյ ԱԳՆ խօսնակը:*

*Թրքական «Թարաֆ» թերթը գրած էր, որ Թուրքիոյ վարչապետ Էրտողանը Ապրիլի 23- ին հայերուն յղած «ցաւակցական» ուղերձէն յետոյ, որպէս Հայաստանի հետ յարաբերութիւնները բարելաւելու «երկրորդ քայլ», յանձնարարած է բանալ Հայաստանի հետ սահմանային Ալիճանի անցակէտը: «Թէեւ յստակեցուած չէ սահմանի պաշտօնական բացման ժամանակացոյցը, սակայն, քուլիսներու ետին խօսակցութիւններ կան, որ հաւանաբար սահմանը կը բացուի Սեպտեմբերին«, գրած էր թրքական թերթը:*

## Դեսպան Հեֆերն. «Հայկական կողմէն Տարածքներու Վերադարձէն Առաջ Ապահովութեան Երաշխիքներ Հարկաւոր Են»

*Հայաստանի մօտ Ամերիկայի Միացեալ Նահանգներու արտակարգ եւ լիազօր դեսպան Ճոն Հեֆերն Լեռնային Ղարաբաղի յարակից տարածքներու վերադարձը կը նկատէ հակամարտութեան կարգաւորման վեց տարրերէն մէկը: Այս մասին Ճոն Հեֆերն ըսած է հայաստանեան լուրերու NEWS.am-ի կայքէջին:*

*Դեսպանի խօսքերով, ինք նկատի չունի, որ Լեռնային Ղարաբաղի յարակից տարածքները պէտք է Ատրպէյճանին վերադարձուին առաջին հերթին: «Ոչ, ոչ. այդ կ'ենթադրուի հիմնահարցի վերջնական լուծման շրջանակէն ներս: Ըստ համաձայնեցուած վեց տարրերուն, Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակը պիտի լուծուի ազատ կամքի արտայայտման միջոցով: Այնուհետեւ Լեռնային Ղարաբաղի յարակից տարածքները՝ բացառութեամբ Լաչինի միջանցքին, պէտք է վերադարձուին: Այնպէս որ՝ իմ խօսքերուն մէջ ոչ մէկ նոր բան չկայ»,- շեշտած է Հեֆերն:*

*Ազատագրուած տարածքներու վերադարձի պարագային հայկական կողմին ապահովութեան երաշխիքներու տրամադրման մասին հարցին ի պատասխան, ամերիկացի դիւանագէտը ըսած է, որ հակամարտութեան կարգաւորման վեց տարրերը նաեւ միջազգային խաղաղարար ուժեր կ'ենթադրեն: «Այն հարցը, թէ որ երկրի կամ կազմակերպութեան ուժերը պէտք է ըլլան այդ խաղաղարար ուժերի մէջ, կողմերու միջեւ բանակցութիւններու առարկայ են: Իհարկէ, անվտանգութեան որոշակի երաշխիքներ անհրաժեշտ են եւ միջազգային խաղաղարար ուժերու ներկայութիւն, նախքան որ հայկական կողմը վերադարձնէ տարածքները»,- ըսած է դեսպան Ճոն Հեֆերն:*

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# Այս ո՞ւր էք տանում Հայաստանը

***ԹԱՄԱՐ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ***

*Զարմանահրաշ իրադարձութիւններ են տեղի ունենում Հայաստանում: Հայաստանը առայժմ պաշտօնապէս ոչ Մաքսային Միութեան, ոչ Եւրասիական Տնտեսական Միութեան անդամ է, բայց արդէն Հայաստանը օտարերկրացիներին ներկայացւում է որպէս Ռուսաստանի տարածք:*

*Պարզւում է, Հայաստան մտնելուց առաջ ինքնաթիռում օտարերկրացիներին արդէն առաջարկւում են Ռուսաստանի կառավարութեան կողմից հաստատուած եւ Ռուսաստանի ու Բելառուսի տարածքում գործող միգրացիոն քարտեր լրացնել: Այս մասին «Ազատութեանը» պատմել է այս շաբաթ իրականացուած Պրահա-Երեւան չուերթի ուղեւորներից մէկը: Ինքնաթիռում բաժանուած այդ փաստաթուղթը կարելի է գտնել Ռուսաստանի միգրացիոն ծառայութեան պաշտօնական էջում, հարցաթերթիկում ռուսերէն եւ անգլերէն տասը հարցը կայ, որոնցից մէկն, օրինակ, փորձում է պարզել՝ ո՞րն է օտարերկրացու այցի նպատակը: «Ասացին՝ պէտք է լրացնէք, այլապէս ձեզ չեն թողնի իջնէք օդանաւից: Ես ասացի՝ ես հրաժարւում եմ, ոչինչ, թող չթողնեն: Այդ օդանաւում մօտ 40 օտարերկրացի կար, որոնք գաղափար չունեն՝ ինչ թուղթ է, իրենց տուել են, անգլերէն գրուած է, պատրաստւում էին լրացնել, եւ մի մասը արդէն լրացրել էր»,- պատմել է «Ազատութեան» գրուցակիցը: Բարձրացուած աղմուկից յետոյ ուղեկցորդուհին ետ է վերցրել թերթիկը, թէեւ օդանաւում գտնուող օտարերկրեայ միւս քաղաքացիները լրացրել են այն: Պրահա-Երեւան աւիաչուերթից յաճախ օգտուող «Ազատութիւն» ռատիոկայանի գրուցակիցը պատմել է, որ առաջին անգամ է նման միջադէպի հանդիպել, իսկ հարցին, թէ ինչո՞ւ Հայաստան ուղեւորուելիս ինքը պէտք է լրացնի այդ թերթիկը, չէխ ուղեկցորդուհին պատասխանել է՝ կարգն է այդպէս: «Հարցրեցի՝ ո՞վ է պնդում, որ մենք լրացնենք, ասաց՝ կարգն է այդպէս, պէտք է լրացնենք: Ասացի՝ ես կարգը չեմ ընդունում, որովհետեւ ես գնում եմ Հայաստան»:*

*Հազիւ թէ Պրահա-Երեւան չուերթում տեղի ունեցածը պատահականութիւն լինի, կամ ինքնագործունէութիւն: Եզրակացութիւն անելու մէկ տարբերակ կայ՝ ռուսական կողմը արդէն ստիպում է Հայաստանի իշխանութիւններին համապատասխան քայլեր ձեռնարկել, ինչի արդիւնքում Հայաստանը Եւրոպայում արդէն իսկ կը սկսի դիտարկուել որպէս Եւրասիական Միութեան տարածք, աւելին՝ որպէս ռուսական ազդեցութեան տակ գտնուող տարածք:*

*Հայաստան ժամանող օտարերկրացիների համար, պատկերացնէք, թէ ինչ «անակնկալ» կը լինի՝ Հայաստան ժամանելիս, պարզեն, որ իրենց առաջարկւում են Ռուսաստանի կառավարութեան կողմից հաստատուած եւ Ռուսաստանի ու Բելառուսի տարածքում գործող միգրացիոն քարտեր լրացնել:*

*Իսկ ո՞ւր մնաց Հայաստանի Հանրապետութիւնը, ինքնիշխան, անկախ Հայաստանը...*

*Այսպիսի քայլերով մեր երկրի ինքնիշխանութեան բոլոր նշոյլները վերացնելով մեր իշխանութիւնները շարունակելու են իրենց հաւատարմութիւնն ապացուցել Մոսկուային, դրան ի պատասխան նաեւ իբր՝ Ռուսաստանի հետ խնդիրները կարգաւորելու իրենց շնորհքը:*

*Օրերս կառավարութիւնը հաւանութեան արժանացրեց Միգրացիոն ծառայութեան առաջարկած երկու փաստաթղթեր, որոնց համաձայն Հայաստանում եւ Ռուսաստանում հեշտացուելու է երկու երկրների քաղաքացիների գտնուելու կարգը: Առաջին համաձայնագրով՝ կողմերի՝ տարածք մուտք գործելուց յետոյ քաղաքացիները գործող կարգով պահանջուող 7 օրուայ փոխարէն կարող են հաշուառման կանգնել 30 օրուայ ընթացքում: Այսօր գործող կարգով, այն ՀՀ քաղաքացին, ով ցանկանում է Ռուսաստանում որեւէ գործունէութիւն ծաւալել, դիմում է համապատասխան մարմիններին՝ ներկայացնելով անհրաժեշտ փաստաթղթեր, որից յետոյ միայն կարող է ստանալ դրական կամ բացասական պատասխան: Նոր համաձայնագրով վերացւում է այդ լրացուցիչ թոյլտուութեան անհրաժեշտութիւնը:*

*Անշուշտ, Հայաստանից Ռուսաստան արտագնայ աշխատանքի մեկնողների համար է սա դրական քայլ է: Բայց հայրենի իշխանութիւններն այս քայլով արտագաղթին են զարկ տալիս, ինչը սպառնում է մեր պետութեան անվտանգութեանը: Մինչդեռ ոչինչ չի արւում, որպէսզի Հայաստանի քաղաքացիները աշխատատեղ ունենան սեփական հայրենիքում, աշխատեն իրենց հայրենիքի համար:*

*Էլ ինչո՞վ կարող են հպարտանալ մեր իշխանութիւնները՝ դատարկուող Հայաստանո՞վ, արտագաղթող ժողովրդո՞վ ու Հայաստանը ռուսական տարածք դարձնելո՞վ...*

*«ՀԱՅԵԼԻ»*

# Ո՞ւմ է Պուտինը Հայաստանում իշխանութեան բերելու

***ՀԱՅԿԱԶՆ ՂԱՀՐԻՅԵԱՆ***

*Հայ-ռուսական յարաբերութիւններում հետաքրքիր իրավիճակ է ստեղծուել: Այն առումով, որ, մի կողմից, պարզուել է շատ բան, միւս կողմից, խաղը մեր տարածաշրջանում բաւական բարդացել է, եւ դժուար է միանշանակ հետեւութիւններ անել զարգացումների վերաբերեալ, այդ թւում՝ հայ-ռուսական յարաբերութիւնների յետագայ բնոյթի:*

*Ռուսաստանը չի շտապում Հայաստանը ներգրաւել Եւրասիական Տնտեսական Միութիւն, միւս կողմից ակտիւօրէն փորձում է աբսորբացնել Հայաստանը նուազագոյն ծախսերով:*

*Հայաստանն, իր հերթին, Ռուսաստանի պատասխանատուութեանն է յանձնել ամէն ինչ՝ սոցիալ-տնտեսական խնդիրները, անվտանգութիւնը, ներքին ու արտաքին քաղաքական որոշումների իրաւունքը:*

*Հայաստանը չի անում ոչինչ ու միայն սպասում է: Թէ իշխանութիւնը, թէ միւս քաղաքական ուժերը, գիտակցաբար թէ Մոսկուային չբարկացնելու համար,- արդէն կարեւոր չէ, - իրականում մասնակից չեն Ռուսաստանի քաղաքական ծրագրերին: Այս առումով, նկատելի է իւրատեսակ լռելեայն «սաբոտաժ», որը Մոսկուայի շանտաժի քաղաքականութեան հետեւանքն է:*

*Այս ֆոնին, նկատելի է, որ հայկական խնդիրները Մոսկուայի համար օբիեկտիւօրէն դառնում են կամ ուժից վեր բեռ, կամ գործօն, որն ի թիւս միջազգային այլ խնդիրների, ոչ թէ պարզապէս խանգարում է նրա ծրագրերի իրագործմանը, այլ սկսել է աշխատել դրանց դէմ:*

*Այս տեսակէտից, Մոսկուան ունի Հայաստանից «ազատուելու» խնդիր: Ընդ որում, կայ երկու տարբերակ՝ կամ վերացնել հայկական պետականութիւնը, կամ գործընկերային յարաբերութիւններ հաստատել նրա հետ: Առաջինը ոչ միայն չի լուծի Ռուսաստանի խնդիրները, այլեւ աւելի կը խորացնի դրանք: Երկրորդ դէպքում, անհրաժեշտ են գործընկերներ, որոնք հանդէս կը գան տարբեր նախաձեռնութիւններով՝ կապուած թէ հայ-ռուսական յարաբերութիւնների, թէ տարածաշրջանի խնդիրների հետ:*

*Հայաստանի ներկայիս քաղաքական համակարգն իր բոլոր սեգմենտներով գործընկերներ չեն, այլ խմբաւորումներ, որոնք Մոսկուայից ընդամէնն իշխանութիւն են ակնկալում եւ ընդունակ չեն որեւէ նախաձեռնութիւն ցուցաբերել: Մոսկուայում դրանում համոզուել են՝ Կրեմլի միջանցքում գոյացած հերթացուցակին ծանօթանալով, եւ համապատասխան կարծիք կազմելով, որը հրապարակման ենթակայ չէ:*

*Մոսկուան պէտք է «ազատուի» Հայաստանից, որպէսզի կարողանայ արդիւնաւէտ իրացնել սեփական շահերը, որոնք համատեղելի չեն Հայաստանի շահերի հետ, ինչն էլ մշտական խնդիր է հայ-ռուսական յարաբերութիւններում: Այն պէտք է լուծել, հակառակ պարագայում տուժելու է ոչ միայն Հայաստանը, այլեւ Ռուսաստանը: Քանի որ միակողմանի կախուածութիւն չի լինում, եւ ամէն ինչ փոխպայմանաւորուած է:*

*Մոսկուայում կարծես թէ հասկացել են այս իրավիճակը, եւ Հայաստանում իշխանութիւնը յանձնելու են այն ուժերին, որոնք հանդէս կը գան Հայաստանի ինքնիշխան ներքին ու արտաքին քաղաքականութեան դիրքերից: Այլ ելք պարզապէս չկայ:*

*«ԼՐԱԳԻՐ»*

# 2 Տարբեր Կարծիք

*Ապահո՞վ երկիր է արդեօք Հայաստանը: Կայո՞ւն երկիր է արդեօք Հայաստանը: Այս հարցերին ի պատասխան, ՀՀ քաղաքացիների մեծ մասը թերեւս ժխտողական պատասխան կը տայ: Դէպի անյայտութիւն ձգուող քարաւանների ընթացքն այդ անապահովութեան, անկայունութեան մասին է վկայում: Հայ մարդն իր ապագան չի տեսնում հայրենիքում՝ նախընտրում է օտար-ամայի ճամփեքին փնտռել այդ ապահովութիւնն ու կայունութիւնը, եւ դա է պատճառը, որ չի վախենում այն գրկանքներից, որոնք, որպէս կանոն, կրում են գաղթականները: Մի կողմից հարկ կայ այդ թերահաւատութիւնը կոտրելու, մարդկանց իրենց հայրենիքի հանդէպ վստահութիւն ներշնչելու: Միւս կողմից՝ այդ վստահութիւնը ներշնչելու ճանապարհը չպէտք է կեղծիքը լինի:*

*Մարդն ինքն իր կեանքով, իր փորձով պէտք է համոզուի, որ մեր երկիրն ապահով է, կամ գոնէ շարժւում է դէպի ապահովութիւն: Նախօրէին Արգենտինայում արտասանուած ելոյթում Սերժ Սարգսեանը Հայաստան է հրաւիրել մեր հայրենակիցներին եւ փորձել է վստահութիւն ներշնչել հայրենիքի ու մեր ապագայի նկատմամբ: «Այս անկայուն ու անապահով աշխարհում կա՞յ աւելի ապահով տեղ հայկականութիւնը վերալիցքաւորելու համար»,- հարցրել է նա արգենտինահայ համայնքի անդամներին: Եւ յայտարարել է. «Պատմութեան անիւը շարունակում է պտտուել եւ, բարեբախտաբար, ի նպաստ մեզ»:*

*Համայնքի ներկայացուցիչները, անշուշտ, չեն առարկել այս պնդմանը, թէեւ, եթէ խօսէին, հաւանաբար, կը պատմէին հայրենիքի հետ առնչուելու իրենց «դառը» փորձի մասին: Սերժ Սարգսեանի այս լաւատեսութեանը երէկ հեռակայ կարգով հակադարձել է ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ Ջէյմս Ուորլիքը, ով իր թուիթերեան էջում գրել է. «Ղարաբաղեան ստատուս քուոն գնալով աւելի վտանգաւոր է դառնում»: Եւ այդ վտանգի մասին են վկայում սահմանից ստացուող լուրերը:*

*«ՀՐԱՊԱՐԱԿ»*

ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

**ՄԱՍԻՍ** ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

**MASSIS Weekly**
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $80.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

# ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

## Աշոտ Սուքիասեանը Պնդում Է, Որ Ինքն Է Կեղծել Նաւասարդ Կճոյեանի Եւ Տիգրան Սարգսեանի Ստորագրութիւնները

*Օֆշորային սկանդալում ներգրաւուած, Յունիսի 19-ից կալանաւորուած գործարար Աշոտ Սուքիասեանը նմանակել է նախկին վարչապետ Տիգրան Սարգսեանի եւ Նաւասարդ արքեպիսկոպոս Կճոյեանի ստորագրութիւնները, որպէսզի ոչ մէկն իրենից իր բիզնէսը չկարողանայ խլել: Այս մասին NEWS.am-ի հետ զրոյցում ասաց Աշոտ Սուքիասեանի փաստաբան Եուրիկ Խաչատրեանը:*

*«Հարցաքննութիւնը դեռ չի աւարտուել, մեկուսարանում ամէն օր հարցաքննութիւն է լինում, քանի որ գործն ինքնին երկար՝ բիզնէս հիմնելուց մինչեւ գործարքներ: Ինչպէս ի սկզբանէ յայտարարել է, նա միայնակ է գործել, բայց Տիգրան Սարգսեանի եւ Նաւասարդ Կճոյեանի ստորագրութիւնները նմանակել է: Նա այս հանգամանքի մասին հենց սկզբից էլ ասել է»,- ասաց փաստաբանը:*

*Նրա խօսքով՝ գործարարը յայտնի մարդկանց ստորագրութիւնները կեղծել է առանց այդ մարդկանց զգուշացնելու: Այս արարքի նպատակն էլ այն է եղել, որպէսզի հետագայում պաշտպանի իր բիզնէսը:*

*«Աշոտ Սուքիասեանը մեծ ցաւ է ապրում, որ նմանակել է այդ մարդկանց ստորագրութիւնները: Ինքը վախեցել է, որ իր բիզնէսը կը խլեն իրենից, Աֆրիկայում մէկ անգամ արդէն ինչ-որ մէկը խաբէութեամբ տիրացել էր նրա բիզնէսին: Իսկ նմանակել է հենց այս մարդկանց ստորագրութիւնը, քանի որ Աշոտ Սուքիասեանը Արարատեան Թեմի խաչքաւորն է եղել, իսկ Տիգրան Սարգսեանն էլ՝ ատենապետը: Երբ ես նրան հարցրի, թէ ինչու է նմանակել, նա սկսեց արդարանալ, տարբեր պատճառներ բերել, թէ իբր ցանկացել է հետագայում սիւրպրիզ անել Տիգրան Սարգսեանին եւ սրբազանին: Բայց սրանք միայն արդարանալու միջոցներ են: Իրականում, Աշոտ Սուքիասեանը կեղծել է, որպէսզի իր բիզնէսին կպնող չլինի»,- աւելացրեց Եուրիկ Խաչատրեանը:*

*2009թ. էկոնոմիկայի նախարարութեան շէնքում նախարար Ներսէս Երիցեանի մօտ ՀՀ այդ ժամանակ վարչապետ Տիգրան Սարգսեանի գլխաւորութեամբ հանդիպում-խորհրդակցութիւն էր կազմակերպուել որի ժամանակ քննարկուել էր Ռուսաստանի՝ Հայաստանին տրամադրուած 500 միլիոն դոլարի վարկը, որից 100 միլիոնը Ռուսաստանը պէտք է տար ապրանքային տեսքով՝ ադամանդի հումքով: Գործարար Փայլակ Հայրապետեանն առաջարկել էր գրաւադրել իր 33 մլն դոլար արժողութեամբ իր ամբողջ անշարժ գոյքը եւ «Ամերիաբանկը»-ից ստացուած մօտ 10 միլիոն դոլարը տուել Աշոտ Սուքիասեանին, որն էլ վերցնելով գումարը՝ փախել էր երկրից: 2014թ. Փետրուարին Աշոտ Սուքիասեանին յայտնաբերել էին Վրաստանում:*

## Սերգէյ Մինասեան. «Ընդդիմութիւնը Ունակ Չէ Իրավիճակ Փոխել Երկրում»

*Հայաստանեան ընդդիմութիւնը ունակ չէ իրավիճակ փոխել երկրում: Այս մասին ,յայտարարել է Կովկասի ինստիտուտի փոխտնօրէն Սերգէյ Մինասեանը:*

*Նրա խօսքով՝ դա բացատրւում է նրանով, որ մի կողմից, 2012-ի խորհրդարանական ընտրութիւնների արդիւնքում երկրում ձեւաւորուել է մէկ քաղաքական ուժի մենաշնորհ, միւս կողմից ընդդիմադիր ուժերը չեն կարողանում գրագէտ ձեւով օգտագործել կուտակուած հասարակական դժգոհութիւնը: Այսպիսով, իրերի ներկայ դրութիւնը, ըստ փորձագէտի, կարող է փոխուել կամ 2017-ին, երբ տեղի կ'ունենան հերթական խորհրդարանական ընտրութիւններ, կամ ֆորս-մաժորային իրավիճակում:*

*Յիշեցնենք, որ խորհրդարանական ոչ իշխանական ուժերի քառեակը (ԲՀԿ, ՀԱԿ, ՀՅԴ, «Ժառանգութիւն») 12 կէտից բաղկացած պահանջներ է ներկայացրել իշխանութիւններին: Այդ կէտերը վերաբերւում են կուտակային կենսաթոշակային համակարգին, շրջանառութեան հարկին, կարմիր գծանշումներին, գիւղմթերքի արտադրութեանը, «Նաիրիտ» գործարանին, «Որոտան» ՀԷԿ-երի համալիրի գոյքի վաճառքին, տրանսպորտի թանկացմանը, 100 տոկոսանոց համամասնական ընտրակարգին:*

## Րաֆֆի Յովհաննիսեանը Հայաստանի Իշխանութիւններին. «Ձեռքներդ Հեռու Պահէք Մեր Կուսակիցներից»

*Ազգային Անվտանգութեան ծառայութեան կողմից «Ժառանգութեան» կուսակցութեան անդամ Հրայր Մանուկեանի հաւաքագրման փորձը կուսակցութեան դէմ է ուղղուած: Այդ մասին Յուլիսի 8-ին, մամուլի ասուլիսին յայտարարեց «Ժառանգութիւն» կուսակցութեան առաջնորդ Րաֆֆի Յովհաննիսեանը:*

*Նրա խօսքով՝ Հայաստանի ազգային անվտանգութեան ծառայութեան աշխատակիցները փորձել են Յովհաննիսեանի ղեկավարած կուսակցութեան առնուազն երկու անդամի հաւաքագրել: Յովհաննիսեանը նաեւ հաղորդեց, որ այսօր Հրայր Մանուկեանը դատախազութիւն եւ օմբուդսմենի գրասենեակ կը ներկայացնի յանցագործութեան մասին դիմում. «Այս գործում որպէս միջնորդ է հանդէս եկել Հայաստանի կրթութեան եւ գիտութեան նախարարի խորհրդականը, իսկ յանցագործութիւնն իրականացրել է Ազգային Անվտանգութեան Ծառայութիւնը»:*

*Կարող եմ ասել, որ նա շատ խելացի երիտասարդ լրագրող է: Եւ այն փաստը, որ այդ առաջարկն արուել է «Ժառանգութիւն» համագումարից առաջ եւ յետոյ, վկայում է մի բանի մասին. Դա ուղղուած էր մեր կուսակցութեան դէմ: «Պարզապէս իշխանութիւնները վախենում են երկրի քաղաքացիներից: Ձեքներդ հեռու մեր կուսակիցներից»:*

## Հրանոյշ Խառատեան. «Բոլոր Նախապայմանները Կան, Որ Աշնանը Դէպքեր Տեղի կ'ունենաւ»



Նախախորհրդարանի անդամ Հրանոյշ Խառատեան

*Նախախորհրդարանի անդամ Հրանոյշ Խառատեանի կարծիքով՝ աշնանը որոշ վճռական գործողութիւններ կամ վճռական դէպքեր տեղի կ'ունենան, քանի որ դրա համար բոլոր նախապայմանները կան:*

*«Ինձ թւում է՝ աշնանը, անկախ նրանից, թէ քառեակն է ուզում, ՕԵԿ-ն է ուզում, ով է ուզում, քաղաքական իրավիճակը հասունացած է եւ լարուած է լինելու: Եթէ Հոկտեմբերին նախատեսուած է ստորագրել Եւրասիական Տնտեսական Միութեանն անդամակցութիւնը, անկախ դրանից նաեւ Ղարաբաղի շուրջ կատարուող զարգացումները հանգեցնում են նրան, որ աշնանը որոշ վճռական գործողութիւններ կամ վճռական դէպքեր տեղի կ'ունենան: Սրանք բոլորը խտացուած երեւում են աշնանը, եւ կարծում եմ, որ բոլոր քաղաքական ուժերը փորձում են այս իրավիճակում իրենց «փայաբաժինը» ստանալ՝ նախապատրաստւում են իրենց դիրքորոշումներով ու ակտիւութեամբ»,-Tert.am-ի հետ զրոյցում ասաց նա:*

*Բացի այդ, ըստ Խառատեանի՝ նման վճռական դէպքերն էլ կարող են հանգեցնել իշխանափոխութեան, կամ էլ իշխանութեան ներսում կարող են տեղի ունենալ զգալի փոփոխութիւններ:*

*«Իշխանափոխութիւն ասելով ես նկատի չունեմ յեղաշրջում, այլ իշխանութեան ներկայիս դասաւորութիւնների մէջ աշնանը կատարուելիք փոփոխութիւններ, որովհետեւ եթէ մենք ստորագրելու ենք ԵՏՄ-ի հետ համաձայնագիրը, հնարաւոր է՝ ժողովրդական մեծ դժգոհութիւն առաջանայ, եւ նոյնիսկ իշխանութեան մէջ կատարուող փոփոխութիւնը կարող է կատարուել ժողովրդական դժգոհութիւնը մեղմելու նպատակով: Իսկ ղարաբաղեան հակամարտութեան ակտիւացման հարցում էլ, կարծում եմ, իշխանութեան մէջ կատարուող փոփոխութիւնը կը մատուցուի հնարաւոր վտանգները իբրեւ թէ կանխելու համար. Նախագահը կը փոփոխուի, թէ կառավարութեան ներսում կը կատարուի փոփոխութիւն, չեմ կարող ասել, բայց որ Ղարաբաղեան խնդիրն ամենօրեայ վտանգների առջեւ է կանգնած եւ, յամենայնդէպս, իշխանութեան կողմից լուծումների առաջարկ չի արւում եւ դիւանագիտական քայլեր չեն արւում, դա փաստ է»,-նշեց նա եւ յաւելեց, թէ այս ամէնը զգալով՝ բոլոր քաղաքական ուժերն առանձին-առանձին կը փորձեն իրենց տեղն ամրացնել:*

*«Իշխանութեան մէջ իւրաքանչիւրն իր տեղը, քառեակը՝ առանձին եւ քառեակի անդամներից ամէն մէկն էլ իր հերթին՝ առանձին, ըստ երեւոյթին, իրենց տեղն ուզում են ամրացնել: Կարծում եմ, որ աշնանը կարող է թէժ լինել ոչ միայն քառեակի, այլ նաեւ ՕԵԿ-ի հրահրմամբ, որը միշտ վճռական գործողութիւններից առաջ առանձնանում է»,-ասաց նա:*

*Հրանոյշ Խառատեանին նման փոփոխութիւնների հնարաւորութիւնը յուշում է նաեւ ընդդիմադիր ՕԵԿ-ի ակտիւացումը. «Նախ չեմ բացառում, որ այսօրուայ ՕԵԿ-ի ակտիւացումը լրիւ ՀՀԿ-ի հետ տրամաբանական համաձայնութեան դաշտում է, եւ աշնանը իշխանութեան բաժանման դէպքում հնարաւոր է, որ ՕԵԿ-ին արդէն իսկ առաջ որպէս մղեն իշխանութեան շարունակականութեան»,-ասաց նա:*

## ՕԵԿ-ը Ներողութիւն Է Խնդրում Ժողովրդից Թոյլ Տուած Սխալների Համար

*Օրինաց Երկիր կուսակցութեան ղեկավար Արթուր Բաղդասարեանի խօսքով՝ իշխող կոալիցիայից դուրս գալուց երեք ամիս անց կուսակցութիւնը համոզուել է, որ Հայաստանում ձեւաւորուել է միահեծան, առանց իրական հակակշիռների, միակուսակցական իշխանական համակարգ:*

*«Իրական կոալիցիաների բացակայութիւնը բացառում է լայն հասարակական համախմբումը իշխանութեան շուրջը, ինչը հակասում է ժողովրդավարական երկրներում գործող կառավարման սկզբունքներին, մեծացնում է կոռուպցիան, անպատասխանատուութիւնը եւ ամենաթողութիւնը», - ասաց Բաղդասարեանը:*

*«Օրինաց երկիր»-ը որոշել է այսուհետ ակտիւ մասնակցել հանրահաւաքային պայքարին, կազմակերպել երթեր ու հրապարակային միջոցառումներ: Այդուամենայնիւ, առաջիկայ հանրահաւաքում իշխանութիւնների, մասնաւորապէս, նախագահ Սերժ Սարգսեանի հրաժարականը ՕԵԿ-ը չի պահանջելու:*

*«Սերժ Սարգսեանը ինքն է յայտարարել ակտիւ քաղաքականութիւնից հեռանալու մասին: Նախ նա, Սահմանադրութեան համաձայն, չի կարող այլեւս առաջադրուել Նախագահի պաշտօնում, ինքը յայտարարել է, որ չի յաւակնում նաեւ լինել Հայաստանի վարչապետ եւ ընդամէնը երկուեւկէս տարի յետոյ Հայաստանում ուզենք թէ չուզենք, եթէ ոչ աւելի շուտ մեկնարկելու են խորհրդարանական եւ նախագահական ընտրութիւնները: Իսկ ընդհանրապէս ես Հայաստանում չեմ բացառում գոնէ արտահերթ խորհրդարանական ընտրութիւնների հնարաւորութիւնը: Ինչո՞ւ: Որովհետեւ վերջին 23 տարում նման իրավիճակ չի եղել, երբ խորհրդարանում լինի մի կուսակցութիւն եւ հինգ կուսակցութիւնները ունենան մէկ այլ դիրքորոշում այդ մէկ կուսակցութեան նկատմամբ», - նշեց Բաղդասարեանը:*

## Ռուս Փորձագէտ. «Ղարաբաղի Հարցով Մոսկուան Չի Կարող Գործարք Կնքել ո՛չ Բաքուի, ո՛չ Երեւանի հետ

Ռուսաստանցի մեկնաբան Վադիմ Դուբնովը որեւէ արտառոց բան Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման շուրջ այսօր ընթացող զարգացումներում չի տեսնում:

Մեկնաբանի խօսքով՝ նոյնիսկ այսօր յաճախակի քննարկուող խաղաղարարների թեման նորմալ է, տեղաւորւում է հակամարտութիւնների կարգաւորման տրամաբանութեան մէջ:

«Ցանկացած կարգաւորման շուրջ գործընթացներում խաղաղարարների թեման միշտ իր ուրոյն տեղն է ունեցել, եւ այս մասին պարբերաբար խօսում են, իսկ որ այսօր թեման յայտնուել է ուշադրութեան կենտրոնում եւ աւելի յաճախ են սկսել քննարկել այն թէ՛ Մոսկուայում, թէ՛ յատկապէս Երեւանում՝ որեւէ սենսացիա չկայ, նորմալ գործընթաց է», - «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում ասաց փորձագէտը:

Ըստ Դուբնովի՝ իրականում Ուկրաինայում եւ Ուկրաինայի շուրջ ընթացող զարգացումներն իրենց ուղղակի ազդեցութիւնն ունեն ղարաբաղեան հակամարտութեան շուրջ զարգացումների եւ յատկապէս յայտարարութիւնների վրայ՝ այն պարզ պատճառով, որ հիմնական խաղացողները նոյն են:

Սակայն յայտարարութիւնների ձեւաչափով այդ ակտիւացումը կամ լարուածութիւնը հայ - ադրբեջանական սահմանին, ռուսաստանցի մեկնաբանի կարծիքով, ամենեւին էլ չի նշանակում, որ վաղը կը սկսուեն լայնածաւալ ռազմական գործողութիւններ եւ այնտեղ կը տեղակայուեն խաղաղարար ուժեր: Ըստ փորձագէտի, խօսք չկայ նաեւ խնդրի շուտափոյթ կարգաւորման մասին:

«Ես չեմ կարող պատկերացնել, որ Մոսկուան պայմանաւորուի Բաքուի հետ՝ «միացէք Եւրասիական Միութեանը, եւ մենք ձեզ կը վերադարձնենք մի քանի շրջաններ» տրամաբանութեամբ: Մոսկուան չի կարող նման գործարք կնքել Բաքուի հետ այն պարզ պատճառով, որ չունի հնարաւորութիւն այդ շրջանները վերադարձնելու, աւելին՝ ես չեմ հաւատում նաեւ, որ Մոսկուան ու Երեւանը կարող են նման հարցի շուրջ պայմանաւորուել: Հնարաւոր չէ պատկերացնել, որ Պուտինը համոզի Սարգսեանին գնալ նման քայլի, պարզապէս բացառւում է», - ընդգծեց փորձագէտը:



Ռուսաստանցի մեկնաբան ՎադիմԴուբնով

Ինչ վերաբերում է Եւրասիական Միութեանը Հայաստանի անդամակցութեան հարցին՝ Դուբնովն ասում է, որ Մոսկուան, Աստանան եւ Մինսկը դեռ չեն գտել այն բանաձեւը, որի շրջանակներում կը տեղաւորուի Հայաստանի անդամակցութիւնը:

Ռուսաստանցի մեկնաբանի կարծիքով՝ Եւրասիական Միութեանը Հայաստանի անդամակցութեան ձգձգման իրական պատճառը ոչ թէ Ադրբեջանն է, այլ Բելառուսի եւ Ղազախստանի նախագահներ Ալեքսանդր Լուկաշենկոյի եւ Նուրսուլթան Նազարբաեւի մտավախութիւնը, որ եթէ Հայաստանն անդամակցի Եւրասիական Միութեանը, տարաձայնութիւններ առաջացնող բոլոր հարցերում Հայաստանը միշտ Մոսկուայի շահերին կողմ կը քուէարկի՝ սա, ըստ Դուբնովի, ընդունելի չէ ոչ Աստանայի, ոչ էլ Մինսկի համար:

Իսկ որպէս Եւրասիական Միութեանը Հայաստանի անդամակցութեան յետաձգման փոխհատուցում՝ Մոսկուան Երեւանի հետ կարող է կնքել մի շարք համաձայնագրեր, օրինակ՝ միգրացիոն դաշտում, ցոյց տալու համար, որ ինտեգրացիոն գործընթացներն այդուամենայնիւ առաջ են շարժւում:

Իրականում Մոսկուային Երեւանից միայն մի բան էր պէտք, որ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանը Սեպտեմբերի 3-ին յայտարարի Եւրամիութեան հետ ասոցացման մասին պայմանագրից հրաժարուելու մասին: Իսկ Մաքսային կամ Եւրասիական Միութեանը Հայաստանի անդամակցութեան հարցն արդէն երկրորդական էր այն ժամանակ եւ, ըստ էութեան, երկրորդական է նաեւ այսօր Մոսկուայի համար, չեշտեց Վադիմ Դուբնովը:

## ՀՀ Պաշտպանութեան Նախարար. «Ոչ Ոք Մեզ Չի Կարող Ստիպել Միակողմանի Զիջումների»




ՀՀ պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեան սահմանային կէտերէն մէկուն տուածայցի ընթացքին

Ադրբեջանական կողմի նախաձեռնած հրադադարի ռեժիմի խախտումների նպատակը լարուածութիւն ստեղծելն ու բանակցային գործընթացի առաջխաղացմանը խոչընդոտելն է: Յուլիսի 9-ին կայացած մամուլի ասուլիսում նման կարծիք յայտնեց ՀՀ պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեանը:

«Ընդ որում, հակառակորդը չի հասկանում, որ մեզ ստիպելն անհնար է: Մեզ պատերազմ պարտադրեցին, որում մենք յաջողութեան հասանք: Հիմա մեզ զինուելու մրցաւազք են պարտադրում: Սակայն Ադրբեջանի ղեկավարութիւնը պէտք է յիշի, որ միայն վստահութեան մթնոլորտի ստեղծմամբ հնարաւոր կը լինի առաջընթաց արձանագրել: Իսկ վստահութեան տարրերից մէկը սահմանից դիպուկահարներին հեռացնելն է, դիւերսիաներից հրաժարուելը, անհրաժեշտութեան դէպքում միջազգային հետաքննութիւն անցկացնելը»,- նշեց նախարարը: Խօսելով սահմանային վերջին իրադարձութիւնների մասին՝ Սէյրան Օհանեանը նշեց, որ ադրբեջանական կողմից լարուածութիւն ստեղծելու փորձ է արուել, սակայն պատասխան գործողութիւնների շնորհիւ իրավիճակը վերադարձել է բնականոն հուն:

Նախարարի խօսքով, ադրբեջանական կողմի մօտեցումը, որը հրաժարւում է կառուցողական երկխօսութիւնից, ոչ սթափ մտածողութեան օրինակ է: «Վստահութեան սահմանները գտնելը չափազանց կարեւոր է, քանի որ առանց դրա անհնար է յաջողութեան հասնել բանակցային գործընթացում: Սակայն հարկաւոր է յիշել, որ բանակցութիւններում յաջողութիւնը կապուած է փոխզիջումների գնալու կողմերի պատրաստակամութիւնից, եւ զիջումները պէտք է փոխադարձ լինեն: Մեզ ինչ-որ բան պարտադրել չի յաջողուի ոչ ոքի»,- ընդգծեց Սէյրան Օհանեանը:

Միջազգային կազմակերպութիւնները պէտք է մտածեն Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրաւունքի ճանաչման մասին: Այդ իրաւունքից ղարաբաղցիներն օգտուել են՝ ինքնորոշուելով տարածքներում, որտեղ բնակուել են իրենց նախնիները, ասաց Սէյրան Օհանեանը մամուլի ասուլիսի ժամանակ:

Պատասխանելով ամերիկեան կողմի յաճախակի յայտարարութիւնների վերաբերեալ հարցին, այն մասին, որ հնարաւոր է Ադրբեջանին 7 ազատագրուած տարածքներից 6-ի վերադարձը, Սէյրան Օհանեանը նշել է, որ հարցն այն մասին, թէ ինչ է նշանակում փոխզիջում, երկխօսութեան եղանակով է լուծւում: Իսկ միջնորդները դեռ պէտք է մտածեն Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրաւունքի ճանաչման մասին, ընդգծել է Օհանեանը:

## «Մեծ Եղեռնի Հարիւրամեակն Աւարտի Սահմանագիծ Չէ

Շարունակուածէջ 14-էն

թացքին ըսած է որ, Հայաստանի մասին դուրսը հազար ու մէկ պատմութիւն կը պատմեն. մէկ մասը՝ ճիշդ, մէկ մասը՝ չափազանցուած, մէկ մասը՝ լաւ, մէկ մասը՝ վատ: «Բայց աւելի լաւ է մարդ մէկ անգամ տեսնի, քան հարիւր անգամ լսի: Ձեւաւորէ՛ք ձեր սեփական տպաւորութիւնը եւ սեփական պատկերացումը իրական եւ ոչ առասպելական հայրենիքի մասին: Համոզուած եղէք, որ իրական Հայաստանը՝ Արցախով հանդերձ, աւելի գեղեցիկ ու հարազատ է, քան կարելի է երեւակայել»,- ըսած է Սարգսեան եւ աւելցուցած,- «Եթէ չէք կարող ապրել Հայաստանում, ապա կարող էք ապրել Հայաստանով: Ապրել նրա յաջողութիւններով, հպարտանալ ձեռքբերումներով, կիսել նրա ցաւերն ու բեռը: Մի սփիւռքահայ բարեկամի մտահոգել էր Երեւանում լսած մի արտայայտութիւն. «Հայաստանակենտրոն քաղաքականութիւն»: Դրանում նա տեսնում էր սփիւռքի կառոյցների թերագնահատման եւ անտեսման վտանգ».- ըսած է Սարգսեան:

Ան վստահեցուցած է, որ «Հայաստանակենտրոն քաղաքականութիւն» երբեք ալ չի նշանակեր սփիւռքի կառոյցներու թերագնահատում, անտեսում կամ ենթակայութիւն: «Դա բացառուած է: «Հայաստանակենտրոն քաղաքականութիւն» նշանակում է պետական քաղաքականութիւն: Հայկական պետութեան վարած ներքին եւ արտաքին քաղաքականութիւն, որտեղ սփիւռքի կառոյցները՝ սկաուտներից մինչեւ քաղաքական կուսակցութիւններ եւ հոգեւոր կենտրոններ ունեն իրենց անգնահատելի եւ անփոխարինելի դերը: Մեր գլխաւոր նպատակակէտը, մեր ողջ գործունէութեան թիրախի կենտրոնը հայրենիքն է՝ իրական Հայաստանը: Ես եկել եմ ձեզ ասելու, որ դուք մասն էք այդ իրական ու կայացած Հայաստանի Հանրապետութեան»,- արժանթինահայերուն ըսած է նախագահ Սերժ Սարգսեան:


ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ

ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104

ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝

ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680

## ՍՏԱՄՊՈՒԼԻ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԵՐԺԱԾ Է ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻՆ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼ ՍԱՆԱՍԱՐԵԱՆ ՏՈՒՆԸ («ԽԱՆ»)



*Կ. Պոլսոյ հայոց պատրիարքարանին կողմէ Սանասարեան տուն անունով շէնքի, որ ծանօթ է նաեւ «Խան» անունով, վերադարձման համար ներկայացուած դատական հայցը չէ բաւարարուած դատարանին կողմէ եւ ամբողջովին մերժուած է:*

*Ստամպուլի առաջին ատեանի դատարանին մէջ 2011 թուականէն շարունակուող դատավարութիւնը աւարտած է պատրիարքարանին համար անցանկալի ելքով:*

*Պատրիարքարանին շահերը ներկայացնող փաստաբան Ալի Էլպէյօղլուն «Հիւրրիյեթ»ի թղթակիցին յայտնած է, որ իրենք շարունակելու են պայքարիլ Սանասարեան տունը պատրիարքարանին վերադարձնելու համար:*

*Էլպէյօղլուն դժգոհած է, որ դատարանը, անտեսելով բոլոր հիմնաւոր փաստերը, անհասկնալիօրէն մերժման վճիռ կայացուցած է: Ան տեղեկացուցած է նաեւ, որ իրենք օգտուելու են բողոքարկման իրաւունքէն եւ հարկ եղած դէպքին դատը տեղափոխելու են անգամ Մարդու իրաւունքներու եւրոպական դատարան (ՄԻԵԴ)՝ փորձելով մինչեւ վերջ հետամուտ ըլլալ արդարադատութեանը:*

*Սանասարեան տունը կառուցուած է 1895 թուականին Մկրտիչ աղա Սանասարեանի պատուէրով եւ ճարտարապետ Յովսէփ Անձնաւուրի կողմէ: Պատմական այդ շէնքը հայոց պատրիարքարանէն խլուած է 1935 թուականին եւ շահագործուած որպէս Ստամպուլի անվտանգութեան վարչութեան շէնք: Յետագային այնտեղ հաստատուած է տնտեսական դատարանը, իսկ այժմ ան պարապ է: Հիմնադրամներու գլխաւոր վարչութիւնը անշարժ գոյքերու վարչութեան մէջ Սանասարեան տուն անունով յայտնի անշարժ գոյքը ապօրինի կերպով արձանագրած է որպէս սեփականութիւն: Դատարանին մէջ երկար ժամանակ գոյքապատկանելութեան հարցը վիճարկման մէջ եղած Սանասարեան տունն այժմ կը գտնուի հիմնադրամներու գլխաւոր վարչութեան ենթակայութեան տակ: Սանասարեաններու շէնքը նշեալ վարչութեան կողմէ 2013-ի Յուլիսի 18-ին վարձակալութեան յանձնելու նպատակով հանուած է աճուրդի:*

*Ընդդիմադիր Ժողովրդահանրապետական կուսակցութեան փոխնախագահ Սեզգին Թանրըքուլուն խորհրդարանին մէջ գրաւոր հարցում ըրած է Թուրքիոյ մշակոյթի եւ զբօսաշրջութեան նախարար Ամեր Ջելիքին, թէ արդեօք իրականութեան կը համապատասխանեն Սանասարեաններու տունը պանդոկի վերածելու մասին լուրերը: «Մամուլին մէջ տեղեկութիւններ կան թէ, հայերուն պատկանող, բայց Հիմնադրամներու գլխաւոր վարչութեան ձեռքը գտնուող Սանասարեաններու տունը 20 տարի ժամկէտով վարձու տալու ցանկութիւն կայ: Ինչպէ՞ս կը գնահատէք Սանասարեան տունը վարձու տալու համար յայտարարուած աճուրդը, արդեօ՞ք անոր ետեւը ձեր որոշումը կամ հրահանգը կայ: Պատմական նշանակութեան շէնքը առեւտուրի նպատակով օգտագործելու հարցը ի՞նչ բարոյական չափորոշիչներով կը գնահատէք եւ արդեօք պատահականութի՞ւն է, որ 2015-ին ընդառաջ, 100-ամեակի նախաշեմին նման քայլ կը կատարուի հայերուն ունեցուածքին դէմ», հարցուցած է ընդդիմադիր պատգամաւորը:*


ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ

---

**Yes, I wish to subscribe to Massis Weekly**
**Enclosed a check for (one year)**
*** $50,00 * $100,00 (first class) for USA**
**$ 100,00 (Air Mail) for Canada.**
**$ 250,00 (Air Mail) Overseas.**
**Name:** ------------------------------------------
**Address:** ----------------------------------------
**City:** --------- **State:**--------- **Zip Code:**------
**Country:** -------------
**Tel :**------------------------ **Fax :** --------------------------


## ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

## ՊԱՂԵՍՏԻՆ
## ԿԱԶԱ ԴԱՐՁԵԱԼ ԻՍՐԱՅԵԼԵԱՆ ԿՐԱԿՆԵՐՈՒ ՄԷՋ



*Իսրայէլի ինքնապաշտպանութեան ուժերը յայտարարեցին ՀԱՄԱՍի զինեալներուն դէմ ռազմական գործողութիւն սկսելու մասին, պատճառաբանելով Իսրայէլի քաղաքացիներու անվտանգութեան ապահովումը, որոնք «ամէն օր ահաբեկչութեան կ'ենթարկուին ՀԱՄԱՍ-ի զինեալներուն կողմէ»:*

*«ՀԱՄԱՍ լարուած միջավայրը ընտրեց, անոնք շատ բարձրգին պիտի վճարեն»,-սպառնաց Իսրայէլի վարչապետ Պենիամին Նեթանիահուն:*

*Իր կարգին, Պաղեստինեան իշխանութեան նախագահ Մահմուտ Ապպաս բոլոր քաղաքացիներու, այդ շարքին՝ պաղեստինցիներու եւ իսրայէլցիներու իրաւունքները յարգելը կոչած է տարածաշրջանի կայուն խաղաղութեան գրաւական: Ապպասի խօսքով, իսրայէլեան ներկայ կառավարութիւնը կը նախընտրէ խաղաղութեան գործ-ընթացը օգտագործել որպէս «վարագոյր՝ գաղութականացման եւ ճնշման քաղաքականութիւնը շարունակելու համար: Խաղա-ղութիւն եւ ազատութիւն սիրող ժողովուրդի անկախութեան ձգտումը կարելի չէ վերացնել ուժային ճամբով»,- ըսած է Ապպաս, կոչ ուղղելով միջազգային կազմակերպութիւններուն՝ պաշտպանել պաղեստինեան բնակչութիւնը, իսկ Իսրայէլին կոչ ուղղած է անմիջապէս դադրեցնել յարձակումները, նկատել տալով, որ եթէ իրավիճակը շարունակէ մագլցում արձանագրել ապա ամբողջ շրջանը կ'ուղղուի աղիտալի պատերազմի:*

*****

*Պաղեստինցի պատանիի մը սպանութիւնն ու յետոյ անոր մարմնի հրկիզումը՝ խոր զայրոյթ եւ ընդվզում պատճառեց ոչ միայն արաբական եւ միջազգային շրջանակներու մօտ, այլ նոյն իսկ Իսրայէլի չափաւորական շրջանակներու մէջ: Այս առթիւ յետաքննական աշխատանքներու իբր արդիւնք 3 հրեաներ ձերբակալուած են որպէս կասկածելիներ: Երեքն ալ Երուսաղէմի բնակիչ են եւ կ'ամբաստանուին 16 ամեայ Մուհամմատ Ապու Խուտոյր կոչուող պատանին սպաննելու յանցանքով: Այս մէկը կը նկատուի վրիժառու արարք մը, նախորդ շաբթուան ընթացքին ահաբեկուած եւ ապա սպաննուած իսրայէլացի 3 պատանիներուն հարցին հետ առնչուող:*

## ԼԻԲԱՆԱՆ
## ԱՄՍԱԿԱՆՆԵՐՈՒ ՎՃԱՐՄԱՆ ՈՒՇԱՑՈՒՄ

*Լիբանանի կառավարական պաշտօնեաներն ու ելեկտրական ընկերութեան գործատները տակաւին չեն ստացած իրենց ամսականներու վճարումները: Այս առթիւ տնտեսութեան նախարարը հաւաստիացուցած է թէ դրամը պատրաստ է եւ պետութեան պիւտճէն կայուն է, սակայն կը սպասուի խորհրդարանի վաւերացումին:*

*Աշխատաւորական Սենտիքաներու համակարգող խորհուրդի ներկայացուցիչ Հաննա Ղարիպ, մամլոյ ասուլիսով մը սպառնաց, որ իրենք չեն պատրաստուիր ամավերջի քննութիւնները սրբագրել այնքան ատեն, որ խորհրդարանին մօտ գտնուող ամսականներու յաւելման եւ աստիճաններու բարձրացման օրինագիծը չէ վաւերացուած: Ղարիպ այս գծով դատապարտեց երկրի քաղաքական բոլոր կողմերը հաւաստիացնելով, թէ անոնք կը փորձեն համայնաքային շահերու պատրուակով հարուածել սենտիքայական իրենց շարժումը, վստահեցնելով, որ իրենց սկսած շարժումը հեռու է համայնքային նեղ հաշիւներէն եւ այսօրուան դրութեամբ Լիբանանի բոլոր աշխատաւորներն ու ուսուցիչները միաւորուած են ազգային հիմունքներ ունեցող շարժումին եւ պահանջատիրական երթին շուրջ: Հաննա Ղարիպ կոչ ուղղեց նաեւ երկրի բոլոր պաշտօնեաներուն գործադուլ կայացնել եւ մասնակցիլ բողոքի մեծ հաւաքի որ տեղի պիտի ունենայ Պէյրութի կրթութեան նախարարութեան շէնքին առջեւ:*

## ՍՈՒՐԻԱ
## ՀԱԼԷՊԻ ՀԱՐՑԸ ԿԸ ՔՆՆԱՐԿՈՒԻ ԻՍԹԱՆՊՈՒԼԻ ՄԷՋ

*Այս օրերուն Իսթանպուլի մէջ իրենց հերթական հանդիպումը կ'ունենան Սուրիոյ ընդդիմադիր ույժերու ներկայացուցիչները: Այս առթիւ օրակարգի վրայ են զանազան ընթացիկ հարցեր: Առանձին քննարկումի նիւթ պիտի ծառայեն Հալէպի վերջին ծանր յարձակումները: Ընդհանուրի ցանկութեան համաձայն տեղի պիտի ունենայ նաեւ ընդդիմադրութեան նոր ղեկավարի մը ընտրութիւնը, որուն համար թեկնածուներ կը նկատուին Սալէմ Էլ Մասլաք, Նասրի Էլ Հարիրի եւ Մուսաթաք Էլ Նարպիէ:*

# «ՏԱ'ԷՇ» ԿԱՄ ՄՈԼԵՌԱՆԴ ԻՍԼԱՄ ԽՄԲԱՒՈՐՈՒՄԸ

**ՄԵԹՐ ՊԱՐԳԵՒ ԴԱՒԻԹԵԱՆ**

Միջին Արեւելքի մէջ վերջերս շատ կը խօսուի «ՏԱ'ԷՇ» կոչուող մոլեռանդ իսլամ շարժումի մը մասին որ կ'օգտագործէ Սիւննի համայնքին պատկանող ժողովուրդներուն գայրոյթը ընդդէմ Շի'ա համայնքին պատկանող ուժերուն եւ պետական կառոյցներուն, եւ Սիւննիներու խորտակուած զգացումները օգտագործելով իր ազդեցութիւնը տարածած է Սիւննիաբնակ քաղաքներու եւ շրջաններու մէջ:

ՏԱ'ԷՇ բառը որ կը ներկայացնէ արաբերէնով սկզբնատառերը (Ալ-Տաուլա Ալ-Իսլամիա ֆի Ալ-Իրաք ուա Ալ-Շամ զորս կը նշանակէ հայերէնով Իսլամական Պետութիւնը Իրաքի եւ Դամասկոսի մէջ), կը գործածուի որպէս շարժում մը որ կը միտի իր «ԼԱ-ԻԼԱՀԱ-ԻԼԼԱ- ԼԱՀ» սեւագոյն դրօշին տակ համախմբելու Իրաքի եւ Սուրիոյ Սիւննի ժողովուրդները որպէս մօտակայ նպատակ, եւ մնացեալ արաբական աշխարհը որպէս հեռաւոր նպատակ: Ահա թէ ինչու օրեր առաջ անոնք փոխեցին ՏԱ'ԷՇ անունը եւ ինքզինքնին կոչեցին Իսլամական Խալիֆէութիւն (Ալ-Խիլաֆա Ալ-Իսլամիա):

Բայց ինչպէս եղաւ որ այս շարժումը կամ խմբաւորումը յանկարծ իր տիրապետութեան տակ առաւ մեծ քաղաքներ ու շրջաններ Սուրիոյ եւ Իրաքի մէջ, ուր պետական բանակային եւ յարակից ուժեր անկարող դարձան կասեցնել անոր յառաջխաղացումը:

Պատճառը անշուշտ կը կայանայ, նախ եւ առաջ, ինքզինքնին «անիրաւուած» կոչող Սիւննի զանգուածներուն կողմէ անոնց տրուած կամ ընծայուած նեցուկին եւ թիկունքին, եւ որոնք թէ Սուրիոյ մէջ եւ թէ ալ Իրաքի մէջ միլիոններ կը հաշուեն:

Պատճառը գուցէ կը կայանայ նաեւ աններելի յանցանքին մէջ բոլոր անոնց որոնց շահերը ընթացք տուին որ հրէշ մանուկը՝ ՏԱ'ԷՇը մեծնայ եւ վտանգաւոր դառնայ:

Շահերը Սուրիոյ Ասատին որ Սուրիացի ժողովուրդին բռնատէրի դէմ արդար պորթկումին հագցնել ուզեց մոլեռանդ իսլամականներու շապիկը, եւ աշխարհին ցոյց տալ ուզեց որ իր դէմ եղած ըմբոստութիւնը կամ յեղափոխութիւնը դուրսէն ներածուած ահաբեկիչներու գործին արդիւնքն է: Եւ այդպէսով, գոհունակութեամբ դիտեց ՏԱ'ԷՇի ահաբեկչութիւնը Սուրիոյ ընդդիմադիր ուժերու դէմ՝ յօգուտ իր իշխանութեան:

Շահերը Իսրայէլի եւ անոր ետին կանգնող Ամերիկայի եւ Արեւմուտքին որ թոյլ տուաւ որ Սուրիան կործանի եւ անոր ժողովուրդը տեղահանուի որպէսզի Արաբական աշխարհի ազգային հպարտ ոգին մարմնացնող կամ ներկայացնող վերջին երկիրը կրօնապաշտներով լեցուի եւ ապա ծունկի գայ եւ խորտակուի:

Շահերը Ռուսիոյ եւ Չինաստանի որ Ամերիկայի դէմ կանգնելու եւ իրենց մեծ ու հսկայ ըլլալը փաստելու մոլուցքէն տարուած արգիլեցին որ միջազգային ընտանիքը օգնութեան ձեռք տար Սուրիացիին որ ան կէս դար ճաշակած իր բռնատիրութենէն ազատ կացուցուէր:

Եւ վերջապէս, շահերը Իրանի, Իրաքի եւ Լիբանանի Հըզպալլային որոնք համայնքային եղբայրակցութենէ մղուած թոյլ տուին որ անցեալին պատկանող իշխանաձեւի մը անկենդան կեանքը երկարաձգուի. եւ շահերը անոնց դէմ կանգնող Սէուտի Արապիային եւ անոր շուրջ դարձող արաբ արբանեակներուն որոնք իրենց սեփական ամօթալի վիճակը չբարելաւած եւ ապակեայ տան մէջ նստած ելան քարկոծելու եւ բարենորոգումի դաս տալու Սուրիոյ:

Ցաւալի եզրակացութիւններ են ասոնք որոնք կը փորձեն բացատրել թէ ինչպէս ՏԱ'ԷՇ կոչուող հրէշը մեծցաւ եւ դարձաւ պատուհաս Միջին Արեւելքի ժողովուրդներուն, զանոնք վարակելով կրօնապաշտութեան կամ համայնքապաշտութեան ախտով մը որ տակաւին աւերներ պիտի գործէ այդ ժողովուրդներու «հիւանդ» մարմնին մէջ:

Ցաւալի է նաեւ որ Եգիպտոսի ժողովրդասէր նախագահ՝ Կամալ Ապտըլնասէրի արաբ ազգայնականութեան դրօշին տակ հաւաքուող արաբ աշխարհը, ուր իսլամն ու քրիստոնեան (եւ անշուշտ հայն ալ մէջը) կրօնքը մոռցած եւ ազգային ոգիով մղուած կ'ապրէր եղբայրաբար եւ առանց վախի (ի բացառութիւն կարգ մը արեւմտասէր փոքրամասնութիւններու), դարձած է այսօր Րէկընեան եւ Պուշեան Ամերիկայի ցանած կրօնափուշերով արիւն թափող գոհն ու նահատակը, եւ անոնց կողմէ շինուած կրօնամոլութեան պարանով արաբ ազգայնականութիւնն խեղդող դահիճներու արտադրիչը:

Եւ ամենէն ցաւալին այն է որ հակադիր կողմերը իրենց մօտակայ եւ հեռակայ թիկունք կանգնող ուժերուն յենած վճռած ըլլալ կը թուին դէպի անորոշութեան անել քարայրին մէջ մտցնել իրենց երկիրները, որուն մթութեան մէջ դժբախտաբար պիտի խարխափին հայուն բարեկամ բարի եւ խաղաղասէր արաբները եւ իրենց հետ միասին սփիւռքահայ մեր ժողովուրդի ամենէն աշխոյժ եւ հայաբոյր գաղթօճախները:




# ԳՈՐԾԻ ԺԱՄՆ Է

**ՆՇԱՆ ՅՈՎՍԷՓԵԱՆ**

Ամբողջ աշխարհը կը զարմանայ հայ ժողովուրդի յարութեամբ: Երբեմն, նոյնի'սկ մենք կը զարմանանք, թէ ինչպէ՞ս սուրիական անապատներէն ազատուած խլեակները, իրենց արեան կանչին անսալով, Աստուա՛ծ կանչելով, դիմացան, ապրեցան, բազմացան, ընդհատուած հայ մշակոյթը տարիներու ընթացքին վերակենդանացուցին, հինը նորին կապեցին, դպրոցներով, եկեղեցիներով, ակումբներով ու մշակոյթի տուներով, ազգին Յարութիւնը ապահովեցին: Փառք բոլոր անոնց, որ մասնակից եղան այս բոլորին:

Սակայն, մեր կորուստներուն ցաւը մեղմելու շօշափելի միջոցներ փնտռելու փոխարէն, նախընտրուեցաւ օտարներուն դռները թակել ու անոնց ողորմութեանը սպասել: Ի՞նչ տուին մեզի. ի՞նչ ստացանք: Խոստումնե՜ր... ի դիմաց անհաշուելի գումարներու: 2014, Ապրիլ 24-ն ալ եկաւ ու անցաւ: Բաղդատմամբ անցած Ապրիլ 24-երուն, փոխանակ առաջընթաց արձանագրելու, կորուստի, տեղատուութեան ենթարկուած գտանք մենք զմեզ: Յայտնօրէն Թուրքը, կանխամտածուած նպատակով, Օսմանեան կայսրութեան օրերուն գծուած յստակ ծրագիրներով, Ցեղասպանութեան հարիւրերորդ տարելիցին լրումէն առաջ, որոշած է այս անգամ ուրիշներու ձեռքով առնուազն հարիւր տարի եւս ՀԱՅ ԴԱՏԻ գլխացաւէն ձերբազատիլ, մեզի ու համայն աշխարհին ցոյց տալով իր ոյժը եւ շեշտելով մեր տկարութիւնը, աւելի ճիշտ՝ մեր անզօրութիւնը, լկտիօրէն շարունակելով հրեշտակի անմեղ դիմակով ծպտուած, կրկնել նոյն ուրացումները, նոր առաջարկներով փորձել ծուղակը ձգել մեզ, միեւնոյն ատեն Թուրք պետութեան ամբողջ կարողականութիւնը օգտագործելով, նախ եւ առաջ ջլատել Թուրքիոյ սահմանամերձ հայկական գաղութները, անյպէ'ս հարուածել զանոնք, որ վրան նստելու խսի'ր իսկ չունենան ու ինքզինքնին ազատելու համար ցրուին, հեռանան. այնքա՛ն հեռանան, որ անկարելի ըլլայ անոնց Միջին Արեւելք վերադարձը, որ նոյն ատեն հեռացած պիտի ըլլան Թուրքիայէն իրենց իրաւունքները պահանջելու կարելիութիւններէն: Մեծ պետութիւնները,որոնց պարտականութիւնն է հսկել եւ արգիլել նման ընթացք, ինչպէս միշտ, այսօր ալ լո՜ւռ,կը հետեւին թաւալող դէպքերուն:

Ընդունինք կամ ոչ, այս է կացութիւնը: Դժբախտաբար, մենք աշխատեր ենք նախ՝ բարեկեցիկ կեանք մը ապահովել, ապա՝ որքան կարելի է, բարելաւել մեր նիւթական վիճակը:

Կրթութիւն, դաստիարակութիւն, նախակրթարան, համալսարան, արուեստ ու արհեստ, մտքի կամ ձեռքի աշխատանք,բոլորն ալ ծառայած են ու տակաւին այսօր կը ծառայեն հանգիստ կեանք մը ապահովելու նպատակին: Անհատական գետնի վրայ ասիկա ընդունելի է եւ պէտք է դրուատել: Սակայն ընկերային, միութենական, կազմակերպչական, Ազգային Հաստատութիւն-Կազմակերպութիւններու եւ Ազգային Կուսակցութիւններու պարագային այս հասկացողութիւնը ընդունելի չէ'. մանաւանդ անո՛նց, որոնք կը հաւակնին ԱՌԱՋՆՈՐԴԻ դեր խաղալ, ըլլան՝ կրօնական, կամ՝ աշխարհական:

Շուրջ երեք տարիէ ի վեր, արտաքին ազդակներ, Սուրիան վերածած են "ներքին" կռիւներու թատերաբեմի: Սուրիահայ մեր եղբայրներն ու քոյրերը, տեղացի իրենց արաբ եղբայրներուն ու քոյրերուն հետ դժոխային կեանք ապրելով հանդերձ, տոկացին: Սակայն ներկայիս, հիմա'......

Մարտ, 21, 2014-ին, լոյսը չբացուած, Թուրքիոյ իշխանութիւններու գիտութեամբ, թրքական բանակի թնդանօթներու տարափով պաշտպանուած, թրքական օդուժի օդանաւերու հովանիին տակ եւ թուրք զինուորներու առաջնորդութեամբ, հազարաւոր վարձկաններ, սուրիական «ազատ բանակ» անունին տակ, խուժեցին Քեսապ, Հայկական Կիլիկիոյ Թագաւորութենէն մնացած հայերով բնակուած միակ անկիւնը, աչքի փուշը թուրք պետութեան: Քեսապցիք, իրենց վրայի հագուստներով կամ գիշերանոցով, ծովու եւ ցամաքի ճամբով , փախուստ տուին դէպի Լաթաքիա, ուր կը մնայ անոնց մեծամասնութիւնը մինչեւ այսօր, թշուառ ու անտիրական վիճակի մէջ, օդէն կախուած, սպասելով իրենց տրուած խոստումին, թէ շուտով ետ, Քեսապ պիտի դառնան: Քանի մը օր է, գրաւողները հեռացած են դէպի թրքական սահմանգլուխին բարձրունքները: Կրնան որեւէ վայրկեան ետ գալ, կամ բարձրունքներէն ռմբակոծել ժողովուրդը: Քեսապը ապահով չէ'. Քեսապը չէ' պաշտպանուած:

Տակաւին Քեսապը չազատագրուած, յայտնօրէն դարձեալ Թուրքիոյ դրդումով ու կազմակերպութեամբ, այս անգամ թիրախը դարձաւ Հալէպը, մանաւանդ Հալէպի հայահոծ Նոր Գիւղի շրջանը: Կրկնութիւնը Քեսապի դէպքին: Թիրախը՝ հայ բնակչութիւնը, որ այս անգամ, դժբախտաբար, ունեցաւ զոհեր ու վիրաւորներ: Հալէպահայերն ալ փախան դէպի Լաթաքիա, գացին միանալու քեսապահայերուն, եւ նախապէս արդէն հոն ճողոպրած Ղնէմիէէն, Եագուպիէէն եւ այլ շրջաններէ եկած հայերուն: Հալէպը սուրիահայութեան ողնայարն է:

Կարծէք մասնաւոր ծրագիր մը կայ Լաթաքիա հաւաքելու բոլոր սուրիահայերը: Արդեօ՞ք կարգը Լաթաքիոյ պիտի գայ: Իսկ յետո՞յ ....: Վստա'հ ըլլանք, եթէ այս անգամ ալ Թուրքը չյաջողի, դարձեա'լ պիտի սպասէ առիթին:

Ո՞վ տէր կը կանգնի այս ժողովուրդին: Ի՞նչ ձեւով մենք պիտի պատասխանենք մեր ոսոխին: Տակաւին ունինք միամիտներ, կամ՝ փառասէրներ, կամ ՝ գրպանասէրներ, որոնք կը պնդեն, թէ այսօր Թուրքը փոխուած է եւ կարելի է հասկացողութեան գալ անոր հետ:

Աշխարհի չորս ծագերէն, սուրիահայութեան արհաւիրքը մեղմելու համար, հայկական բոլոր գաղութներէն նիւթական ու բարոյական օգնութիւն հասաւ ու տակաւին կը շարունակուի հասնիլ: Ստորագրեալս իբրեւ սուրիահայ ե'ւ քեսապցի, ես ինծի իրաւունք կու տամ բոլոր սուրիահայերուն կողմէ ի սրտէ շնորհակալութիւն յայտնել բոլորին:

Սուրիահայերուն կացութիւնը մէկ օրուայ, մէկ ամսուայ , եւ ո՜վ

Շար.ը էջ 18

# ԹԱՐՄ ՅՈԴԱԿՈՅՏԵՐՈՒՆ ԱՌՋԵՒ
# 100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ ՋՈՒՐԱԲՈՎ ՄԱՄՈՒԼՆ ՈՒ ՀՆՉԱԿԵԱՆ ՔՍԱՆ ԿԱԽԱՂԱՆՆԵՐԸ

*ԴՈԿՏ. ԱԲԷԼ ՔՀՆՑ. ՄԱՆՈՒԿԵԱՆ*
*(Շարունակուածնախորդթիւէն)*

## ՅՕԴՈՒԱԾԻՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

*Լրագրական արուեստի փայլուն նմոյշ մըն է Արշակ Ջուրաբովի Հնչակեան Քսան կախաղաններուն ձօնուած յօդուածը՝ Օսմ. Թուրքիոյ մէջ իշխող քաղաքական իրավիճակի խորաթափանց վերլուծումով: Կ. Պոլսոյ մէջ իրագործուած ոճիրը հեղինակը նախ կը վերագրէ սոցիալդեմոկրատներու դէմ սանձազերծուած այն հալածանքին, որ սկիզբ կ՛առնէր Ռուսաստանի մէջ ու կը տարածուէր հասնելով մինչեւ Վոսփորի ափը: Արդարեւ, Պոլսոյ տխուր իրադարձութենէն ընդամէնը քանի մը ամիս առաջ, Ռուսաստանի մէջ դատապարտուած էին Դումայի անդամները[80]: Այնպէս կը թուի, որ Պետական Բ. Դումայի 1907 թուականի արձակումէն վերջն ալ ցարական իշխանութիւնը հալածանքի ենթարկած էր Ռուսաստանի ընկերվարականները, եւ Դումայի անդամ անոնց պատգամաւորները դատապարտած՝ տակաւին մինչեւ յօդուածի գրութեան 1915 թուականը[81]: Այս իրադարձութեան զուգահեռ, համայն ուղղափառ (սիւննի) մահմետականներու խալիֆը[82] մինչեւ երկինք աղաղակող բարբարոսութիւն մը կը գործէր իր երկրի ընկերվարականներուն դէմ: Թրքական կառավարութեան հրապարակած հաղորդագրութենէն կարելի չէ լրացուցիչ մանրամասնութիւններ քաղել ռազմական դատարանին կողմէ Քսաններուն կախաղանի մահուան դատապարտելու վերաբերեալ: Անոնց հասցէին ծանրակշիռ ամբաստանութիւնը կը հիմնուի նոյնքան անհիմն մեղադրանքներու վրայ, թէ անոնք «փորձած են ստեղծել անկախ եւ ինքնավար Հայաստան մը»[83], եւ այս նպատակը իրագործելու համար անոնք դիմած են եւրոպական տէրութիւններու միջամտութեան՝ արտասահմանի մէջ հրապարակելով «Ըմբոստութեան կոչեր եւ գրութիւններ»[84]: Սուլթան Ապտիւլ Համիտ Բ.ի վարչակարգին դէմ 1908ի յեղաշրջումը իրականացնելու պայքարին մէջ Հնչակեանները Երիտթուրքերուն հետ եղած են «նախկին դաշնակիցներ», որոնց դէմ ահա դաւաճանական վերաբերմունք կը ցուցաբերէ իշխանութեան տիրացած նոյն Երիտթուրքերու կառավարութիւնը:*

### 1. Հնչակեան Կուսակցութեան կազմաւորումը

*Յօդուածը Հնչակեան Կուսակցութեան կազմաւորման տարեթիւ կը նկատէ 1885 թուականը, որ վրիպակ մը ըլլալու է: Հնչակեան Կուսակցութեան հիմնադրութեան թուական պէտք է ընդունիլ 1887ի Օգոստոսը, երբ խումբ մը կովկասահայ երիտասարդ ուսանողներ՝ Աւետիս Նազարբէկեան, Մարօ Վարդանեան Նազարբէկեան, Ռուբէն Խանազատ, Գաբրիէլ Կաֆեան, Քրիստափոր Օհանեան, Գէորգ Ղարաջեան եւ Լեւոն Ստեփանեան, Ժընեւի մէջ կը համախմբուին «Յեղափոխական Կազմակերպութիւն» անունին տակ: Ընդամէնը երեք ամիս ետք, երբ 1887ի Նոյեմբերին անոնք նոյն քաղաքին մէջ կը հրատարակեն իրենց «Հնչակ» պաշտօնաթերթը, վերջինիս խօսուն անունին հետեւութեամբ կը կոչուին Հնչակեաններ: Աւելի ուշ շրջանին է որ «Յեղափոխական Կազմակերպութիւնը» կ՛որդեգրէ «Սոցիալ-Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւն» անուանումը:*

*Սկզբնական շրջանին, այս «Յեղափոխական Կազմակերպութեան» հիմնադիրները Ժընեւի մէջ սերտ կապեր ունենալով ռուս յեղափոխականներու հետ, կը գտնուին անոնց նարոդնիկական գաղափարական ազդեցութեան ներքոյ, բայց ոչ շատ ուշ, գոնէ 1891էն սկսեալ, անոնք միանգամայն կը ձեւաւորուին իբրեւ զուտ մարքսիստական-ժողովրդավարական սկզբունքներու վրայ խարսխուած կազմակերպութիւն մը:*

### 2. «Կայծ» թերթը եւ Գեղամ Վանիկեան

*Արշակ Ջուրաբով մեծ գնահատանքով կ՛անդրադառնայ «Կայծ» թերթի մասին, որուն, ինչպէս վերը տեսանք, ինք թղթակցած էր երկարաշունչ նամակով մը: «Կայծ»ը տեսական մարքսիզմի քարոզչութեան ազդու այն պաշտօնաթերթն էր, որուն շուրջ հաւաքուած էին «Թուրքիոյ մարքսիստական ջամբարի կարկառուն ներկայացուցիչները»[85]:*



*«Կայծ»ի խմբագիր Գեղամ Վանիկեան*

*Դեռ Ա. Աշխարհամարտի նախօրեակին, երբ Թուրքիա տակաւին ներգրաւուած չէր աշխարհակործան պատերազմին մէջ ու երկիրը կը գտնուէր խաղաղ պայմաններու մէջ, Երիտթուրքերը մահացու հարուած մը հասցուցին Հնչակեաններուն, անոնց դէմ մեկնարկելով հալածանքի հսկայ ալիք մը Կ. Պոլսէն մինչեւ հայկական նահանգներու ամբողջ տարածքով: Ոստիկանական բիրտ ուժերու կիրառումով, հնչակեան ականաւոր գործիչներու ձերբակալութիւններով ու տարատեսակ սպանութիւններով, փակուեցան կուսակցութեան շատ մը կեդրոնները, ակումբներն ու հրատարակչատուները: Կախաղանի մահուան դատապարտուած Քսաններուն մէջ կը գտնուէր նաեւ «Կայծ» թերթի երիտասարդ մտաւորական խմբագիր Գեղամ Վանիկեանը, որուն նկատմամբ անթաքոյց են հեղինակին ունեցած բարեկամական ջերմ զգացումները: Այս առթիւ, Արշակ Ջուրաբով կը յայտնէ թէ ինք նամակագրական կապ ունեցած է նահատակ մտաւորականին հետ, ուստի՝ հաւաստի տեղեկութիւններ կը հաղորդէ անոր կենսագրութեան մասին. արդարեւ, մեզի համար ցարդ անծանօթ տուեալներ, որոնք անտարակոյս կու գան հարստացնելու բիւրեղ գաղափարի, ազդու խօսքի եւ հոսուն գրչի տէր այս ընտիր անձնաւորութեան վերաբերեալ մեր գիտելիքները:*

### 3. Հնչակեան Կուսակցութեան մարտավարութիւնը

*Յօդուածը հանգամանօրէն կ՛անդրադառնայ նաեւ հայ ժողովուրդը Օսմ. բռնատիրութենէն ազատագրելու ուղղութեամբ Հնչակեան Կուսակցութեան մարտավարութեան, որ գերազանցապէս կը հիմնուէր համաժողովրդական ապստամբութեան վրայ: Դառն փորձը բազմիցս ցոյց տուած էր, որ ո՛չ կարելի էր ապաւինիլ եւրոպական մեծ տէրութիւններու ամուլ խոստումներուն վրայ, ոչ ալ սին յոյսեր կապել ցարական Ռուսաստանին հետ, որ միայն կ՛ուզէր յագուրդ տալ իր նուաճողական ձգտումներուն, ջանալով պոկել Հայաստանը եւ միացնել իր աշխարհակալ կայսրութեան սահմաններուն:*

### 4. Երիտթուրքերու հետապնդած հայակործան քաղաքականութիւնը

*Հնչակեան Կուսակցութեան հետապնդած համաժողովրդական ապստամբութեան իրականացումին առաջքն առնելու համար, Երիտթուրքերու կառավարութիւնը փորձեց արեան մէջ խեղդել հայութեան ազատագրական շարժումը, նպատակին իբրեւ միջոց ծառայեցնելով Թուրքիոյ մէջ մահմետականներու մոլեռանդութիւնը քրիստոնեայ հայ ազգաբնակչութեան դէմ:*

*Ռազմական դատարանին տուած մահավճիռը հնչակեան գործիչներուն դէմ ամբողջապէս հիմնուած էր ամբաստանութիւններու վրայ: Ոճիրին բուն շարժառիթը Երիտթուրքերու հետապնդած հայակործան քաղաքականութիւնն էր՝ Օսմ. բռնապետութեան հետզհետէ աւելի ակներեւ դարձող քայքայումէն Հայաստանի անկախացումին եւ հայ ժողովուրդի ազատագրութեան իրականացումին արգելք հանդիսանալու նպատակով: Եւ այս մահահոտ ծրագրին մէջ Երիտթուրք բարբարոսներն ունեցան զօրեղ մեղսակից մը՝ յանձին Կայսերական Գերմանիոյ:*

### 5. Կայսերական Գերմանիոյ մեղսակցութիւնը՝

*Ֆօն Տէր Կոլց, Լիման Ֆօն Սանտերզ Փաշաներ եւ Վանկենհայմ դեռ այդ ժամանակաշրջանին, այսինքն 1915 թուականի Յունիսին, Հայոց Յեղասպանութեան յաջորդող անմիջական օրերուն, յօդուածի հեղինակին համար միանգամայն պարզ է Կայսերական Գերմանիոյ մեղսակցութիւնը Երիտթուրքերու ձեռքով իրականացած մեծ ոճրագործութեան մէջ:*

*«Գաղտնիք չէ, կը հաստատէ յօդուածագիրը, որ ներկայիս Թուրքիան կը հանդիսանայ պատերազմող Գերմանիոյ նահանգներէն մէկը: Թէ՛ Բ անոնց կառավարութիւնը եւ թէ՛ զօրքն ու նաւատորմը անմիջականօրէն կ՛ենթարկուին գերմանական կեդրոնական շտապին: Ասկէ բացի, զօրահրամանատար Ֆօն Տէր Կոլց Փաշան կը գտնուի Սուլթանի պալատին մէջ ու կրնայ իբրեւ ամբողջ Թուրքիոյ փաստացի միապետը նկատուիլ: Ասկէ ինքնին կը հետեւի, որ Սուլթանի վճիռին հաստատումը ու Քսան Ընկերվարականներուն մահապատիժը, այս իրողութիւններուն տակ, չէր կրնար իրագործուիլ առանց գերմանական հրամանատարութեան կամքին եւ համաձայնութեան»[86]:*

*Արդարեւ, Կայսերական Գերմանիոյ այս տաղանդաւոր զինուորականը, բուն ինքնութեամբ՝ Վիլհելմ Լէօփոլտ Գոլմար Տիար Ֆօն Տէր Կոլց[87], ծանօթ նաեւ համառօտ՝ Կոլց Փաշա[88] անունով, 1883ին Թուրքիա կ՛առաքուի Օսմ. բանակը վերակազմակերպելու եւ արդիականացնելու նպատակով: Կ. Պոլսոյ մէջ ան կը յաջողի շահիլ Սուլթան Ապտիւլ Համիտ Բ.ի վստահութիւնը, համոզելով զայն, որ թրքական սպայակոյտէն սպաներ Գերմանիա մեկնին եւ այդտեղ վերապատրաստուին գերմանական ռազմավարութեան բարձրագոյն գիտելիքներով: Բնականաբար անիմաստ պիտի ըլլար գերմանական ռազմավարութեան կիրառումը Օսմ. բանակին մէջ՝ առանց գերմանական զինամթերքի, ուստի Ֆօն Տէր Կոլցի կը վերագրուի յաջողութիւնը երկու երկիրներուն միջեւ ռազմական այն պայմանաւորուածութեան, որուն համաձայն Թուրքիա այսուհետեւ կը զինէ իր բանակը գերմանական այդ ժամանակուան համար ամենաարդիական զէնքերով:*

*Ֆօն Տէր Կոլց 1897ին կը վերադառնայ Գերմանիա, բայց 1908ին, Երիտթուրքերու, այսպէս յորջորջուած, յեղաշրջումէն ետք, նորէն Թուրքիա կը վերադառնայ եւ կը ստանձնէ Օսմ. բանակի բարձրագոյն հրամանատարութեան պաշտօնը: Հանգստեան կը կոչուի 1913ին, ու վերստին կը մեկնի Գերմանիա: Ա. Համաշխարհային Պատերազմի բռնկման ընթացքին, իր յառաջացած տարիքին բերումով, գերմանական իշխանութիւնները իրեն չեն վստահիր եւրոպական հողամասին վրայ գերմանական ռազմաճակատներէն մէկուն կամ միւսին ղեկավարութիւնը, սակայն ընդառաջելով Թուրքիոյ մէջ Գերմանիոյ դեսպան Վանկենհայմի[89] խորհուրդին, Սուլթանին մօտ ռազմական խորհրդատուի պաշտօնով ան վերստին կ՛առաքուի Թուրքիա, ուր իր պատուիրակութեան հետ կը ժամանէ 12 Դեկտեմբեր 1914ին: 1915 թուականի վերջը, երբ Օթթօ Վիքթոր Քարլ Լիման Ֆօն Սանտերզ[90] Օսմ. Ե. բանակի հրամանատարութիւնը կը ստանձնէ, Ֆօն Տէր Կոլցին կը փոխանցէ Կ. Պոլսոյ մէջ Օսմ. Ա. բանակի ընդհանուր հրամանատարութիւնը: 1915ի Հոկտեմբեր ամիսէն սկսեալ Ֆօն Տէր Կոլց կը դառնայ Օսմ. Զ. բանակի հրամանատար՝ թուրքգերմանական ռազմական սերտ համագործակցութիւնը Թուրքիոյ եւ Իրանի ճակատներուն վրայ համադրելու առաքելութեամբ: Այս ժամանակահատուածին մէջ, 1915 թուականի Ապրիլի սկիզբէն մինչեւ Յունիսի վերջը, երբ հայութեան Մեծ Եղեռնը աննախադէպ ցեղասպանութեան մը ամբողջ տարողութեամբ իր գագաթնակէտին հասաւ, իրագործուեցաւ թէպէտ ձեռքերովը Երիտթուրքերուն, բայց գիտութեամբն ու անհերքելի մասնակցութեամբը Կայսերական Գերմանիոյ, յանձինս իր հեղինակաւոր ներկայացուցիչներուն՝ զօրահրամանատար Վիլհելմ Լէօփոլտ Գոլմար Տիար Ֆօն*

*Շար.ը էջ 8*

# 100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ ԶՈՒԻՑԵՐԻՈՅ ՄԱՄՈՒԼՆ ՈՒ ՀՆՉԱԿԵԱՆ ՔՍԱՆ ԿԱԽԱՂԱՆՆԵՐԸ

*Շարունակուած էջ 7-էն*

*Տէր Կոլցի, նոյնպէս զօրահրամանատար՝ Օթթօ Վիքթոր Քարլ Լիման Ֆօն Սանտերզի, դեսպան Վանկենհայմի եւ վերջիններուս ոգի ի բուին համադրող, ծրագրաւորող, կազմակերպող եւ առաջնորդող անձնակազմի պատասխանատուութեամբ[91]:*

### 6. Ինտերնացիոնալի, Սոցիալ-Դեմոկրատեայի պատասխանատուութիւնը

*Հնչակեան Քսան Կախաղաններու վերաբերեալ Արշակ Զուրաբով իր ցնցող յօդուածին վերջաւորութեան կը քննադատէ նաեւ արտաքին հարուածներէ եւ ներքին պառակտումներէ տկարացած Ինտերնացիոնալի անտարբերութիւնը, ի տես Կ. Պոլսոյ մէջ հայ ընկերվարականներու դէմ իրագործուած ոճիրին: Հակառակ տրուած փաստին, ան կոչ կ՛ուղղէ անոր, թէ «Պէտք չէ Թուրքգերմանական կառավարութեան յանցագործութեան առջեւ լուռ մնալ»[92] : Բողոքարկելու այս սեպուհ պարտականութիւնը սակայն կը վերաբերի Գերմանիոյ ՍոցիալԴեմոկրատիային՝ ի վերջոյ «Ան պէտք չէ մոռնայ որ իր կողմէ շնորհուած վարկերը կը ծառայեն ոչ միայն պատերազմող երկիրներուն մէջ Պրոլետարիատի ոչնչացումին, այլ նաեւ անոնք կը գործադրուին մեր Ինտերնացիոնալի անդամներուն մահապատիժի ենթարկման, եւ փէսով կամ առանց փէսի դահիճներու հաւաքագրման […] նպատակին»[93] : Այստեղ հեղինակն իր միտքը շատ յստակ կ՛արտայայտէ, պախարակելով փէսաւոր Թուրքերը, իսկ առանց փէսի իրենց գերմանացի դաշնակիցները՝ դահիճներու ոճրագործ դերին մէջ, ի տես կախաղանի մահուան դատապարտուած Հնչակեան Քսան յեղափոխական գործիչներու նահատակութեան:*

*Յօդուածը կ՛աւարտի յեղափոխութեան հաւատարիմ Սոցիալ-Դեմոկրատներուն ուղղուած սրտաբուխ կոչով մը՝ բարձրացնելու համար իրենց բողոքի ձայնը կատարուած անարդարութեան դէմ. «Թող այս եղբայրական կոչը, կը շարունակէ Արշակ Զուրաբով, մեր Թրքահպատակ ընկերներուն իբրեւ խրախուսանք ծառայէ (յարատեւելու) իրենց դժուարին պայքարին մէջ, հասարակական կեանքի հինցած ձեւերու ճնշող մնացորդացին դէմ»[94] :*

*Առկայ ուսումնասիրութեան մէջ մենք խիստ շահեկան կը գտնենք թարգմանաբար ներկայացնելու Արշակ Զուրաբովի ստորագրած ամբողջական յօդուածը, իբրեւ պերճախօս վկայութիւններէն մին այն արձագանգին, որ շուրջ հարիւր տարիներ առաջ հնչած է մասնաւորաբար Զուիցերիոյ ընկերվարական մամուլին մէջ: Ահաւասիկ յօդուածը.*

### ԹԱՐՄ ՀՈՂԱԿՈՅՏԵՐՈՒՆ ԱՌՋԵՒ[95]

Քսան Թրքահպատակ Ընկերներու Սպանութեան (առթիւ)

*Իմբերիալիզմը սոցիալիզմին շարքերը կը հնձէ ոչ միայն ռազմաճակատին վրայ, (այլ) այս կամ այն ձեւով ան կը միրճուի անոր ամենախիտ շարքերուն մէջ, եւ քանի որ ոչ մէկ դիմադրութեան կը հանդիպի, ան դուրս կը պոկէ անոր գործունեայ տարրերը: Ամենատխուրն այն է, որ այս բոլորը կը պատահի սոցիալիստական աշխարհի բացարձակ լռութեան ներքոյ:*

*Հազիւ թէ քանի մը ամիս անցաւ մեր Դումայի անդամներու դատապարտութենէն, եւ ահա կրկին մեր երկրագունդին միւս կողմը, Կ. Պոլսոյ մէջ, բոլոր ուղղափառ մահմետականներու խալիֆին կառավարութիւնը, մինչեւ երկինք աղաղակող բռնաբարութիւն մը գործած է իր երկրի ընկերվարականներուն դէմ[96] :*

*Յունիս 15/16ի լուսաբացին, ինչպէս Թրքական կառավարութեան պաշտօնական հաղորդագրութիւնը կը յայտնէ, ռազմական դատարանի արձակած վճիռին համաձայն 20 հնչակեաններ կախաղան հանուած են: Այս կուսակցութեան առաջնորդներէն երկուքը[97] , որոնք մինչ այդ երկրէն դուրս կը գտնուէին, ի բացակայութեան մահուան դատապարտուած են:*

*Շատ սեղմ կազմուած պաշտօնական հաղորդագրութեան մը մէջ ի զուր կը փնտռենք յստակ ցուցմունք մը այս անձերուն յանցանքին վերաբերեալ: Այնտեղ ընդամէնը կ՛ըսուի, որ «Մահապատիժի ենթարկուածները «մահապարտ» դարձած են, որովհետեւ փորձած են ստեղծել անկախ եւ ինքնավար Հայաստան մը: Այս նպատակին հասնելու համար, անոնք դիմած են յանցագործութիւններու՝ օտարերկրացիներու միջամտութեամբ կայսրութեան տարածքէն մաս մը անջատելու միտումով: Անոնք կազմակերպած են գաղտնի եւ բացա-*




*Ցոլքսրեխթ, 13 Օգոստոս 1915, Թարմ Հողակոյտերուն Առջեւ, Քսան Թրքահպատակ Ընկերներու Սպանութեան, էջ 1-2.*

*յայտ խորհրդակցութիւններ արտասահմանեան տարբեր վայրերու մէջ, եւ տարածած են ըմբոստութեան կոչեր եւ գրութիւններ»:*

*Եւ վերջը կը հետեւի ցուցմունքը քրէական գրքոյկի 54րդ յօդուածին եւ մահուան դատապարտուածներու ցուցակին[98]:*

*Ինչպէս կը տեսնենք, Երիտթուրքերը նոյնիսկ անհրաժեշտ չեն տեսներ իրենց նախկին դաշնակից Հնչակեանները, որոնք Ապտիւլ Համիտի հին վարչակարգին դէմ իրենց հետ միասին պայքարած են, անոնց վերագրուած յանցանքի պատճառներու եւ բնոյթի մասին յաւելեալ բացատրութիւններ տալու: Այժմ, [ներկայացուածը] միայն քրէական գրքոյկի 54րդ յօդուածն ու երբեք չհանդստացող սոցիալիստներն են, որոնք քաղաքացիական խաղաղութեան դաշինք չեն կնքեր, այլ նոյնիսկ կը յանդգնին արտասահմանեան խորհրդակցութիւններ կազմակերպել: Այս բոլորը բաւարար է, որ մարդիկ ոչխարներու հօտի պէս հրապարակաւ սպանդանոց քշուին[99] :*

*Խորքին մէջ այս տեսակ ասիական վարուելակերպ մը ոչինչով չի տարբերիր այն բոլոր կոպիտ բռնաբարութիւններէն, որոնք այժմ կը կիրարկուին պատերազմի մէջ գտնուող երկիրներու ընկերվարականներուն հանդէպ: Այս հալածանքներու շղթան, որ սկսած է խօսքի եւ գիրի ազատութեան փաստացի ոչնչացումով, եւ այն ձգտումով՝ խեղդելու համար դասակարգային պայքարը հին «հայրենիքի» իմբերիալիստական ճահիճին մէջ, տողանցելով գերմանական բանտերու եւ ցարական Սիպերիոյ մէջէն, մեր աչքերուն առջեւ իր աւարտին հասաւ Կ. Պոլսոյ կախաղանին վրայ[100] :*

*Ոչ թէ անոր համար որ Թրքական կառավարութեան մշակոյթ կամ եւրոպականացում կը պակսի, որուն համար ալ ան իր սոցիալիստները կախեց: Ինքնին հասկնալի է որ՝ ո՛չ: Եթէ պատերազմող այլ երկիրներու սոցիալիստները ապրէին այնպիսի միջավայրի մը մէջ, Թուրքիոյ նման միջավայր մը, ուր մեր ընկերները կը գտնուին պետական կատարեալ կործանումի ու ընկերայինհասարակական ընկճուածութեան ներքոյ, ով գիտէ, արդեօ՞ք իրենց կառավարութիւնները դասակարգային քաղաքականութեան նուազագոյն յառաջընթացի պարագային իրենց նոյն կախաղաններով պիտի չպատասխանէ[101] :*

*Արդարեւ, մահուան ենթարկուած ընկերները կը պատկանէին հին հայկական Հնչակեաններու կուսակցութեան, որ դեռ եւս 1885 թուականին հիմնադրուեցաւ: Այս կուսակցութիւնը իր գոյութեան առաջին օրէն որդեգրած էր մարքսիստական ուղղութիւն մը, չնայած իր մարքսիզմին մէջ շատ զօրաւոր կը հնչէին նախկին նարոտնիկներու շարժումին ձայները: Այնուհետեւ, յատկապէս ռուսական յեղափոխութեան սկիզբը, ան յառաջդիմական կերպով սկսաւ նարոտնիկներու նախապաշարումներէն ձերբազատուիլ, եւ այդպիսով յղկուեցաւ իբրեւ մարքսիստական մաքուր հաւաքականութիւն մը: 1905 թուականէն սկսեալ, ան ինքզինք կոչած է սոցիալդեմոկրատական կուսակցութիւն, եւ 1908 թուականէն սկսեալ Թուրքիոյ մէջ գրանցուած է այս պաշտօնական անունին տակ:*

*Մահապատիժի ենթարկուածներուն մէջ կը գտնուի «Կայծ»[102] երիտասարդ մարքսիստական տեսութեան պաշտօնաթերթի խմբագրութեան գրեթէ ամբողջ անձնակազմը: Այս պաշտօնաթերթին շուրջ հիմնականօրէն կը հաւաքուէին Թուրքիոյ մարքսիստներու ջամբարի կարկառուն ներկայացուցիչները: Այս լրատուամիջոցը յայտնի դարձած էր տեսական Մարքսիզմի լուրջ եւ հանրային ուշադրութիւն վայելող քարոզչութեամբ: Կախաղան բարձրացածներուն մէջ յատկապէս աչքի կ՛իյնար «Կայծ»ի խմբագիր Գ. Վանիկեանը, իր հրատարակչական լուսաւորող եւ հռետորական տաղանդով: Դեռ շատ երիտասարդ «22 տարեկան» հասակին աւարտած էր Կ. Պոլսոյ համալսարանի իրաւաբանութեան բաժինը, եւ կը ծրագրէր ուսումը կատարելագործելու համար մեկնիլ Փարիզ, բայց եւրոպական պատերազմը արգելք դարձաւ՝ պահելով զինք նախ իր տեղը եւ ապա ոչնչացուց իր երիտասարդ աւիշով ու եռանդով լեցուն կեանքը:*

*Տակաւին պատերազմին սկիզբը, երբ Թուրքիոյ մէջ յայտարարուեցաւ առաջին զօրահաւաքը, ան ինծի կը բողոքէր նամակով մը իր տխուր ճակատագրին մասին: Ինչպէ՞ս մտնել բանակի շարքերը, կը գրէր ան, Թուրքիոյ նման կործանումի դատապարտուած երկրի մը համար մարտնչելու: Ասկէ աւելի դաժն դեռ ի՞նչ կրնար ըլլալ:*

*Մեզի յստակ չէ, թէ ի՞նչ հայեցակէտ ունէին մեր ընկերները պատերազմին վերաբերեալ: Արդեօ՞ք անոնք այն կարծիքն ունէին, որ անհրաժեշտ է Հայաստանը ազատագրել ժողովրդային ապստամբութեան միջոցով, թէ կը փափաքէին ժողովրդային այս շարժումը օգտագործել ցարական զօրքին կողմէ Հայաստանը գրաւելու հեռանկարով: Դատելով այն կարծիքէն, որ այս ընկերներէն ոմանք Պալքանեան Պատերազմին ժամանակ իրենց յօդուածներուն եւ անձնական խօսակցութիւններուն մէջ յայտնած էին, ճիշդ պիտի ըլլար հետեւցնել, որ անոնք աւելի հակած էին առաջին մտքին: Դեռ եւս այն ժամանակ, երբ իրենք քննադատօրէն կը վերաբերէին իրենց իսկ սեփական կուսակցութեան նախկին ամբողջ մարտավարութեան նկատմամբ, կը ջանային զարգացնել իրենց պայքարը երկու ուղղութիւններով՝ Թրքական ոսկրացած պետական համակարգի եւ ցարական կայսրութեան ընչաքաղց ձգտումներուն դէմ, որ կը ջանար պոկել Հայաստանը իր կողմը:*

*Սակայն ո՞րն էր այս մարդոց դատապարտուելու հիմքն ու դրդա-*

*Շար.ը էջ 20*

# Massis Weekly

Volume 34, No. 26 Saturday, July 12, 2014

## Sarkisian: We do Not Have Much to Discuss with Turkey

BUENOS AIRES -- "We do not have much to discuss with Turkey today," Armenian President Serzh Sarkisian said in an interview with Argentine media. "We have long discussed the two protocols, but the Turkish Parliament has not yet ratified them. So, what should we talk about?," he said.

Sarkisian received Telam and two other Argentine media in a Buenos Aires hotel after a long day that included a ceremony at the Palacio San Martín with Vice President Amado Boudou, and several government ministers, and a meeting with the mayor of Buenos Aires, Mauricio Macri.

Relaxed, no suit and tie and with a gentle and unalterable tone of voice, the Armenian President does not reflect the image of the "military hero" many of his countrymen know. More than two decades ago, Sarkisian was one of the military leaders in the war against Azerbaijan. That conflict ended with the creation of a pro-Armenian internationally unrecognized republic, which, according to Sarkisian, was a springboard for raising the defense and security level of Armenia.

"Away from the drama of war and categorical forms of military life, the 60-year-old leader, who has been holding presidency of his country for six years, avoids resonant statements," the article reads.

The President argues again and again that they do not choose either Russia or Europe. "We chose the two," he said. Sarkisian said that he would not "reduce or sever the relationship with the European Union," but made a decision to join the Customs Union "by simple economic calculation."

"For decades we have had a strong relationship with Russia and we can not drop it," the President said.

He explained that it is impossible for Armenia to export agricultural and other products to the EU it now exports to Russia at a competitive price.

He added, his country is dependent on Russia and Iran in energy and gas, and Moscow offers a 30% discount to members of the Customs Union.

The article notes that Armenia's

Continued on page 4

## Groundbreaking Ceremony for the Armenian Genocide Museum in Buenos Aires




BUENOS AIRES -- On July 8, on the second day of his official visit to the Argentine Republic President Serzh Sarkisian, accompanied by Chief of Staff of the Government of City of Buenos Aires Horacio Larreta and the representatives of local self-government bodies and the Armenian community of Argentina, attended the groundbreaking ceremony of an Armenian Genocide museum at the neighborhood of Palermo in Buenos Aires. After the consecration of the memorial plaque, Chief of Staff of the Government of City of Buenos Aires Horacio Larreta and Chief of the RA Presidential Administration Vigen Sargsyan opened it.

## Turkish Court Rejects Request to Return Historic Building to Armenian Patriarchate



ISTANBUL -- Turkey's Armenian Patriarchate has lost its legal battle to reclaim the Sansaryan Han building, which was confiscated by the state about seven decades ago, Today's Zaman reported.

The court rejection came in spite of a recent government plan to return seized properties to minority groups.

The historic building, built in 1895 and commissioned by Migirdich Aga Sanasaryan, was designed by architect Hovsep Aznavour. It was seized by the Turkish state in the early years of the republic. The Armenian Patriarchate has been fighting a legal battle for its return since 2011.

The Istanbul 13th Court of First Instance rejected the patriarchate's request for the return of Sansaryan Han in the last session on Friday, attended by lawyers representing both the Patriarchate and the Treasury.

A contractor leased the building on June 18 from Turkey's Directorate General for Foundations (VGM). The lease agreement was executed before the conclusion of the lawsuit and prompted speculation that the building will be turned into a hotel.

Ali Eyuboglu, an attorney for the Armenian Patriarchate, said the court's reasons for not returning the building are not clear as all the documents and expert reports indicate that the building rightfully belongs to the patriarchate. Eyüboglu said they will appeal the decision once the court issues its reasoned opinion regarding the verdict.

In a related development, Republican People's Party (CHP) Deputy Chairman Sezgin Tanrikulu submitted a parliamentary motion addressed to Minister of Culture and Tourism Omer Celik inquiring whether the speculation that the Sansaryan Han will be

Continued on page 4

## Zarakolu: What Belongs to the Armenians Must be Returned to the Armenians




YEREVAN -- Turkish publisher and activist Ragib Zarakolu, who is in Yerevan these days, once again reiterated the need for the recognition of the Armenian Genocide by Turkey.

At a meeting with the Social Democrat Hunchakian Party (SDHP) representatives Vazgen Mesropyan, Dmitri Martirosyan and Gagik Melikyan, Zarakolu said it is now time to speak with official Ankara with the language of claims.

"What belongs to the Armenians must be returned to the Armenians," he said, adding that the Turkish state was founded on the lands of the Armenians and Greeks.

Hunchakian Party representatives thanked Zarakolu for speaking out in Turkey about the fact of the Armenian Genocide throughout so many years and expressed their readiness to cooperate.

Ragip Zarakolu also met with the Hunchakian Party "Sarkis Tkhruni" Youth Student Union representatives.

Zarakolu had arrived in Armenia to participate in the presentation of the Turkish edition of the "Armenian Genocide in Ottoman Turkey: Testimonies of the Survivors", a three-volume collection of archival documents covering the 1916-1917 period, published in one volume, in 500 copies in Turkey.

"This book is the result of efficient work that was done in the immediate aftermath of the Genocide. It contains evidence gathered immediately and raises numerous questions. This book is the second most important one after "The Blue Book", as it also includes testimonies related to 1916," Zarakolu stated to the media, noting that the Turkish version will be presented to the entire world. The book's Russian, Spanish and French translations are also expected in the near future.

"I was greatly excited by the

Continued on page 4

# Energy Deal With U.S. Firm 'Critical For Armenia'

YERVAN -- John Heffern, the U.S. ambassador in Yerevan, has expressed hope that the Armenian government will not annul the planned sale of Armenia's largest hydroelectric complex to a U.S. energy company.



In an interview with the 1in.am news service, Heffern warned that scrapping the $250 million deal finalized in January would send a "very unfortunate signal" to big Western investors and call into question Armenia's ability to do business with them.

Under the takeover agreement signed on January 29, the New York-based group ContourGlobal was to pay $180 million for three hydroelectric plants making up the Vorotan Hydro Cascade and invest another US$70m in their modernization. The takeover, strongly welcomed by the U.S. government, was supposed to be formally completed by mid-April.

However, Armenia's new Prime Minister Hovik Abrahamian, who took over on April 13, put the brakes on the deal, demanding changes in its terms. The Armenian press has since been rife with speculation that Russia is pressing Yerevan to cancel the deal and sell Vorotan to a Russian energy company instead.

Davit Harutiunian, the chief of the government staff, denied such claims on June 26. Harutiunian told RFE/RL' Armenian service (Azatutyun.am) that the Armenian side wants to renegotiate the deal only because it believes that some of its provisions run counter to Armenian law. He said Abrahamian assured Heffern at a recent meeting that Yerevan remains "interested in selling the plants to the American company."

Heffern would not be drawn on contentious details of the Vorotan deal criticized by Armenian opposition parties and former President Robert Kocharian, arguing that the U.S. Embassy in Armenia is not a party to the accord. Still, he described ContourGlobal as a "responsible company" and stressed the importance of what would be the first-ever major Western involvement in the Armenian energy sector.

"It's a complicated deal because it's a big deal. It's the first Western investment in the Armenian energy sector," Heffern told 1in.am. He said he therefore hopes that the deal will go through.

Heffern also emphasized that Vorotan's planned sale is a "different kind of a deal" compared to energy agreements concluded by the authorities in Yerevan until now.

Those agreements have left much of Armenia's energy sector under the control of Russia's Gazprom and RAO Unified Energy Systems giants. The latter have acquired most of their Armenian assets through highly controversial swap arrangements, in return for Moscow writing off Yerevan's debts and supplying Russian natural gas to Armenia at discount prices.

# Key Summit On Armenia's Eurasian Union Bid Cancelled

YEREVAN -- Raising more questions about Armenia's accession to the Russian-led Eurasian Economic Union (EEU), Prime Minister Hovik Abrahamian has announced the cancellation of a summit of ex-Soviet states which was due to discuss Yerevan's membership bid.

"There was an agreement that the presidents will meet on July 3. But the meeting will not take place," Abrahamian told reporters late on Thursday.

He did not clarify whether the meeting was due to involve the presidents of only Armenia and Russia or also the EEU's two other member states: Belarus and Kazakhstan. The EEU's most recent summit took place on May 29 and the leaders of three ex-Soviet states announced no plans to meet again this summer.

Abrahamian stressed the importance of the July 3 meeting last week when he commented on an increasingly obvious delay in Armenia's accession process which President Serzh Sarkisian had hoped to complete this spring. "Things will be clear after the July 3 meeting," the premier said on June 26.

"We don't know the reasons [for the delay] but ... we have fulfilled all of our obligations," Abrahamian told reporters on Thursday. At the same time he expressed confidence that Armenia will join the EEU "before the end of this year." "I see no political problems," he said in reference to mounting speculation that Moscow is currently not interested in the quick signing of an accession treaty with Yerevan despite having forced the latter to abandon an Association Agreement with the European Union last year.

Abrahamian further announced that he will meet with Russian Prime Minister Dmitry Medvedev on July 11 to discuss this and other issues of mutual interest. "We will have an answer on my return," he said. "I also know that the presidents of Armenia and Russia will meet in the future."

Politicians and experts point to a number of possible reasons for the difficulties on the way of Armenia's Eurasian integration. For instance, Prosperous Armenia Party MP Mikael Melkumyan mentions failure to agree on the issue of customs exemptions on 900 basic types of commodities. Duties on these goods were to rise after Armenia's entry into the Russian-led trade bloc, which would have caused a socio-economic collapse in the country.

Others point to Russia's failed plan for a simultaneous integration of Armenia and Azerbaijan into the Eurasian Union. For example, member of the opposition Heritage party Stepan Safaryan links Armenia's "insurmountable difficulties" with Eurasian integration to the Karabakh problem. Experts say that Russia intended to introduce Collective Security Treaty Organization (CSTO) peacekeeping forces into Karabakh and, by dividing Karabakh, attract Armenia and Azerbaijan to the Union.

Armenia's neighbor Georgia also showed a tough stance. It is through this country that Armenia has the only path towards Russia. Despite the June visit by President Serzh Sargsyan and the warm welcome that he got in Tbilisi, Georgia categorically refused to authorize a customs duty-free transit of goods to Russia from Armenia and back. This means that attempts to secure a land link between Armenia and the EaEU have also failed.

# Armenian Genocide Memorial in Villeurbanne, France Desecrated




VILLEURBANNE -- The memorial erected in the French city of Villeurbanne in memory of the Armenian Genocide victims was desecrated on July 3. Some letters of the inscription "Recognize the Armenian Genocide of 1915" are now missing. The memorial had been unveiled in 2005 ahead of the 90th anniversary of the Armenian Genocide by Mayor Jean-Paul Bret.

"The desecration of the Armenian Genocide memorial in Villeurbanne held the night of July 3 is a new outrage to the memory of the million and a half Armenians exterminated in 1915 under the command of Young Turk government," the Coordinating Council of Armenian Organizations of France (CCAF) said in a statement, Nouvelles d'Armenia reports.

According to CCAF, this new attack, which came less than eight days after vandalizing Missak Manouchian statue in Marseille, is a new affront to human dignity, a blow to the fraternity between peoples and democratic values, also as a direct aggression against the Armenian community of France.

The statements emphasizes that this provocation months before the 100th anniversary of the Armenian Genocide proves the need to adopt the law criminalizing the Armenian Genocide, as pledged by the former and current authorities of France.

# Russia to Partly Fund Construction of New Nuclear Power Plant in Armenia

Part of the funds for construction of the new nuclear power plant in Armenia worth $4.5 billion will be provided by Russia in form of products and equipment, Armenia's minister of energy and natural resources Yervand Zakharyan said as quoted by the press office.



The other part is expected to be received as financial assistance from other countries, the minister said.

Zakharyan also said the start of the construction is scheduled for 2018-2019.

A new nuclear power unit with capacity of 1,000 megawatt is planned to be constructed in Armenia. According to Gosatomnadzor, the new power unit will cost about $5 billion.

The existing Armenian NPP is located in Metsamor, some 30 kilometers south of Yerevan. It was commissioned in 1976, but was closed following a devastating earthquake in 1988. One of its two VVER 440 reactors was reactivated in 1995 due to acute power crisis in Armenia. Today only the second reactor with capacity of 407.5megawatt is in operation.

Armenia and Russia will sign an agreement on a loan worth $300 million to Yerevan for extension of the lifetime of the Armenian Nuclear Power Plant, Zakharyan said Friday.

It will be a long-term loan at a low interest rate, Zakharyan said adding the negotiations will be completed soon.

The minister also said the nuclear power plant has financial liabilities worth a total of about 9-9.5 billion drams (about 22-23.3 million dollars) that arose from loan management.

The management should be more efficient in the next years, he said

# Mapping Memories Art Project in Yerevan



**By Sally O'Neil**

The Franco-Hungarian visual artist Anna Ádám and the Swedish-American dancer-choreographer Sally O'Neill have this summer been invited by the Armenian Art and Cultural Studies Laboratory, directed by Susanna Gyulamiryan, to conduct a visual- and performing art project, titled Mapping Memories. During their six week long stay in Yerevan, they will study the urban transformations of the Armenian capital, since the independence until 2014, through subjective (hi)stories, personal narratives, and anecdotes of the inhabitants. Their artist-in-residency program will be concluded in an exhibition at the Modern Art Museum in Yerevan from the 1st till the 8th of August, in which they will be showing an embroidered textile map and a series of short performances.

**Question 1: In Mapping Memories you study the transformations and the movements of the urban environment of post-communist capitals since the independence till current day. Anna, you were quite young during the Soviet era. Do you have any specific memories that you want to share with us?**

Anna Ádám (A. Á.): Yes, of course I do. One I remember quite clearly happened during an afternoon in our apartment where I was living during my childhood in Budapest, Hungary. I was about 6 or 7 years old. I was in the hall, listening to a conversation between my grandmother and a plumber who was repairing something. I remember him clearly telling my grandmother: "They have already taken down the Star." Of course I didn't know who had done it or why. I was too young to know that a star could also be a political symbol and that it could even shine on buildings. However, I really enjoyed the idea that taking down stars from the sky – as I understood it – was possible and obviously a common affair.

Sally O'Neill (S. O.): Rather than on the communist era in general, in Mapping Memories we are focusing on the transitional period, composed of a series of fast and radical transformations, which have left an impact on the personal and collective sphere as well. The Mapping Memories' starting point is the day of Independence, different in each country we study, and stories, narratives, anecdotes we collect that happened after the Soviet era, not during.

**Question 2: The fifteen post-USSR countries' capitals together with the seven Soviet satellite states in Europe make twenty-two capitals to study. Do you expect to conduct the Mapping Memories project in each of them?**

S. O: For the moment we have mostly focused on capitals – in which changes have been much more radical than in rural territories -, starting with European ones (e.g. Budapest). The reason why we go to Armenia this summer is because we want to enlarge the geographical territory of our research. It would be ideal to visit all twenty-two post-communist capitals and then collect the created spatio-temporal maps into one single subjective "Atlas of souvenirs". Now we are just at the beginning and we will do what we can to reach our goal.

**Question 3: What does your working process look like? What are your methods?**

A. Á:The first part of the project is about collecting and recording stories and anecdotes of Yerevanians concerning their relationship with the city. During the interviews we will focus on how the landscape has changed since the independence and in what way these urban modifications (e.g. demolished buildings) have had an impact on the inhabitants; emotionally, for example. After that we will "translate" these narratives into a visual form. The outcome of that will be an embroidered textile map, which we, in the end, will "activate" within the frames of a performance.

**Question 4.: It seems like a question of "translation" and "interpretation" is in the heart of your work.**

A. Á.: Yes, definitely. In Mapping Memories there are three languages that are translated from one form to the other. First, we collect and record stories that we translate from spoken Armenian to written English. Then we translate, transpose, transform this oral language into a visual language, which is finally translated into a corporal, choreographical language. Of course we can also talk about "interpretation" since each part of the project corresponds to a new subjectivity, but also because it is all about questioning the possibility of bringing a, so-called, objective geo-political tool – the map – to a subjective level.

S. O: To change from one language to another, from the oral to the visual and from the visual to the corporal, corresponds to changing form of expression; to moving from one discipline to the other. Therefore, in Mapping Memories, languages, disciplines, subjects, the topic, the object, and the performer, they are all in movement. The Map also changes its shape after each performance.

**Question 5: Different languages, spoken words, are recurrent in your personal work, Sally, let's take the example of your solo: "What do you do?". Could one say that the use of oral sounds is one of your main choreographic tools?**

S. O: I wouldn't call it my main choreographic tool. It is recurring in many things I do but not by conscious choice. Even though I am an educated contemporary dancer and choreographer I don't like to limit myself to only dance. When there is something, a message, an image, I want to share, I use any means to share it. To add voice or theatricality adds another layer. It can, for example, clarify the message when I want the message to be clear. It can also make it easier for the audience to relate to rather than bodies moving in an abstract way. I like it when dancers are human.

**Question 6: The use of textile and embroidery appears in other projects of yours as well, Anna. In "Re-Play!" you embroider on vintage photographs, in "Les Dévisagées" you embroider after monotyping. What is your relationship to thread and textile in the project "Mapping Memories"?**

A. Á:The language of embroidery and the process of sewing represent the passage of time, the exploration of the archaic ruins of history, memory and nostalgia. In Mapping Memories I use thread as ink in a process of words-to-forms "translation". On the other hand, the textile is a support for "visual-writing", a surface for projecting – mentally and physically – as well as a flexible, supple material to model, to sculpt forms in-situ, directly on the wall of the exhibition space. For Mapping Memories we wanted to use a material that we could easily manipulate during the physicalization part of the process; quickly change its shape and function (e.g. from a costume to a prop, from scenery set to a dance partner). The textile, combined with sewing and embroidering techniques, seems to favor both of us.

**Question 7: What are your plans for this Map, that you will elaborate in and on Yerevan, during your stay, and what are your next destinations?**

S. O: The textile map together with my performance will be shown at the Modern Art Museum in Yerevan from the 1st till the 8th of August, but our ambition is to show it abroad as well. We have plans with an art gallery in Budapest, Hungary, and hopefully with Armenian institutions in London and New York as well. As for our next destination after Yerevan, we have been invited to the GlogauAIR artistic structure in Berlin starting in October, 2014. But first thing's first. Now, full focus on Yerevan!

# Dutch State of Overijssel Recognizes the Armenian Genocide




The Parliament of the Dutch province of Overijssel (The Provincial Parliament of Overijssel) adopted at the meeting of 2 July 2014 a motion which calls against the way in which Turkish organisations on 1 June 2014, have protested against the presence of an Armenian Genocide memorial on private property of the Armenian church in Almelo. During the rally insulting, threatening and hurtful statements were made against Armenians, whereby the Genocide has been grossly denied.

The motion submitted by Christian Union (CU), the Reformed Political Party (SGP), Party for Freedom (PVV) and Christian Democratic Appeal (CDA) refers to the period of 1915-1918 when about 1.5 million people (Armenians, Assyrians and Pontic Greeks) were brutally slaughtered in the former Ottoman Empire.

The motion dissociates itself from the protest rally of genocide deniers and expresses the recognition of the Armenian Genocide with reference to the motion of the Dutch Parliament in 2004. The States Provincial (the Provincial Parliament) makes also a signal to the Armenian community that it has the right to a dignified memorial place.

HayastanInfo.net

# Carnegie Corporation Honors Immigrants Who Make America Strong




NEW YORK -- This Fourth of July, Carnegie Corporation of New York, its Board of Trustees and staff, celebrated naturalized citizens whose contributions have helped to make United States vibrant and strong.

As it has every year since 2006, the Corporation is honoring a group of distinguished immigrants and their achievements in its "Pride of America" full-page public service ad in The New York Times. The Corporation also salutes new and aspiring citizens on a companion website at greatimmigrants.carnegie.org.

"We owe the vitality, the progress and the hope we all have for the future of this nation to the contributions that each and every citizen has brought to the banquet table, including those who have come as immigrants, either recently or in the distant past," said Vartan Gregorian, President of Carnegie Corporation of New York and a naturalized citizen. "Andrew Carnegie was perhaps the best export of Scotland to the United States, who subsequently became one of the champions of American democracy and philanthropy."

The 2014 "Pride of America" honorees, 41 immigrants from more than two dozen countries, are leaders in a range of fields. They include Microsoft CEO Satya Nadella, U.S. Ambassador to South Africa Patrick Gaspard, authors Reza Aslan and André Aciman, Carnegie Mellon University President Subra Suresh, Administrator of the U.S. Small Business Administration Maria Contreras-Sweet, Nobel Prize Winner in Medicine Roger Guillemin; musicians Tan Dun and Dave Matthews, actress Sara Ramirez, actor/comedian Aasif Mandvi, and fashion designers Vivienne Tam and Carolina Herrera.

One of this year's honorees is Arsen Avakian. Born in Armenia,



Avakian came to the U.S. on a Fulbright scholarship to study business. Noting that Americans hardly seemed to know tea beyond Lipton tea bags, he opened a small tea shop called Argo Tea Cafe across the street from a Starbucks in Chicago, serving unique teas and "teapuccinos." Gaining immediate popularity, the business has since opened numerous locations worldwide and continues to grow. It has also expanded to produce bottled iced teas that are sold in major retail chains such as Whole Foods.

# Turkish Court Rejects Request

Continued from page 1

turned into a hotel is true.

Minority foundations, seeking the return of properties that were seized by the Turkish state in the first decade of the Turkish Republic, have long been saying that they have experienced a number of challenges. Despite a 2011 law passed to ensure confiscated property be returned to its rightful owners, the foundations indicate that reclaiming the properties is not going to be easy.

In August 2011, the Justice and Development Party (AK Party) government adopted legislation to return all confiscated immovable property belonging to minority foundations in Turkey, a long-overdue step towards expanding the rights of minorities in the country. The decree allows foundations to reclaim real property declared in 1936, when all the foundations were asked by the government to present lists of their property assets. Applications for at least 88 items have been rejected.

# 7th Annual Armenian Cultural Festival




PASADENA -- The 7th Annual Armenian Identity Festival, organized by the Armenian Community Coalition of Pasadena, will take place on Sunday, July 20, 2014 at Victory Park from noon to 7:00pm. Co-sponsored by the City of Pasadena.

The day long cultural activities include Armenian folk dances in traditional dresses, music and of course Mediterranean food, with Armenian flavors. Other activities include classic car show, petting zoo and slides for the children.

In the past, this event has been attended by Congresswomen Judy Chu, Pasadena Mayor Bill Bogaard, Pasadena Chief of Polis Phillip L. Sanchez and members of the Pasadena Fire Department with their trucks.

The Festival is open to the general public and there will be plenty of chairs for them to sit back and enjoy the food, while listening to Armenian songs by well known performing artists.

There will also be speakers representing the different organizations that comprise the Armenian Community of Pasadena. The emphasis this year will be Armenian folk Dances, music and Art and the public will be invited to join their ranks in a round of group dances, pertaining to different regions of our Homeland, Armenia.

Come one and come all to enjoy a day of entertainment under the shades of the Victory Park trees. For more info. Contact 626-399-1799 paccoalition@gmail.com www.acc-us.org

# Zarakolu: What Belongs to the Armenians Must be Returned to the Armenians

Continued from page 1

content of this book, because it includes interviews made in 1916, i.e. immediately after the Genocide. This is a very valuable document against Turkish denialism," Zarakolu said.

"This is denialism: once you lie, you have to do that constantly. This is Turkey's policy, which I have long been fighting against," he said.

Zarakolu and his wife have been persecuted in Turkey because of their activity. He has published a number of books on the Armenian Genocide, and this one will come to enrich the list of banned literature in Turkey. "Thanks God there is Internet, and the book will reach the reader," the publisher said.

Zarakolu said much has changed in Turkey over the past years. "People are tired of lies, they want the truth," he said.

Ragip Zarakolu also spoke about the recent article by Turkish Foreign Minister Ahmet Davutoglu, in which the latter notes that 'unjust memory has been created around the events of 1915.'

"Davutoglu's scales are wrong," the publisher said. "If we look at the period from 1915 to nowadays, we'll see that two million Armenians living in Western Armenia do not live there any more. Had there been no genocide, there would be 8-10 million Armenians living there."

# We do Not Have Much to Discuss with Turkey

Continued from page 1

shared border with Turkey in the west has been closed for more than two decades, and the same is with the Azerbaijani border.

The country has open borders with Iran and Georgia, a country that has already bid to join the NATO military alliance, which recently signed a Free Trade Agreement with the European bloc and proceeds to enter the EU as a full member.

"We'll continue the negotiations with the EU in a way that will not interfere with our integration with the Customs Union," the President said, reaffirming his moderate spirit.



# ԹԱՄԱՐԱ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ ԳՈՐԾԵՐՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

*ԱՐԱ ԱՀԱՐՈՆԵԱՆ*

*Կլենտէյլի Կեդրոնական Գրադարանի հանդիսասրահը, Ուրբաթ 27 Յունիսի երեկոյեան, հոծ բազմութեան մը ժամադրավայրն էր՝ վաստակաւոր բանաստեղծուհի Թամար Յովհաննիսեանի զոյգ գործերուն ներկայացումին առիթով: Ձեռնարկը կազմակերպուած էր Լոս Անճելոսի Թէքէեան Մշակութային Միութեան կողմէ:*

*Հայերէն լեզուի ուսուցիչ, Թ.Մ. Միութեան վարչական անդամ Նազիկ Գոճայեանի հանդիսավարութեամբ սկսուած յայտագիրով, նախ ներկայացուեցաւ բանաստեղծին ամփոփ կենսագրութիւնը, երկերու թիւումը: Թամարա Յովհաննիսեան Հայաստանէն հաստատուած մըն է Գալիֆորնիա,ատեն մը Լոս Անճելոսի մէջ ապրելէն ետք, փոխադրուած է Գալիֆորնիոյ գեղատեսիլ Գարմել քաղաքը, ուր կը զբաղի գեղարուեստի գործերու առեւտուրով: Նազիկ Գոճայեան հրաւիրեց վաստակաւոր արձակագիր Սարգիս Վահագնը, ներկայացնելու համար «Լինելութեան Համանուագ» գործը, որ տպագրուած է 2013ին՝ Երեւան:*

*Բանախօսը յատկապէս անդրադարձաւ Յովհաննիսեանի գործին մէջ տեղ գտած սիրերգութեան բոլորովին նոր ոճին, լեզուի հարստութեան, բանաստեղծելու իւրայատուկ մօտեցումին եւ Թէքէեանական շունչի շնորհալի առկայութեան:*

*Գեղարուեստական բաժնի առաջին ելոյթով ժողովրդական ասմունքող Անահիտ Մարտիրոսեան արտասանեց Յովհաննիսեանէն չորս կտորներ՝ իւրայատուկ մեկնաբանութեամբ մը, որ բարձրօրէն գնահատուեցաւ ներկաներուն կողմէ:*

*Երեւանի Կոմիտասի անուան երաժշտանոցի շրջանաւարտ դաշնակահար Շուշան Յակոբեան եւ ջութակահար Օֆելիա Նանանկիւլեան միասնաբար ներկայացուցին Արամ Խաչատուրեանի Գայեանէ եւ Սպարտակուս պալէներէն երեք կտորներ: Իսկ Նանակիւլեան առանձինն կատարեց Կռունկ սիրուած կտորին մեկնաբանութիւնը: Յայտագրին վրայ երկու առիթով հանդէս եկող այս սքանչելի զոյգին սրտամօտ կատարումները յաճախակիօրէն պէտք է ներկայացնել հանրութեան: Երկու վարպետ արուեստագէտներ, որոնք զգացականի բարձր ոլորտներուն հասցուցած են երաժշտական կատարումները:*

***

*Սիրուն անակնկալ մըն էր բեմի պաստառին վրայ ունկնդրել հայրենի տաղանդաւոր յօրինող Ռոպերթ Ամիրխանեանի ողջոյնի խօսքը՝ ուղղուած օրուան մեծարեալ Թամար Յովհաննիսեանին, մանաւանդ երգի կատարումը զոր Ամիրխանեան հրամցուց մեզի: Կ՚արժէ նշել որ Ամիրխանեան Յովհաննիսեանի քանի մը բանաստեղծութիւններու երգի յօրինումները կատարած է անմիջական անցեալին: Յուզիչ էր պահը՝ Երեւանէն ուղղորդուող խօսքին ու երգին՝ մինչ Կլենտէյլի սրահին մէջ ամերիկահայեր կ՚ունկնդրէին մեծ յօրինողը:*

*Յայտագրին երկու խօսք առնողն էր վարչական անդամ՝ գրականագէտ Լիլիթ Քէհէյեանը, որ ծանօթ մըն է թէ գրող Յովհաննիսեանին եւ թէ իր վաստակին: Քէհէյեան բարձրօրակ վերլուծումով ներկայացուց Յովհաննիսեանի «Կինը» գործը, որ 2006 թուականին Երեւան տպագրուած է: Քէհէյեան կեդրոնացաւ բանաստեղծին լեզուական տպաւորիչ ոճին յատկութիւններուն վրայ, որ իւրայատուկ կը դարձնէ գրողին քերթողական արուեստը:*

*Հաճելի անակնկալ մըն էր յայտագրին մէջ ներկայութիւնը ծանօթ դերասան Յովհաննէս Բաբախանեանին, որ Նիւ Եորքէն գալով հաստատուած է Լոս Անճելոս: Վերջերս, Բաբախանեան արժանացած էր Հայաստանի Սփիւռքի Նախարարութեան Մայրենի Դեսպան շքանշանին: Բաբախանեան իր սրտագին ողջոյնի խօսքը ուղղելէ ետք բանաստեղծին իր ընտրութեամբ ընթերցումներ ըրաւ Յովհաննիսեանի գործերէն՝ խորապէս տպաւորելով ներկաները: Դերասանը անակնկալ մըն ալ ընելով բեմ հրաւիրեց ֆրանսաբնակ Մարինա Յովհաննիսեան, որ դուստրն է Հայաստանի Հանրապետութեան հեռուստատեսութեան յայտնի հաղորդավարուհի Այտա Ներսիսեանի. Մարիան հիւրաբար Լոս Անճելոս կը գտնուէր: Վերջինս ապրումով արտասանեց Յովհաննիսեանի գործերէն՝ ընկերակցութեամբ դաշնակահար Շուշան Յակոբեանի:*

*Յայտագրի աւարտէն առաջ, վարչութեան ատենապետ Վաչէ Սեմերճեան ընթերցումը կատարեց Թ.Մ. Միութեան Կեդրոնական վարչութեան փոխ ատենապետ, գրադատ Երուանդ Ազատեանի ողջոյնի բովանդակալից եւ սրտառուչ խօսքը: Աւարտելով յայտագիրը, բանաստեղծ Թամարա Յովհաննիսեան անկեղծ շնորհակալութեան խօսքեր ուղղեց կազմակերպիչ վարչութեան, յայտագրի մասնակիցներուն, երկու խօսք առնողներուն եւ ներկաներուն, ու խորանալով իր նիւթին մէջ մեկնաբանեց իր գեղարուեստական կեանքին դժուարութիւնները, դառնութիւնները, ինչպէս նաեւ՝ հպարտաւիթ յաջողութիւնները: Գրող Յովհաննիսեանի փափաքով իր մօտ գտնուող գործերուն օրինակները նուէր տրուեցան գրասէրներուն:*









www.massisweekly.com
Updated
Every Friday

## ՍԻՐԱՆ ՍԵՋԱ ԿՈՉ

*Յարգելի հայրենակիցներ,*

*Այսու կը տեղեկացնենք հայրենի թէ սփիւռքահայ մեր հայրենակիցներուն եւ յատկապէս մտաւորականութեան, որ կազմուած է յատուկ խմբագրական մարմին մը, որ յանձնառութիւնը ստանձնած է հրատարակելու ներհուն գրագիտուհի Տիկ. Սիրան Սեզայի նամականին, անտիպ գրութիւններն ու ստեղծագործութիւնները: Խմբագրական մարմնին մաս կը կազմեն՝ Ս. Սեզայի որդին՝ Վահագն Քիւփելեան, Դոկտ. Մինաս Գոճայեան եւ Տիկ. Նազիկ Գոճայեան: Կը խնդրենք մեր հայրենակիցներէն որ բարի ըլլան ստորեւ տրուած հասցէին ղրկել իրենց մօտ գտնուող Ս. Սեզայի նամակներուն բնօրինակները կամ անոնց պատճէնները:*

*11505 Dona Dolores Pl. Studio City, CA 91604*



# ՊԷՅՐՈՒԹԷՆ ՎԱՐՇԱՒԱ



ՀՐԱՅՐ ՃԷՊԷՃԵԱՆ

«Ես կ'ուզեմ ցաւը դուրս հանել»

«Ես 51 տոկոս հայ եմ, իսկ 49 տոկոս՝ լիբանանցի»

Հաւասարակշռութիւնը արժէք մըն է, որ անհատի կեանքին ու հաւաքական յարաբերութիւններուն աշխատանքային լաւ հիմք կու տայ: Հաւասարակշռութիւնը լաւ հիմք կու տայ ոչ միայն կեանքի տեսադաշտերու եւ հայեացքներու, բայց նաեւ՝ ինքնութեան եւ մշակութային գործօններուն: Այս մէկը աւելիով կ'արտացոլայ մեր սփիւռքահայ իրականութեան մէջ, երբ մէկ կողմէն կապուած ենք հայկական ինքնութեան, իսկ միւս կողմէն՝ այն հիւրընկալ երկրին (երկիրներուն), ուր «պարտադրաբար» ապաստան գտանք: Բարեբախտաբար այս «պարտադրանքը» տաժանելի չդարձաւ, այլ՝ արժէքի գիտակցութիւնը, երբ բոլոր հայերը սիրեցին իրենց ապաստան գտած երկիրները, որոնք մեզի տուին նաեւ ինքնութիւն եւ դաստիարակութիւն:

Այս հաւասարակշռուած կեանքի մինչեւ օրս ապրող մէկ լաւ իրականութիւնը վայելեցի Վարշաւայի մէջ՝ փետրուար 2014-ին, Ճոնի Գույումճեանին հետ:

Ճոնին ծնած է Պուրճ Համուտ: «Պուրճ Համուտը ինծի համար ամբողջ կեանք մըն է...: Թիրօ քեմփը, Սանճաքը, Սիսը...», կ'ըսէ Ճոնին, որուն մէջ կը զգամ այդ «ամբողջ կեանքին» արմատաւորումը, երբ մէկ-մէկ սկսաւ քակել իր կեանքի մէն մի միաւորը: Ութ տարեկանին գացած է Վենետիկ եւ սորված՝ Մխիթարեաններուն մօտ: Վերադարձած է Պէյրութ եւ իր ուսումը շարունակած՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ ճեմարանին մէջ, ապա՝ Ժամհուր դպրոցին մէջ: Ուսումը կատարելագործելու համար մեկնած է Ֆրանսա եւ մասնագիտացած՝ շարժարուեստի մէջ որպէս բեմադրիչ: Եղած է դասընկերը Ռոման Փոլանսքիի, որ իր վաստակը ունի ներկայ օրերու ֆիլմաշխարհին մէջ՝ որպէս բեմադրիչ: 1964-ին անցած է Լեհաստան՝ իր մասնագիտութիւնը ի գործ դնելու, բայց կեանքի պայմանները տարբեր դուրս եկած են Ճոնիին համար:

«Շարժարուեստը աշխարհս է»,- կ'ըսէ Ճոնի:- Պատանեկութեանս օրերուն սինեմա «Արաքս»-ի մէջ ցուցադրուած ժապաւէններուն գործածուած պատճէնները կը թափէին: Ես զանոնք կը հաւաքէի եւ մեր շէնքին տանիքը ճերմակ սաւան մը կը դնէի, ետեւը պզտիկ լոյսով կը ցուցադրէի զանոնք թաղի մանուկներուն: Ասիկա Ճոնիին Պուրճ Համուտի իր ապրած մանկութեան եւ պատանեկութեան օրերու մէկ քաղցր յիշատակներէն էր, որ զինք քաջալերած եւ իր կեանքին համար մղիչ ուժ եղած է նոյն այդ մասնագիտութեան հետեւելու համար»:

Լեհաստանի մէջ կարելի չէ եղած իր մասնագիտութեամբ իր կեանքը կերտելու: «Չեմ գիտեր՝ ինչո՞ւ Լեհաստան եկայ,- ըսաւ Ճոնին:- Կեանքի մէջ ընտրութիւններ կ'ընես, յետոյ կը հետեւիս անոնց»: Ճոնին հետեւած է իր «ընտրութեան» եւ այսօր յիսուն տարիէ ի վեր ան կ'ապրի Լեհաստան: Ընտանիք կազմած է՝ ամուսնանալով տեղացիի մը հետ եւ իր միակ զաւակը անուանած՝ Արտաւազդ:

Ճոնիին աչքերուն մէջ զղջում կամ յուսախաբութիւն չկար իր ընտրութեան եւ որոշումին համար: Ան ապրած է ու տակաւին կ'ապրի իր կեանքը նուիրուածութեամբ եւ հաւասարակշռութեամբ՝ երախտապարտ ըլլալով իր հայկական եւ լիբանանեան ինքնութիւններուն:

«Լիբանանը ինծի տուաւ ինքնութիւն,- կ'ըսէ Ճոնի:- Շնորհակալութիւն եւ յարգանք ունիմ Լիբանանի հանդէպ: Իսկ շնորհակալութեան եւ յարգանքի գործնական ապացո՞յցը. ան մինչեւ օրս կը մնայ լիբանանեան անձնագիրով՝ անկախ այն երեւոյթէն, թէ տարիներէ ի վեր կ'ապրի Լեհաստան եւ ամուսնացած է տեղացիի հետ: Ես 51 տոկոս հայ եմ եւ 49 տոկոս լիբանանցի: Լեհաստան այսօր Եւրոպական Միութեան անդամ երկիր է, որուն անձնագիրը արժէք ունի համաշխարհային համակարգին մէջ, բայց Ճոնիին կեանքի արժեչափերը ուրիշ են»:

Ճոնի Գույումճեան ամէն ջանք ի գործ դրած է, որպէսզի լիբանանեան դեսպանատունը իր կեդրոնը ունենայ Վարշաւայի մէջ, 1993 թուականին: Ան անդամ է Լեհաստան-Լիբանան խորհրդարանական միջպետական յարաբերութիւններու յանձնախումբին եւ այդ կապերը ամրապնդելու համար պաշտօնական այցելութեամբ Լիբանան եկած է պատուիրակութեան մը հետ, երկու տարի առաջ: Ճոնի աշխատանք տարած է նաեւ, որպէսզի Լեհաստանի խորհրդարանը 2005-ին Հայոց ցեղասպանութիւնը ճանչնայ:

Բայց Ճոնի տակաւին ունի «ցաւ» մը, «զոր կ'ուզէ դուրս հանել»:

«Հայրս ծնած է Ատըեաման (Արեւմտեան Հայաստան) եւ մահացած՝ Պուրճ Համուտ,- սկսաւ պատմել Ճոնին:- Հայրս մեծանուն ընտանիքի զաւակ եղած է, որ նիւթապէս հարուստ ըլլալով՝ մեծ դիրք ունեցած է քաղաքին մէջ: Բայց հայրս չէր պատմեր մեզի Ցեղասպանութեան մասին: Մէջը ցաւ մը ունէր, որ պահեց մինչեւ իր մահը»: Ճիշդ էր՝ Ճոնին ինծի կը նայէր, երբ կը խօսէր, բայց յստակ էր, թէ ան արդէն գացած էր հեռու՝ Ատըեաման, վերջապէս եզրակացուց. «Ես կ'ուզեմ հօրս այդ ցաւը դուրս հանել»:

Ճոնին քանիցս այցելած էր Ատըեաման: Ոտք դրած էր պապենական հողին վրայ, լսած է հօրը եւ իր ընտանիքին պատմութեան, հուչակին, ինչպէս նաեւ գերդաստանի՝ Գույումճեան ընտանիքին վայելած հմայքին ու դիրքին մասին: Ճոնի զգացած էր հերոսական կերպարը մեծ մօրը, որ որպէս ֆետայի կռուած էր Թուրքերուն դէմ: Վերջապէս, Ճոնին ապրած է, հոսած «արիւնը», բայց նաեւ՝ ապրող «արիւնը», որ մինչեւ օրս իր կեանքին տուած է ապրելու տեսլական եւ հիմք:

Այս ապրող տեսլականն ու հիմքը Ճոնին մղած են դառնալու իր մասնագիտութեան՝ շարժարուեստին... Ան պատրաստած է բեմագրութիւն մը երկու ժամ տեւողութեամբ՝ մեկնելով իր Ատըեաման տուած այցելութիւններէն եւ այնտեղէն պոկած ցաւէն:

«Սկիզբը որոշեցի կոչել «Կարմիր խաչքար,- ըսաւ Ճոնին:- Հիմա կ'ուզեմ անուանել, «Հերոսներու յուղարկաւորութեան երգը»:

Ճոնիին դէմքին վրայ գծուեցաւ պզտիկ ժպիտ մը, որուն ետին յուզում կար ու նաեւ՝ յոգնածութիւն. «Կ'ուզեմ ժապաւէնին մէջէն ցաւը դուրս հանել, բայց նաեւ՝ ցաւին ապրած հերոսութիւնը», ըսաւ ան:

Թէեւ իննսուն եւ իննը տարիներ անցած են, բայց տակաւին հայը աշխարհով մէկ կը քալէ նոյն այս ցաւին ծանրաբեռնուածութեամբ եւ իւրաքանչիւր առիթի կը փորձէ իր պարունակին մէջէն «ցաւը դուրս հանել» եւ այդ «ցաւին» մէջ ու անոր միջոցով կը դնէ իր պահանջատիրութիւնն ու արդար հատուցումը:

Ճոնի Գույումճեանը այն հաւատաւոր հայն է, որ կ'ուզէ «ցաւը դուրս հանել»:

«Կարմիր խաչքա՞ր», թէ՞ «Հերոսներու յուղարկաւորութեան երգը», Ճոնի Գույումճեան պէտք է յաջողի դուրս հանել «ցաւը»...


ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ

1060 North Allen Ave Pasadena, CA 91104

Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
հեռաձայնել՝ (626) 398-0506



# ՅՈԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՀԱՄԵՐԳԱՇԱՐ ՎԱԳՆԵՐԵԱՆ ԵՐԵՒԱՆԵԱՆ ՀԱՄԵՐԳԻ ՏՊԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ




*ՄԵԼԱՆԻԱ ԲԱԴԱԼԵԱՆ*

*Օրեր առաջ ներկայացուող յայտագիրը տեղեկացնում է «Արամ Խաչատրեան» համերգասրահի իւրաքանչիւր շաբաթավերջի համերգային ծրագրի մասին. Նախորդ ամսուայ նախավերջին ուրբաթօրեայ համերգային ծրագրում միայն Վագներ էր. Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նուագախումբը (գեղ. ղեկ.՝ Էդ. Թոփճեան) անուանի դիրիժոր Զաւէն Վարդանեանի ղեկավարութեամբ հնչեցրեց հատուածներ գերմանացի կոմպոզիտորի «Նիբելունգի մատանին» տետրալոգիայի «Հռենոսի ոսկին», «Վալկիրիա», «Աստուածների մթնշաղը», օպերաներից (փորձերի սակաւութեան պատճառով հանուել էր «Զիգֆրիդ» -ից հատուածը), ընդ որում մի մասը հայաստանեան բեմում կատարուեց առաջին անգամ:*

*Վագների երաժշտութիւնը եւ հայ բեմում հնչելու նրա հազուադէպութիւնն արդէն իսկ հետաքրքրութիւն ստեղծել էին՝ ապահովելով խստաճաշակ հանդիսականի ներկայութիւն, նաեւ ակնկալիքն ու սպասումն էլ բազմանշանակ էին:*

*Համերգային այս ծրագիրը Զաւէն Վարդանեանը մտադրուած էր իրագործել 2013-ին, Վագների ծննդեան 200-ամեակի տարում, սակայն տարբեր պատճառներով չիրականացաւ եւ բարեբախտօրէն մաս կազմեց դիրիժորի ծննդեան 70 եւ բեմական գործունէութեան 40 ամեակների՝ 2014-2015 յոբելեանական համերգաշարի, որի սկիզբը այս տարուայ Ապրիլին Կոմիտասի անուան կամերային երաժշտութեան տանը կայացած երեկոն էր՝ գերմանական եւ աւստրիական խմբերգային երաժշտութեան, իր ղեկավարութեամբ, Հայաստանի պետական կամերային երգչախմբի կատարմամբ:*

*Զաւէն Վարդանեանը դիրիժորական գործունէութիւնից բացի մշակութային գործչի լայն համարում ունի եւ լուրջ գործունէութիւն է ծաւալել՝ մասնաւորապէս գերմանական եւ աւստրիական դասական երաժշտութեան տարածման եւ ճանաչողութեան առումով: Գերմանական կոմպոզիտորական արուեստի հանդէպ նրա առանձնայատուկ վերաբերմունքը եւ հոգեհարազատութիւնը դեռեւս կոնսերուատորիական տարիներից եկող, յետագայում աւելի է խորացել: Նա հիմնադրել եւ ղեկավարել է Գերմանական-աւստրիական երաժշտութեան բարեկամների ընկերութիւնը, Հայկական Բախեան ընկերութիւնը, Հայաստանի Վագներեան ընկերութիւնը:*

*Նրա գործունէութեան յատկանշական գիծը՝ հայ երաժշտական կատարողական երկացանկը նոր ստեղծագործութիւններով հարստացնելու միտումով, երաժշտական մտածողութեան, ճաշակի զարգացմանն ուղղուած, իրականացուել է բազմաթիւ համերգներով՝ ժամանակակից երաժշտութեան տասնեակ պրեմիերաների, այդ թւում հայ կոմպոզիտորների 70-ից աւելի ստեղծագործութիւնների առաջին կատարումներով, ինչպէս եւ գիտաժողովների, փառատօների կազմակերպումը միեւնոյն նպատակին են ծառայել: Մասնագիտական իր ճանապարհը նա անցնում է լիրաւի նուիրումով ու պատասխանատուութեամբ, ի շահ արուեստի իրական արժէքների, կարելի է ասել կեանքային դժուարին սկզբունքներ որդեգրած նաեւ (նկատի ունենք մարդկային բարոյական արժէքները- այն, ինչը չի հնանում, արդիական է միշտ):*

*2015-ի Յունուարին կը լրանայ Զաւէն Վարդանեանի ծննդեան 70 ամեակը. երբ մի քիչ աւելի մօտ ես ծանօթ լինում իրեն, չես կարող չզգալ հոգու այն մաքրութիւնը, այն խորութիւնը, նաեւ թեթեւութիւնը, որով մօտենում է նա արուեստին, ապրում արուեստի, կեանքի բերած ոչ միայն հաճոյքը, այլեւ դառնութիւնը... Սա նկարագիր է, եթէ կ'ուզէք համոզմունք՝ արտիստին բնորոշ, դաւանանք՝ վերապրումի ճշմարտութեանը, այն ինչը նա համարում է հոգեւոր անհրաժեշտութիւն ոչ միայն բուն ստեղծագործական, նաեւ կատարողական արուեստի համար: Իր հետ մի քանի զրոյցներից ուրուագծւում է արուեստագէտի ներքին դիմանկարը՝ իտէալներն ու կողմնորոշումները, երեւակայութեան, միֆի ու իրականութեան «սահմանների» իր ըմբռնումները՝ երբ կարելի է շարունակել մնալ երազող այս իրականութեան մէջ, լիարժէք ապրելով ներկան, միաժամանակ զգալ անցեալի մշակութային հեւքը, ուսումնասիրելով, ճանաչելով կոմպոզիտորին եւ նրա ստեղծագործութիւնը, փորձել գնալ աւելի խորքը՝ թափանցելու անցեալի մշակութային շերտերի մէջ, վերապրելու այդ կեանքը, հասցնելով դա ինքնամոռացութեան աստիճանի, զգալ ժամանակաշրջանի առանձնայատկութիւնն այնպէս, որ բեմում երաժիշտներին փոխանցելիս՝ համոզիչ լինի սեփական վերապրումը եւ նոյն զգացումներով*

*Շար.ը էջ 18*

# ՃԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ ՈՒ ԲԱԺԱՆԱՐԱՐ ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ ԴԱՐԸ...

*Տասնվեցերորդ դարը մարդկութեան զարգացման նոր շրջանի սկիզբը կը համարուի: Յամենայն դէպս այդպէս կը գրեն պատմաբանները, քաղաքական ու մշակութային վերլուծաբանները, փիլիսոփաները: Այդպէս կ'ուսուցանեն դպրոցներու եւ համալսարաններու մէջ:*

*Բան մը կայ, սակայն, որուն մասին ա նոնք կը նախընտրեն լռել եւ կամ խօսիլ միայն ու միայն նեղ մասնագիտական գիտաժողովներու եւ զանազան քննարկումներու ժամանակ: Տասնվեցերորդ դարը մարդկութիւնը վերջնականօրէն բաժնեց երկու անհաշտ, երբեմն նոյնիսկ իրարու գոյութիւնը չհանդուրժող, իրարամերժ ճամբարներու:*

*Սկզբնական շրջանին ատիկա բաւական զգոյշ եւ քաղաքական քօղարկուած քայլերով կ'ընէին, բայց կարճ ժամանակ մը ետք, երբ քաղաքական միտքը սկսաւ իր գերիշխանութիւնը հաստատել մշակոյթի, գիտութեան ու տնտեսական կեանքի ոլորտներուն մէջ՝ անթափանց քաղաքական վարագոյրները բացուեցան, եւ մարդկութիւնը կամայ թէ ակամայ յայտնուեցաւ մեծ ու անյաղթահարելի բաժանարար գիծին երկու կողմերը:*

*Այդ երկու կողմերը փոխադարձաբար ոչ թէ զիրար կ'ամբողջացնէին, այդպիսով պահպանելով համաշխարհային հաւասարակշռութիւնը, այլ առաւելաբար զիրար մերժելով կը փորձէին իրենց գերակայութիւնը ապացուցել օրէ օր դաժանացող ու ահագնացող պատերազմներու միջոցաւ:*

*Անշուշտ պատերազմներ՝ մեծ պատերազմներ, տասնվեցերորդ դարէն առաջ ալ եղած են, սակայն տասնվեցերորդ բաժանարար դարէն սկսեալ ատոնք լաւագոյնս հաշուարկուած ծրագրեր դարձան, բացառապէս մէկ գերնպատակի հետապնդումով, որ բաւական միամիտ ձեւակերպում ունէր՝ "ազգային շահերու պահպանութիւն կամ կենսական տարածքներու նուաճում":*

*Անշուշտ այդ ամբողջը անմիջական ազդեցութիւն ունի մարդկային կենսագործունէութեան բոլոր ոլորտներուն, մանաւանդ գրականութեան վրայ, որ հաւանաբար ամէնէն զգայունն է:*

*Հայ մեծ սիրերգակ Նահապետ Քուչակի եւ անգլիացի խոշորագոյն մտածող, գրող ու քաղաքական գործիչ Թոմաս Մորի միջոցաւ մենք պիտի փորձենք աւելի հաստատուն դարձնել այս միտքը, բայց այդ անցումէն առաջ...*

*Այս պատմութիւնը կէս, կամ աւելի ճիշդ պիտի ըլլար ըսել, անկատար պիտի ըլլար, եթէ գոնէ թռուցիկ ակնարկով չանդրադառնայինք չարաբաստիկ ու բաժանարար տասնվեցերորդ դարու Հայաստանին:*

*Անսահման չքեղ ու հարուստ է հայկական մշակոյթը: Մեզի մատենագրութեան հրաշալի կոթողներ հասած են, գրուած հայ պատմիչներու, փիլիսոփաներու, բժիշկներու կողմէ: Հայերը գիրքի տպագրութիւնը սկսած են տասնվեցերորդ դարասկիզբէն՝ 1512 թուականէն, եւ իւրաքանչիւրիս յիշողութեան մէջ դեռ թարմ են այն բովանդակալից ու խանդավառ տօնակատարութիւններուն արձագանգները, որոնցմով հայ ժողովուրդը վաստակած հպարտութեամբ նշեց հայ առաջին տպագիր գիրքի հինգ հարիւր*

*Շար.ը էջ 19*



# ԽՂՃԻ ՁԱՅՆԸ

**Ռ. ԿՈՐԻՒՆ**

*Հայ տարեցների միութեան շէնքի մուտքին յաջորդող գրասենեակում միութեան գործերով էի զբաղուած, դռան առջեւը նկատեցի պրն. Յարութիւնին գաւազանը ձեռքին դէպի սրահ առաջանալիս, յարգանքով ներս հրաւիրեցի: Ամէն անգամ դէպի սրահ գնալիս, որ կատարւում է գրասենեակի առջեւից, նա յաճախ կանգնում է դռան մէջտեղը ձախ ձեռքը նրա շրջանակին յենած, իսկ աջը գաւազանին սեղմած իր հաւասարակշռութիւնը պահպանելու համար, խախտումը հաւասար է անկման՝ - Բարի՛ լոյս պրն. Ռուբէն, ասելով կամաց առաջանում է դէպի սրահ, սակայն այս անգամ այլ տեսակ ստացուեց, նա ներս մտաւ, հանգիստ տեղ գրաւեց աթոռին եւ զրոյցի բռնուեցինք: Երկար ժամանակ էր նա միութիւն չէր գալիս, հետաքրքրուած իր վիճակից ու առողջութիւնից հարց տուի.*

*-Պրն. Յարութի՛ւն, բարի լոյս, բարի տեսանք, ո՞նց է ձեր առողջութիւնը, ո՞ւր էիր այս անցած ամիսների ընթացքում.*

*-Հիւանդ էի, սրտի տագնապ ունեցայ, թեթեւ գործողութեան ենթարկուեցի, բաթրի են դրել սրտիս, հիմա լաւ եմ զգում, գլխապտոյտս մօտաւորապէս անցել եւ կարողանում եմ քայլել.*

*-Անցած լինի, ուրախ եմ, քեզ առողջ եմ տեսնում, քեզ հոգ տար, որպէսզի այս ցրտերին չմրսես, շատ հիւանդութիւններ առաջանում են ցրտառութիւնից: Իրեն պատմում եմ իմ լսած կարճ պատմութիւնը Մխիթար Հերացու մասին՝*

*-Մխիթար Հերացին 11-12-րդ դարի բժիշկ էր, նա իր բժշկական տաղանդով ու գրած գրքերի շնորհիւ հռչակուեց՝ բժշկապետ: Նա մի օր ձիւն ձմեռ ժամանակ գիշերով գնում է հիւանդին տեսութեան: Հիւանդի ջերմը բուսադեղերով բուժելուց յետոյ տուն վերադարձի ճամբին մի հելուզակ նկատում է նրան ընտիր վերարկու հագին, առաջը բռնում է, առանց իմանալու նրա ինքնութիւնը, ով լինելը, մտադրում է՝ ինչ գնով եղել է նրա վերարկուին տէր դառնալ, մօտենում է բժշկապետին հրամայելով.*

*-Տո՛ւր ինձ այդ վերարկուն, եթէ ոչ քեզ կը սպանեմ:*

*-Հերացին այլայլուած պատահարից, սակայն չի կորցնում իրեն դառնալով երիտասարդին.*

*-Շատ լա՛ւ, քեզ կը տամ իմ վերարկուն, սակայն մի պայմանով՝ դու ինձ տուն հասցնելուց յետոյ վերարկուն կը ստանաս:*

*-Չ՝է, այդպէս անկարելի է, դու ուզում ես ինձ խաբե՞լ , քանի որ տուն հասնելուն պէս հարայհրոցով ձայն կը բարձրացնես եւ ինձ ձերբակալել կը տաս, չէ՛, հանի՛ր վերարկուն, եթէ ոչ այս դաշոյնով քեզ կը սպանեմ.*

*-Պատւովս եմ երդւում՝ որեւէ օգնութեան չդիմեմ, հենց որ հասանք, վերարկուն կը յանձնեմ:*

*Հելուզակը նկատելով նրա անդրդուելիութիւնը համաձայնւում է, միասին ճամբայ են ընկնում դէպի տուն: Սառնամանիք պարզկայ գիշեր է, գետինը ծածկուած է ձիւնով, լիալուսնի լոյսով ճամբան յայտնի է: Նրանք ձիւնը կոխկրտելով վռազ առաջ են գնում լուռ ու մունջ, Հերացին առջեւում, իսկ ետեւից հելուզակը: Հերացին ուրախ էր, որ երիտասարդ-աւազակը համաձայնուեց իրեն հետ, նա զուշաւոր քայլերով առաջ էր գնում, իսկ աւազակը մտատանջութեան մէջ էր, թէ ՝ արդեօ՞ք կը տիրանայ այդ վերարկուին: Տուն հասնելուն պէս Հերացին հանում է վերարկուն եւ մեկնում է նրան առանց աղմուկ-աղաղակ բարձրացնելով կամ խոստումը դրժելու որեւէ փորձ թոյլ չի տալիս : Հելուզակը առնում է վերարկուն, սակայն չի գնում, զարմացած հարց է տալիս.*

*-Ասէ՛ք, տեսնե՛մ, դուք ո՞վ էք, ինչո՞ւ ինձ բերիք մինչեւ այստեղ եւ առանց ինձ բռնանալու կամ մէկին կանչելու վերարկուն յանձնեցիք, այնպէս է երեւում, դուք սովորական մարդ չէք.*

*-Մխիթար Հերացին եմ, եթէ վերարկուն այնտեղ յանձնէի, այս սառնամանիքին պիտի մրսէի եւ հիւնդանայի, քանի որ շատ հիւանդութիւններ ցրտառութիւնից են առաջանում:*

*-Երիտասարդ - հելուզակը երբ լսում է պատուաւոր մարդ՝ Մխիթար Հերացու անունը ամօթից վերարկուն վերադարձնելով գլխակոր թողնում եւ հեռանում է:*

*Պրն. Յարութիւնը խօսում է դանդաղ՝ հազիւ լսելի նուազ ձայնով, զգալի դարձնելով ֆիզիքական տկարութիւնը: Նա ութանասունը անց միջակ հասակով, լիքը կազմուածքով, դանդաղաշարժ ծերահասակի համակրելի արտաքինով մի անձնաւորութիւն է, կոկիկ հագնւում է, գլխին ծաղատը ծածկող ֆրանսական տեսակի գլխարկը, աչքերին ակնոցը, հանդարտ ու լուրջ քայլուածքով միութիւն է գալիս, հանդիպում է ընկերներին, սրահում մի քանի ժամ նարդի է խաղում իր մշտական խաղընկերների հետ, ապա ճիշտ տասներկուսին ցտեսութիւն ասելով դարձեալ զգուշաւոր քայլերով նոյն մտքերի մէջ սուզուած թողնում եւ հեռանում է գաւազանը որպէս յենակ ձեռքին՝ կէսօրին կողակիցի մօտ լինելու համար:*

*Նա միութեան անդամ է: Միութիւն յաճախողները հանգստի կոչուած հայ տարեցներ են՝ տղամարդիկ շատ աւելի քան կանայք, որոնք մայր հայրենիքից եւ տարբեր գաղթօջախներից արտագաղթած հայեր են, մեծամասնութիւնը Իրանից, նրանցից շատերը իրենց կամեցողութեամբ չեն եկել, այլ՝ բերուել են զաւակների միջոցաւ, նաեւ որոշներին երեխաների կարօտն է քաշել դէպի այս ծովածաւալ երկիրը, դէպի այս ազատ երկիրը:*

*Պաշտօնիս բերումով, որպէս միութեան գրասենեակի վարիչ, յաճախ միութենականներից որոշների հետ մտերմիկ զրոյցի եմ նստում, նրանք իրենց անցեալի կեանքից յուշեր են պատմում, կարօտով են արտայայտւում իրենց լքած երկրի մասին.*

*-Ափսոս չէր մեր երկիրը, նրա ջրին, օդին, տաքին ու ցրտին, սարին ու ձորին, թփին ու ծառին, չորս եղանակներին ընտելացած էինք, կարեւորը այն որ լեզուն իմանում էինք, որտեղ ուզում էինք, մենակ ման էինք գալիս, ում տուն ցանկանում էինք՝ գնում էինք, քանի որ նրանք մեր շուրջն էին, մի թաղի մէջ էինք, այստեղ տարբեր է, այստեղ հարազատ չի, այստեղ սրտամօտիկ չի եւ Պրն. Յարութիւնը յաջողակ գործավար է եղել, նախքան Իրանի իսլամական յեղափոխութիւնը նա իր ձեռներէցութեան շնորհիւ կարողանում է սեփական աշխատանք եւ բարեկեցիկ վիճակ ստեղծել իր ընտանիքի համար: Նկատելով որ երեխաներն արդէն իսկ գտնւում են Ամերիկայում, ինք եւս կնոջ հետ Իրանից արտագաղթում են երեխաների մօտ:*

*Պրն. Յարութիւնը դիմացս հանգիստ ու խաղաղ նստած աչքերը դիմացի պատին յառած մտապատկերին ապաւինած պատմում է իր գործնառութեան ընթացքում պատահած մի անմոռանալի դէպքի մասին, այսպէս է սկսում.*

*-Ամրան եղանակ էր՝ Թեհրանի կէսօրուայ կիզիչ ժամանակը, երեք պարսիկ հայրենակիցներ, աւելի ճիշտ թրքախօսներ, բարձր-բարձր խօսելով ներս են մտնում իմ ճաշարանը եւ տեղ են գրաւում սեղանի շուրջը: Ճաշարանս գտնւում էր Թեհրանի այսօրուայ էնղէլաբ անուանւող բանուկ պողոտայի վրայ՝ չհասած Ֆերդոսի հրապարակին: Այս ճաշարանը բանում էր Թագաւորի օրօք, մատակարարում էինք սանդուիչներ, դոլմա, լեզու, ուղեղ եւ այլն առանց ալկոհոլիկ խմիչքի սեղանների վրայ, խմիչքը յաճախորդներին վաճառւում էր ճաշարանին միացած իմ նպարատնից տուն տանելու համար: Իրանի իսլամական յեղափոխութեան հենց առաջին օրուանից արգելուեց ալկոհոլիկ խմիչքը եւ բոլոր քաղաքների այն տեղերը՝ խանութները եւ ճաշարանները, ուր խմիչք էին մատակարարում եւ կամ վաճառւում՝ նրանց փեղկերը, ապակիները ջարդեցին, խմիչքները սրուակներով կոտրտեցին, խմիչքի գործարանները փակեցին՝ դասքանները ջարդելով, նիւթական մեծ վնասներ պատճառելով թէ՛ տէրերին, թէ՛ երկրի տնտեսութեան, այն համոզումով էր արւում այս գործը, իբր թէ իսլամական երկրում խմիչքի գործածութիւն չպիտի լինի, որն հակասում է իսլամ կրօնի շարիաթին:*

*Երբ մարդ դիմացը փոս է տեսնում, շրջանցում է այն, որպէսզի չընկնի մէջը եւ մարմնական վնաս չտեսնի: Մեր կեանքում ապականիչ երեւոյթներ անկասկած կան, սակայն գիտակցաբար խուսափում ենք նրանց հետեւանքը կործանիչ նկատելով:*

*Այստեղ ընդհատելով պրն. Յարութիւնին այդ ջարդ ու փշուր անելու դէպքերից մէկն եմ յիշում իմ ականատեսիս վկայութեամբ՝*

*-Մեր տան մօտիկ փողոցի վրայ գտնւող ճաշարանի ապակիները ջարդւում էին տիրոջ ներկայութեամբ, ջարդողները երեք իսլամ երիտասարդներ էին մզկիթից գործուղղուած, որոնք մահակներով նախ դռան ապակիները ջարդեցին, ապա՝ խմիչքների սրուակները, ամբոխ էր հաւաքուել եւ անտարբեր դիտում էր նրանց իբր թէ յեղափոխական այս արարքը: Նրանք գործը աւարտած լինելով դարձան դէպի հայ տիրոջ կոպտօրէն հրահանգելով՝*

*-Նայի՛ր եւ տե՛ս, սրանից յետոյ չի թոյլատրւում որեւէ մի տեսակ ալկոհոլիկ խմիչք վաճառել եւ գործածել, թէ՛ վաճառողները եւ թէ՛ գործածողները պատժի են ենթարկուելու:*

*Անշուշտ խմիչքի արգելման հրահանգը պաշտօնական էր, որի խախտողները ենթարկուելու էին պատժի, սակայն ոչ պատժողական վերաբերմունք ցուցաբերուեց ոչ իսլամների նկատմամբ նրանց արտօնելով օգտագործումը տներում իրենց պատրաստութեամբ առանց մուսուլմաններին վաճառելու: Այս օրէնքը յեղափոխութիւնից ի վեր գործադրւում է, անտեսողները պատժւում են՝ բանտարկուելով, դրամական տուժի ենթարկուելով եւ հրապարակաւ մտրակահարուելով : Հայերի համար այս մենաշնորհ օրէնքը՝ խմիչքի ազատ օգտագործելու օրէնքը մի շարք հայ ընտանիքներում առաջացրեցին բարդութիւններ:*

*Միջանկեալ խօսքս վերջացնելով դիմում եմ պրն. Յարութիւնին որպէսզի շարունակի.*

*-Ճաշարանում այնքան էլ յաճախորդներ չկային ամառուայ տօթի պատճառով, անմիջապէս մատուցողը նրանց է մօտենում եւ պատուէր է ստանում, շատ չանցած սեղանը նախշւում է պնակներով, բաժակներով եւ տեսակ-տեսակ ուտելիքներով:*

*-Նրանք թէ ուտում էին եւ թէ բարձրաձայն զրուցում առանց նկատի առնելով թէ ուր են գտնւում, կարծես վայրը մի տեսակ իրենց սեփականութիւնը համարելով եւ ներկաներին բոլորովին անտեսելով ու կարեւորութիւն չտալով: Նրանք լաւ կուշտ ու կուռ կերան, ծխախոտ վառելով ոտքի կանգնեցին եւ ճանապարհ ընկան:*

*-Ես դրամարկղի մօտ նստած հետեւում եմ նրանց:*

*-Մատուցողը մօտեցաւ նրանց եւ հաշիւ պահանջեց:*

*-Ներողութիւն պարոննե՛ր, ձեր հաշիւը 165 թուման կը լինի, խնդրեմ, վճարէք այս գումարը, ապա մեկնէք:*

*-Ի՞նչ հաշիւ, մենք տալացիք չենք եւ ոչ մի բան չենք վճարելու:*

*-Հիմա որ այդպէս է, խնդրեմ, գնացէք այն դիմացը տիրոջ մօտ եւ իրեն ասէք, որ չէք վճարում:*

*-Նրանք առանց ամաչելու անտարբեր քայլերով առաջացան եւ ներկայացան ինձ:*

*-Դուք էք այս ճաշարանի տէրը:*

*-Այո՛, ես եմ:*

*-Մուսիօ՛, ինչպէս տեսնում ես, այս երեք յաղթանդամներս քո ճաշարանում հաց ենք կերել, լաւ էլ ախորժակով սնուել եւ կշտացել ենք, հիմա էլ թողնում ենք ճաշարանդ առանց դրամը վճարելու:*

*-Ինչո՞ւ, միթէ ձեզ լաւ չծառայեցին, կամ ձեր կերած-խմածը լաւ չէր, որ չէք վճարում:*

*-Ամէն ինչը լաւ էր, սիրտներս ուզում է, որ չվճարենք:*

*-Շատ լաւ, բայց մի բան նկատի առէք, ձեր կերածը հալալ չի լինի, եթէ Աստուած կայ վերեւում, թող նա մի բան անի, գնացէք, փող չեմ ուզում:*

*-Հայի հացը մեզ համար շատ էլ հալալ է, շատ էլ խօսես...*

*-Նրանք կարծես մի ընդհարումից յաղթական խանութից դուրս նետուեցին խառնուելով անց ու դարձ անողների մէջ, ես ապշել եւ քար էի կտրել, առաջին անգամն էր, որ այսպիսի դէպքի դէմյանդիման էի գտնւում, անշուշտ պատահել էր, որ դրամ չէին ունենում, սակայն խնդրելով ներում էին իրենց, բայց այս մէկն ինձ շուարեցրեց, չիմացայ ինչ տեսակ դիմադրութիւն ցոյց տամ, այդպէս հանգիստ նրանց թողեցի գնան: Ես ինձ նուաստացած էի զգում պարսիկ գործաւորներիս մօտ, որ նրանց հախից դուրս չեկայ, վախենալով կռուից ու հետեւանքից, սակայն սխալ թոյլ տուեցի, որեւէ գնով նրանցից պիտի պահանջէի իմ իրա-*

*Շար.ը էջ 19*

## ՍՈՎՈՐԱԿԱՆ ՀԵՔԻԱԹԸ ԿՐՆԱՅ ԸԼԼԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ՀՈԳԵԲՈՒԺՈՒԹԵԱՆ ՁԵՒ

*21-րդ դարը ծնողներուն կը սորվեցնէ երեխաներու դաստիարակութիւնը ուղղել դէպի գիտակցութեան զարգացում, ճանաչողական եւ կամային գործընթացներ: Բայց թէ՛ մեծերու, թէ՛ փոքրերու ներքին աշխարհին մէջ կայ ենթագիտակցութիւն, յուզմունքներ ու զգացումներ՝ ներքին աշխարհի այն մասը, որ յաճախ կը դառնայ ջղային ճգնաժամերու, ճնշումներու եւ անքնութեան պատճառ նոյնիսկ մեծերու մօտ:*

*Օրինակ, Հնդկաստանի մէջ, ուր գոյութիւն ունի մարդու ներքին հոգեկան աշխարհի հանդէպ ուշադրութեան հնագոյն աւանդոյթ, հեքիաթը կը կիրառուի իբրեւ հոգեբուժութեան միջոց: Ներթափանցելով հեքիաթային աշխարհ՝ երեխան կը թափանցէ սեփական հոգիին խորքերը եւ հեքիաթի միջոցով կը սկսի կարգաւորել զայն:*

*Մինչեւ գրի առնուիլը, հեքիաթը պատմուած է միլիոնաւոր անգամ, եւ անէական բաները կորսուած են, մնացած է միայն ամենագլխաւորը, որ հեքիաթը դարձուցած է մարդկային իմաստութեան գոհար: Փոքրիկները կը շնչաւորեն բնութեան երե ւոյթները, կենդանիներն ու բոյսերը, այս պատճառով դիւրութեամբ կը հասկնան հեքիաթներու լեզուն: Հեքիաթի հերոսները պարզ եւ օրինակելի են, հեքիաթին մէջ միշտ բարին կը յաղթէ չարին, բարոյական հասկացութիւնները կը փոխանցուին հասկնալի կերպով:*

*Փոքրիկը կրնայ լսել հեքիաթը սկաւառակով, դիտել հեռուստատեսութեամբ, բայց ամենալաւ տարբերակը երեխային նայելով պատմելն է, անոր հարցերուն պատասխանելը: Այս կերպով կրնաք նկատել, թէ ան անձնային աճի ո՞ր աստիճանը չի կրնար յաղթահարել: Այդ պարագային կրնաք պատմել համապատասխան հեքիաթ կամ անոր ամենասիրելի հեքիաթը:*

*Անփայլ մաշկ՝ ամրան ընթացքին*

*Գեղեցիկ տեսք ունենալը բաւական պարզ արուեստ է: Գիտնալով խնամուած կնոջ քանի մը կանոն՝ կարելի է որեւէ կարգավիճակի ու տարիքի մէջ եւ արտաքին տուեալներով միշտ գրաւիչ ըլլալ: Ամառը շատ ուրախութիւններ կը բերէ, բայց կան նաեւ անյարմարութիւններ եւ անոնցմէ մէկը մաշկի իւղոտ փայլն է:*

*Ամրան ընթացքին մաշկը անփայլ պահելը բարդ խնդիր է, յատկապէս եթէ անիկա իւղոտելու հակում ունի: Այս խնդիրը կը պահանջէ համապարփակ մօտեցում, քանի որ մէկ միջոցը երկարատեւ եւ տեսանելի արդիւնք չի տար: Հետեւելով յստակ ծրագրի՝ կարելի է հիանալի արդիւնքի հասնիլ եւ ոչ միայն ամրան ընթացքին մաշկը անփայլ դարձնել, այլեւ՝ առողջացնել զայն:*

## ԿԵԱՆՔԸ ԲԱՐԵԼԱՒԵԼՈՒ 11 ՆԱԽԱՊԱՅՄԱՆ

*1. Սորվեցէ՛ք անցեալի սխալներէն, այնուհետեւ շատ արագ ձգեցէք զանոնք անցեալի մէջ: Անցեալի սխալները պէտք է միայն օգնեն ապագան կառուցելու, այլ ոչ թէ՝ կրել այդ բեռը ամբողջ կեանքի ընթացքին:*

*2. Կեդրոնացէք ա՛յն բաներուն վրայ, որոնք իրօք կարեւոր են: Շատ կարեւոր նպատակներ դրէք ձեր առջեւ եւ մէկ կողմ ձգեցէք մնացեալը:*

*3. Արտադրողականութիւնը աշխատանքային զբաղուածութենէն կարեւոր է: Ուղղակի որեւէ բան ընելը դեռ քիչ է, պէտք է ընել այն, ինչ որ պէտք է, որուն արդիւնքը միշտ աւելի կարեւոր է, քան՝ անոր վրայ ծախսուած ժամանակը:*

*4. Տուէ՛ք, որպէսզի ստանաք: Որեւէ իրավիճակի մէջ յայտնուելով՝ մարդիկ կրնան աւելին ստանալ այլ մարդոցմէ, երբ իրենք ալ պատրաստակամ ըլլան աւելին ընելու:*

*5. Պէտք չէ՛ յարմարիլ բոլորին: Մի՛ փորձէք անձնատուր ըլլալ եւ ձգտիլ ընկերութիւն ընել բոլորի հետ: Աւելի կարեւոր է՝ պահպանել իրական մտերիմ յարաբերութիւնները:*

*6. Հետեւեցէ՛ք սրտի կանչին: Անկե՛ղծ եղէք սեփական անձին եւ միւսներուն հետ, մի՛ դաւաճանէք, մի՛ ստէք, կատարեցէք ճիշդ քայլեր, քանի որ այդպէս ապրիլը շատ աւելի դիւրին է:*

*7. Կարգուկանո՛ն ստեղծեցէք ձեր շուրջը: Ձերբազատուեցէ՛ք այն իրերէն, զորս չէք օգտագործեր, իսկ մնացեալը դասաւորեցէք համապատասխան տեղեր:*

*8. Աշխատեցէք արդիւնաւէտ ըլլալ: Եթէ միշտ գործէք այնպէս, ինչպէս կը գործէք, փոփոխութիւններ տեղի չեն ունենար:*

*9. Ո՛չ ամէն ինչը եւ ո՛չ միշտ պէտք է կատարեալ ըլլայ: Ժպտացէ՛ք առաջին իսկ հնարաւորութեան պարագային, ո՛չ թէ անոր համար, որ կեանքը իտէալական է, այլ՝ որ ատիկա ձեր ընտրութիւնն է:*

*10. Ձերբազատուեցէ՛ք բացասական յուզմունքներէ եւ այն մարդոցմէ, որոնք կը հանդիսանան անոր աղբիւրը: Ընտրեցէք այնպիսի՛ ընկերներ, որոնցմով կարելի է հպարտանալ, որոնք ձեր օրը լուսաւոր կը դարձնեն իրենց ներկայութեամբ:*

*11. Մոռցէ՛ք այն բանի մասին, թէ ինչ կը մտածեն ձեր մասին եւ ինչ սպասումներ ունին ձեզմէ: Երբեմն իրապէս ազատ եւ երջանիկ են այն մարդիկ, որոնք հաշուի չեն առներ, թէ ինչ կը մտածեն միւսները:*




## Ի՞ՆՉ Կ'ԸՍԷ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ ՍՈԽԻ ՄԱՍԻՆ

*Սոխը լաւ է շնչառական եւ դիմադրողական համակարգերուն համար: Անիկա ունի հակապաքթերիական եւ հակասնկային յատկութիւններ եւ զօրաւոր հակառակորդ է բորբոքային հիւանդութիւններու: Սոխը կրնայ կանխել կամ տկարացնել շարք մը շնչառական հիւանդութիւններ, որոնց մէջ են նաեւ շնչարգելութիւնը եւ պրոնխիտները (ցնցղատապ): Սոխը լաւ ազդեցութիւն ունի նաեւ թոքերուն վրայ. շատերը կը պնդեն, որ անիկա կ'օգնէ մարմնին պայքարելու թոքաբորբի եւ, նոյնիսկ, թոքախտի դէմ:*

*Ժամանակակից բժշկութեան մէջ սոխը առաջին հերթին կ'օգտագործուի իբրեւ խորխաբեր: Զայն նաեւ կ'օգտագործեն տարբեր տեսակի վէրքերու՝ բորբոքումներու կանխման համար:*

*Սոխը կը նպաստէ ձեր աղիքներուն մէջ «լաւ» մանրէներու արագ բազմացման եւ կը պայքարի «վատ» մանրէներու դէմ:*

*Սոխը նաեւ կը սպաննէ ձեր աղիքներուն մէջ գտնուող որդերն ու այլ մակաբոյծները: Անիկա կը բարելաւէ մարսողութիւնը եւ կ'օգնէ կարգաւորելու կշիռքն ու կը կանխէ գիրութիւնը:*

*Հետազօտութիւնները ցոյց տուած են, որ մարդիկ, որոնք աւելի յաճախ կ'օգտագործեն սոխ, աւելի հազուադէպ ուռուցքներ կ'ունենան: Իսկ մարսողութեան համակարգին մէջ ուռուցքներ անոնց գրեթէ չեն հանդիպիր:*

*Սոխը լաւ է նաեւ սրտանօթային համակարգին համար: Անիկա կ'իջեցնէ քոլեսթերոլի մակարդակը արեան մէջ եւ ճնշումը, կը մաքրէ արիւնը եւ կ'առողջացնէ զարկերակները՝ կանխելով շարք մը սրտանօթային հիւանդութիւններ:*

*Ինչպէս եւ բոլոր (նոյնիսկ բնական) դեղամիջոցները, սոխը կարելի չէ չափէն աւելի ուտել, քանի որ անոր չարաշահումը կրնայ վնասել ձեր ստամոքսին:*

## ՏՂԱՄԱ՞ՐԴՆ Է ԱՒԵԼԻ ՆԱԽԱՆՁՈՏ, ԹԷ՞ ԿԻՆԸ

*Բրիտանացի գիտնականները որոշած են պարզել, թէ ո՞վ աւելի շատ իր կողակիցէն կը կասկածի դաւաճանութեան մէջ՝ տղամա՞րդը, թէ՞ կինը:*

*Անոնք հարցաշարով դիմած են միջին տարիքի 910 ամուսնացած զոյգերու, որուն իբրեւ արդիւնք պարզած, որ կիները աւելի շատ կը կասկածին ամուսիններէն դաւաճանութեան մէջ՝ փորձելով ամէն գնով պարզել իրողութիւնը:*

*Կիներուն 14 տոկոսը՝ ամուսիններէն գաղտնի՝ կը կարդայ անոնց ելեկտրոնային նամակները, 13 տոկոսն ալ թաքուն կը պատասխանէ անոնց նամակներուն:*

*Ինչ կը վերաբերի տղամարդոց, ուստի անոնցմէ քիչերն են, որոնք կը դիմեն նման քայլերու:*

*Մասնագէտները մասնաւորապէս զարմացած են, որ կիներուն մեծամասնութիւնը, հակառակ համակարգիչին տիրապետելու գիտելիքներու պակասին ու բարդութիւններուն, յաղթահարած են բոլոր խոչընդոտները՝ ամուսիններին հետեւելու համար:*

## ԸՆՏԱՆԵԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԱՐՑԵՐԸ ԵՒ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

*Journal of Occupational and Organizational Psychology ամսաթերթին համաձայն՝ աշխատանքային ժամերուն ընթցքին ընտանեկան հարցերու մտահոգութիւնը կրնայ բարձրացնել գործընկերներու հետ վիճաբանութեան հաւանականութիւնը: Իսկ աշխատանքային կեանքին մէջ հարցերը կրնան իրենց կարգին հարցեր ստեղծել կողակիցին հետ՝ վատթարացնելով ընտանեկան կեանքը:*

*Բրիտանիոյ եւ Սպանիոյ մէջ գտնուող զոյգ համալսարաններու հետազօտական խումբը մասնակիցներէն խնդրած է ամբողջացնել հարցարաններ՝ առնչուած իրենց ընտանեկան եւ աշխատանքային կեանքի մէջ դժուարութիւններու: Անոնք փորձած են յայտնաբերել թէ ընտանեկան հարցերը որքա՞նով կրնան ազդել աշխատանքային կեանքի առողջութեան վրայ:*

*Ուսումնասիրութեան հեղինակներէն մէկուն համաձայն՝ աշխատանքային հարցերու գծով նախապէս կատարուած բազմաթիւ ուսումնասիրութիւններ ցոյց տուած են թէ պահանջկոտ աշխատանքները, պատասխանատուութեան անյստակութիւնները, աշխատանքային երկար ժամերը եւ աշխատանքային անապահովութիւնը կրնան պատճառ դառնալ գործընկերներու միջեւ յաճախակի վիճաբանութիւններու:*

*Այս ուսումնասիրութեան մաս կազմեցին 80 զոյգեր, որոնք կ'աշխատին 25 տարբեր հաստատութիւններու մէջ: Մասնակիցներուն միջին տարիքը կը հասնի 42-ի: Աւելցնենք, որ մասնակիցներուն մեծ մասը (70 առ հարիւր համեմատութիւնը) ունէին առնուազն մէկ զաւակ:*

*Ուսումնասիրութեան ընթացքին գործի հետ կապուած հարցերը կը քննուէին կէսօրէ ետք, իսկ անձնական կեանքի եւ ընտանեկան հարցերը՝ երեկոյեան: Հետազօտները յայտնաբերեցին թէ ընտանեկան հարցերը կրնան պատճառ դառնալ որ մարդիկ թերանան կեդրոնանալու իրենց աշխատանքին վրայ: Այս թերացումը առաջին հերթին կ'անհանգստացնէ անհատը եւ ապա կրնայ պատճառ դառնալ գործընկերներու միջեւ անհասկացողութեան եւ վիճաբանութիւններու: Աշխատանքային կեանքին մէջ տեղի ունեցող դժուարութիւնները կրնան նաեւ նոր հարցեր ստեղծել անհատի ընտանեկան կեանքին մէջ, յատկապէս իր ամէնէն մտերիմ անհատներուն հետ:*

**www.massispost.com**
**daily news updates**

## ԳՈՐԾԻ ԺԱՄՆ Է

*Շարունակուած էջ 6-էն*

գիտէ՝ մէկ տարուայ կամ աւելի, հարց չէ: Միա՛յն նիւթականով խնդիրը (խնդիրները) չի լուծուիր: Պէտք է աւելի հեռատես ըլլալ:

Ցարդ, Սփիւռքի մէջ հայապահպանման համար տարուած տեսակարար բոլոր աշխատանքները միայն գնահատել կարելի է: Թուրքի եաթաղանէն ազատուած հայ մամիկներ, դեռ սուրիական անապատին մէջ, անօթի, ծարաւ, մոռնալով իրենց մարմնական ու հոգեկան ցաւերը, հայապահպանման գործընթացին հիմը դրին, երբ աւազի վրայ Այբ, Բեն, Գիմ սկսան սորվեցնել հայ մանուկներուն: Մենք յիսուն ինն տարի եւ յաւետեան, այդ մամիկներուն յիշատակը օրհնելով, գործը, աւելի ճիւղաւորուած, շարունակեցինք ու պիտի շարունակենք:

Այդ ուղղութեամբ իրագործուած բոլոր աշխատանքները եւ զանոնք իրագործողները բացարձակ գնահատանքի կ'արժանացնենք:

Սակայն ներկայիս, մենք աւելիին պէտք ունինք:

Հայ ժողովուրդը պէտք ունի իրեն յատուկ ու միայն իրեն համար ստեղծուած միջոցի մը: Առածը կ'ըսէ. "Եթէ եղունգ ունիս, գլուխդ քերէ": Ո՛չ ոք մեզ պիտի պաշտպանէ: Դատարկ խոստումներուն համը առեր ենք: Զմտածենք, որ ասկէ վերջ կրնայ տարբեր ըլլալ: Մեծ պետութիւնները մեզմէ ո՛չ մէկ շահ ունին, որովհետեւ մենք ոչինչ ունինք իրենց տալիք: Փոքր ազգ մը, առանց հարստութեան, տկար ու անզօր: Ինչո՞ւ պիտի պաշտպանեն մեզ: Որովհետեւ մեր դատը արդա՞ր է: ԱՐԴԱՐ, ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ, տկարին յատուկ քնաբեր դեղեր: Կարեւորը ԻՐԱԽՈՒՆՔն է եւ իրաւունքը զօրաւորինն է: Ուրեմն մենք անհրաժեշտ է, որ ազգովին զօրանանք, հզօրանանք: Մեծ բանաստեղծ Եղիշէ Չարենց, տեղին, մեզի պատգամեց. "Հայ ժողովուրդ, քո զօրութիւնը քո հաւաքական ույժի մէջ է":

Այո՛, այդ հաւաքական ույժը դրսեւորուելու համար պէտք ունի իրեն յատուկ ու միայն իրեն համար ստեղծուած միջոցի մը: Գիտութեան բոլոր մարզերուն մէջ առաջին կարգի մասնագէտներ շատ ունինք: Բոլորն ալ բնականաբար իրենց մասնագիտութեամբ կը զօրացնեն այն երկիրը, ուր կ'ապրին, որուն քաղաքացին են: Վստահաբար անոնց մեծամասնութիւնը, եթէ ո՛չ բոլորը, սիրով պիտի յօժարին իրենց ազգին ալ օգտակար ըլլալ, եթէ այդ առնչութեամբ իրենց դիմողներ ունենան, որոնք պաշտօնապէս լիազօրուած ըլլան հայ ժողովուրդէն:

Նա՛խ քան 2015-ի Ապրիլ 24-ը, պէտք է լուծում մը գտնենք պաշտպանելու հայու ֆիզիքական գոյութիւնը ե՛ւ սփիւռքի ե՛ւ հայրենիքի մէջ: Զի՛ բաւեր ցոյցի համար ժողովներ ու համագումարներ կազմակերպել, ապա՝ հաղորդագրութիւն մը հրապարակել, կոչ մը ուղղել ու վերջ: Հայ ժողովուրդը պէտք ունի անշահախնդի՛ր, անձնուրա՛ց, նուիրեա՛լ, գործունեա՛յ գէթ տասը բանիմաց ՃՇՄԱՐԻՏ ՀԱՅՐԵՆԱՍԷՐներու, որոնք ոգի ի բուին աշխատին գտնել եւ քով քովի բերել մեր թնճուկին լուծում մը տալու պատրաստ իրա՛ւ մասնագէտները:

Մենք պէտք ունինք այդ միջոցին. մեր շուրջը եղող նիւթերով պատրաստուած, պարզ, սակայն ազդու, որ կարենայ մեզ պաշտպանել մեր թշնամիներէն: Պէտք է ցոյց տանք աշխարհին, Հակառակ մեր փոքր թիւին, ունինք մենք զմեզ պաշտպանելու կամքն ու միջոցը: Փոքր ազգ մըն ենք այսօր, բայց մեծնալու, շատանալու ընթացքի մէջ ենք: Հայու անմրցելի

ուղեղին հետ անոր անհատնում երեւակայութիւնը խառնելով, ես կը հաւատամ, մենք կը հզօրանանք ու մնալով հանդերձ օրինակելի քաղաքացի այն երկրին, ուր կ'ապրինք, մեր ամբարած զօրութեամբ, լսելի պիտի դառնանք:

Հայ ժողովուրդը ներկայացնող իբրեւ պաշտօնական մարմին, ըստ ինծի, կրնանք ունենալ միայն աւանդական մեր երեք կուսակցութիւններէն կազմուած, հաւատքո՛վ լեցուած, մեր ժողովուրդին ապագային համար տուչորող՝ ժողով մը, որուն վզին պարտքը պիտի ըլլայ գտնել ՄԱՍՆԱԳԷՏները ու զանոնք գործի լծել: Որքա՜ն փափաքելի պիտի ըլլար 2015-ի Ապրիլ 24-էն առաջ Թուրքին եռանդը ջլատելու եւ գոյատեւելու որոշումին շօշափելի փաստը անոր ներկայացնելու մեր նպատակին հասնէինք : Թուլամորթութիւնը տկարներուն համար է: ՀԱՅ ԴԱՏին յաղթանակը հայ ժողովուրդին զօրութեա՛ն մէջ է: Ո՛յժն է, որ կը պարտադրէ ինքզինք: Օ՛ն, ԳՈՐԾԻ ԺԱՄՆ է:

## ՅՈԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՀԱՄԵՐԳԱՇԱՐ

*Շարունակուած էջ 15-էն*

կարողանայ վարակել նաեւ դահլիճում նստածներին:

«Արամ Խաչատրեան» համերգասրահում Յունիսի 20-ի համերգային ծրագիրը երեւոյթ էր մեր երաժշտական կեանքում: Ներկայ պրոֆեսիոնալ երաժիշտները, երաժշտագէտները, բնականաբար ընկալման տարբեր մակարդակներով, նշում էին համերգի յաջողութիւնն ու գեղեցկութիւնը, նրա կարեւորութիւնը: Զրուցակիցներս (Աննա Արեւշատեան, Երուանդ Երկանեան, Հենրիկ Էդոյեան) միակարծիք էին, որ գաղափարական, փիլիսոփայական շերտերով յագեցած Վագների ստեղծագործութիւնների կատարումը երաժշտական աշխարհում առհասարակ կարեւոր իրադարձութիւն է համարւում, իսկ մեզ համար առաւել եւս, քանի որ մեր բեմում Վագներ գրեթէ չի հնչել: Նկատի ունենալով յատկապէս այն հանգամանքը, որ կոմպոզիտորի գործերի ամբողջական կատարումը շատ հազուադէպ երեւոյթ է գրեթէ ամէնուրեք, Զաւէն Վարդանեանի այս նախաձեռնութիւնը իսկապէս դրուատանքի ու համակրանքի արժանացաւ՝ «պատիւ բերող համերգ՝ իւրաքանչիւր երկրի, դիրիժորի եւ նուագախմբի համար»: Նշուեց նուագախմբի պատշաճ հնչողութիւնը՝ նոյնիսկ այդքան սակաւաքանակ փորձերից յետոյ եւ վագներեան օպերային երգեցողութեան փորձի գրեթէ բացակայութեամբ՝ վոկալիստների մասնակցութեան քաջութիւնը եւ որոշակի յաջողութիւնը: Կարեւոր համարուեց Վագների երաժշտութեանը աւելի յաճախ անդրադառնալու անհրաժեշտութիւնը, մանաւանդ որ նախապայմանը կայ՝ «կայ այն դիրիժորը, որը վագներեան երաժշտութեան ջատագովն է եւ ունի համապատասխան կատարողական կուլտուրա»:

...Մինչ համերգը դիրիժորի հետ զրոյցի յատկապէս մի քանի պահեր յիշողութեանս մէջ մնացին անդարձ. ես զարմացած էի պահի մէջ առօրեայ իրականութիւնից վերացարկուելու եւ այլ ժամանակի (վագներեան) մէջ յայտնուելու նրա ներքին ունակութիւնից, տպաւորուած էի, բայց առաւել եւս ուսանելի էր ոչ միայն դարաշրջանի գեղագիտական-գեղարուեստական հոսանքների, փիլիսոփայական ուղղութիւնների նրա իմացութիւնը, այլ նաեւ պատմական իրադարձութիւնների լաւատեղեակութիւնը: Երբ խօսում էր երաժշտութեան, արուեստի՝ բնութիւնից ներշնչուող հզօր ուժի մասին, ասես ականատեսն էր դարձնում բնութեան տարերքին, երբ նկարագրում էր գերմանական բնաշխարհը, Հռենոսի սրբազան ջրերի մէջ ասես գերմանական հինաւուրց ազգի ոգին էր ալեկոծւում, լսւում էին երաժշտութեան խռովայոյզ հնթիւնները...

Համերգից յետոյ կուլիսների հետեւում շնորհաւորանքի պահն է՝ ջերմ, զուսպ, կամ այլ.- հարցնել թէ սպասելիքն իրականացաւ, պէտք չէ, որովհետեւ «բեմը» դեռ շարունակւում է, երաժշտութիւնը դեռ չի աւարտուել:

Աւելի ուշ այս հարցին նա կը պատասխանի իհարկէ.

«Ես բառեր չեմ գտնում արտայայտելու շնորհակալութեան այն չափը, որն ունեմ նուագախմբի արտիստների հանդէպ: Նոտաները նրանք տեսնում էին առաջին անգամ, երաժշտութիւնը շատերը չգիտէին: Բայց հանդէս բերին մեծ համբերութիւն եւ առաւելագոյնս կատարեցին պրոֆեսիոնալ արտիստի իրենց գործը՝ այն էլ հերթական համերգից յետոյ, առանց հանգստի եւ այդ բարդագոյն ծրագրի համար նախատեսուած...չորս փորձով: Չնայեած մանր թերութիւններին, նուագախումբը հնչեց մոնոլիտ, մոնումենտալ, կարողացաւ պահպանել ու արտայայտել երաժշտութեան ոգին: Այս ամէնը նկատի ունենալով կարող եմ ասել, որ նուագախումբը սխրանք գործեց: Սա շատ թանկ է ինձ համար»:

## ԱՊԱՔԻՆՄԱՆ ՄԱՂԹԱՆՔ

«Արսէն Կիտուր» մասնաճիւղը շուտափոյթ ապաքինում կը մաղթէ իր անդամուհիներէն՝ ընկերուհի Անի Պէքարեանին, որ ապաքինման շրջան կը բոլորէ իր տան մէջ, արկածէ մը ետք:

VA Print Media
Book Printing • Hard Covers • Year Books
Restoration of Old Books & Bibles
Նոր Գիրքերու Տպագրութեան եւ
Հին Գիրքերու Նորոգութեան Համար
Հեռաձայնել՝ ՎԱՀԷ ԱՃԱՊԱՀԵԱՆԻՆ

Vahe Atchabahian
1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104
Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924
vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com

ՎԱՐՁՈՒ ԽԱՆՈՒԹ
Փասատինայի հայկական շրջանին մէջ
յարմար պայմաններով վարձու է
որեւէ գործի համար: 1300 sq. feet,
վարձքը՝ $1,200 տոլար:
1442 E. Washington Blvd., Pasadena, CA 91104
Մանրամասնութեան համար հեռաձայնել՝
(626) 538-5454

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 F: (626) 797-6863

# ԽՂՃԻ ՁԱՅՆԸ

*Շարունակուած էջ 16-էն*

ւունքս, նոյնիսկ ոստիկանութիւն կանչելով, ամենայնդէպս չպիտի թոյլ տայի, որ գնան, սա պիտի վերագրել իմ թուլութեան եւ վախկոտութեան, իրաւունքը ինչ գնով եղել է՝ պէտք է առնել, քաղաքավարութեամբ չեղաւ, ուժով պէտք է առնել:

-Համաձայն եմ պրն. Յարութիւն, մենք հայերս մեր պատմութեան ընթացքում շարունակ մեր թշնամիներին գիջել ենք, որ այս խեղճ պայմաններում ենք յայտնուել, ծովածաւալ երկրից մնացել է մի պուճուր եւ մեր ժողովուրդը ցիր ու ցան աշխարհի չորս ծագերում:

-Այս պատմութիւնը ժամանակի թաւալման հետ մոռացուելու վրայ էր, երբ խանութում դրամարկղի մօտ նստած հաշիւներ էի անում, տեսայ մի մարդ դժգոյն ու հիւծուած խառնաշփոթ վիճակում մօտեցաւ ինձ ասելով:

-Մուսիօ՛, եկել եմ իմ պարտքս վճարել:

-Ներողութիւն ինչ պարտք, դու ո՞վ ես:

-Ես այն երեք մարդկանցից մէկն եմ, որ չորս-հինգ ամիս առաջ եկանք այստեղ, կերանք եւ լաւ էլ կշտացանք առանց հաշիւը վճարելով, քեզ ծաղրելով ու սպառնալով թողինք ու հեռացանք:

-Լաւ խորացայ մարդու դէմքին, տեսայ ճիշտ է ասում, Նրանցից մէկն է:

-Ինչ պատահեց, որ եկար ձեր պարտքը վճարելու:

-Մուսիօ՛, էն օրը դու մարգարէացար, երանի լսէինք քեզ եւ դրամը վճարէինք, գող եւ մոլեռանդ մարդիկ են յաճախ փորձանքի ենթարկւում, ճիշտ ասացիր, որ այդ հացը հալալ չի լինի, իրօք էլ այդպէս եղաւ, մեծ փորձանք պատահեց մեզ մահուան գնով:

-Պատմի՛ր, տեսնենք, ինչ եղաւ, ինչ կատարուեց ձեր հետ:

-Այդ օրը մենք մեր սեփական ինքնաշարժով գնում էինք Նէյշափուռ, մեքենան մեր մեծ ընկեր Հասանն էր քշում, շատ ուրախ էինք, որ հայի հացը կերել ենք առանց փող վճարելու եւ մեր անեկդոտներով հայերին ծաղրում, նրանց վրայ ծիծաղում եւ այսպէս զուարճանում էինք: Մեքենան հարազի ճամբից սլանում էր դէպի առաջ, ուշ գիշեր էր, ճամբան գնում էր բարձրաբերձ սարերի միջից, ամէն տեղ խաւարն էր տիրապետում, խցիկի ապակիներից դուրսը բան չէր երեւում, միայն ճամբան լուսաւորւում էր ինքնաշարժի լոյսով, դեռ կտրելիք ճամբայ շատ ունէինք, անցել էինք Գորգանը, ես մեքենայի խցիկի ետեւի աթոռին էի նստած, երեւում էր մեր մեքենավար Հասանը յոգնած է եւ աչքերը մերթ ընդ մերթ փակւում են, զգուշացրի իրեն, որ գնանք մի տեղում հանգստանանք, այդ մտքին էինք, մէկ էլ նկատեցի Հասանը մեր առջեւի ծանրաքարշից, որը ծանր բեռի տակ կքած շատ դանդաղ էր գնում, վազ անց կատարեց, միայն երկու մեքենաների բախումի ուժգին ձայնը լսեցի, էլ չիմացայ, ինչ պատահեց, մէկ էլ աչքերս բացեմ, տեսնեմ, հիւանդանոցումն եմ ոտքս եւ թեւս գաչի մէջ, հարց ու փորց արեցի ընկերներիս մասին, ցաւօք տեղեկացրին, թէ նրանց հիւանդանոց տեղափոխելու ճամբին մահացել են:

-Ես ամէն ինչ թողած ուշ ի ուշոյ լսում էի նրան, իմանալով ընկերների մահուան մասին տխրեցի ասելով.

-Շատ եմ ցաւում այդ դէպքի համար, թող Աստուած իրենց մեղքերը ների.

-Այդ վթարից յետոյ գիշերները հանգիստ քուն չունեմ, անընդհատ սարսափելի երազների մէջ տանջւում ու տառապում եմ, մեքենայի արկածից իմ մահացած ընկերներս են աչքիս առջեւը գալիս, քեզ չվճարած փողի համար դատարան են տանում, ծեծում են, թուք ու մուր են անում, այսպիսի քառսային գիշերներ եմ անցկացնում, այս բժշկի մօտ, այն բժշկի մօտ, քնաբեր դեղերով ինձ տուն են ճամբում: Մուսիօ՛, տե՛ս, ինչ եմ նիհարել եւ տկարացել: Բժիշկներից խէր չտեսայ, կեանքը ինձ համար դարձել է ուղղակի դժոխք, մի քանի գիշեր առաջ երազումս մի սպիտակահեր ծերունի երեւաց, որը ինձ խորհուրդ տալով պատուիրեց.

-Ես լաւապէս իմանում եմ քո հիւանդութեան եւ տանջուելուդ պատճառը, դու շատ մեծ մեղք ես գործել, այն հային անտեղի վիրաւորել, անօրինաբար ձրիակերութիւն ես արել, սպառնացել եւ զօռ ես ասել առանց իմանալու, որ քեզանից աւելի հզօրը կայ այս աշխարհում քեզ պատժելու համար, պարսկերէն ասաց՝ դաստէ բալա դաստ բսիար ասթ ( քեզանից շատ աւելի ուժեղն էլ կայ ), եթէ ուզում ես ազատուել այդ ցաւից, մղձաւանջից, կը գնաս այդ Աստծու արարած՝ հայի մօտ, ներողութիւն կը խնդրես, ձեռքը կը համբուրես, պարտքդ կը տաս, միայն այս դէպքում խիղճդ կը հանգստանայ եւ կը փրկուես այս վիճակից: Վերկա՛ց, գնա՛ նրա մօտ, եթէ ուզում ես ազատուել այս տարտարոսից...

-Ահաւասիկ մուսիօ եկել եմ իմ պարտքս վճարել, ահա՛, այն գումարը, աղաչում եմ, ներէք ինձ եւ նաեւ իմ հանգուցեալ ընկերներին, որպէսզի նրանց հոգին եւս խաղաղուի, արդարեւ մեր արածը հետեւանք էր սխալ նախապաշարուածութեան հայերի նկատմամբ:

-Շատ ուրախ եմ, որ անդրադարձել ես քո սխալին, այն տհաճ վերաբերմունքին, որ ունեցաք իմ հանդէպ, ես ով եմ, որ ներեմ քեզ, թող Աստուած ների:

-Շնորհակալ եմ մուսիօ՛, հիմա զգում եմ խիղճս այդ ծանր բեռից թեթեւացած, մնաք բարով:

-Երթաս բարով:

Այս դէպքը ինձ գցեց մտորումների մէջ, յիշեցի մեր հայերի ջարդն ու կոտորածը 1915-1923 թուականներին թուրքերի միջոցաւ եւ հարց տուի ինձ՝ -արդեօ՞ք այդ անմեղ հայերին կոտորողներն յետոյ հոգեկան ինչ վիճակ են ստացել, արդեօ՞ք չեն տանջուել ու տառապել իրենց կատարած ահասարսուռ արարքի համար, վստահօրէն եղել են ազնիւ եւ մարդասէր մարդիկ, որոնք մեղայի եւ զղջանքի գրքեր են գրել, սակայն իրար յաջորդող թուրք մոլեռանդ պետութիւնները խստիւ առաջը բռնել են եւ նրանց զղջանքի եւ մեղայի գալու հոգեբանութեան տարածման դէմ են կանգնել իրենց հակահայ քարոզչութիւններով եւ նրանց լռեցրել են:

Ես համոզուած եմ, որ արդարութիւնը անկասկած կը յաղթի, փաստը մեր դատի համար հետեւողական աշխատանքը եւ պայքարը, որը ի շահ մեզ արդիւնաւորւում է թիւրքերի մէջ խղճի ձայնի արթնացման հետեւանքով, որը հետզհետէ աւելի թափ կը ստանայ եւ կը տարածուի:

Հրանդ Տինքի արդարութեան համար մղւող ձայնը փամփուշտի լեզւով լռեցնող եւ աշխատանքը կասեցնող թուրք մոլեռանդները անգիտակցաբար մեծ ծառայութիւն կատարեցին ցեղասպանութեան ճանաչման ճամբին տարւող աշխատանքների տարածման:

Հրանդ Տինքի նահատակութիւնը հիւլէական ռումբից աւելի ուժգին աշխարհը ցնցեց բացայայտելով թուրք շովինիստ պետութեան փանթուրքիզմի քաղաքականութեան յետամնաց նկրտումները: Հրանդ Տինքի զոհաբերութիւնը լրատուական յորդ հեղեղ տեղացրեց աշխարհի տարբեր ծագերում ի նպաստ հայ ժողովրդի արդար պահանջատիրութեան:

# ՃԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ ՈՒ ԲԱԺԱՆԱՐԱՐ ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ ԴԱՐԸ...

*Շարունակուած էջ 15-էն*

ամեակը:

Հին հայկական մանրանկարչութիւնը այսօր ալ կը շարունակէ հիացմունք պատճառել սերունդներուն: Զարմանալի սէր ունեցած է հայ ժողովուրդը գիր ու գրականութեան հանդէպ:

Դարերու ընթացքին տասնեակ հազարաւոր ձեռագիր մատեաններ գրուած են, որոնք զարդարուած են հոյակապ մանրանկարներով:

Ահա այդպէս բեկումնային ու լաւատեսական եղաւ տասնվեցերորդ դարասկիզբը հայ ժողովուրդի մշակութային եւ հոգեւոր կեանքին մէջ: Այդ օրերուն գուցէ դժուար էր պատկերացնել, որ հայ առաջին գիրքի տպագրութենէն ընդամէնը քառասուներեք տարի յետոյ անդառնալի ողբերգութիւն պիտի պատահէր, եւ աշխարհի պէս ու աշխարհէն աւելի ցաւալի հետեւանքներով պիտի կիսուէր, պիտի երկփեղկուէր նաեւ Հայաստանը...

Հայ ժողովուրդը արհեստականօրէն երկու հատուածներու պիտի բաժնուէր եւ այդ օրէն մինչ օրս մեզի համար խորոխտ ու նուիրական "Հայաստան" անունէն ծանր կշռաքարերու պէս կախուած կը մնան "Արեւմտա" եւ "Արեւելա" բացայայտիչները...

Տասնվեցերորդ դարուն /1555/ Հայաստանը նուաճեցին եւ իրարու մէջ բաժնեցին Արեւելքի երկու բռնակալ պետութիւններ՝ Պարսկաստանը եւ Թուրքիան: Արդիւնքին մէջ յառաջ եկան Արեւմտեան եւ Արեւելեան Հայաստան հասկացութիւնները, որոնց սահմանը, գլխաւորաբար Հայկական Պար լեռնաշղթան եղաւ...

Յայտնի չէ թէ ինչու, բայց այս չարագուշակ թուականը վրիպած է ու կը շարունակէ վրիպիլ մեր գրականութենէն ու պատմագրութենէն, մինչդեռ ամէնէն պարզունակ հաշուա՛րկն իսկ մեզի կը յուշէ, թէ եւս չորս տասնամեակ եւ այդ ողբերգական բաժանումէն կէս հազարամեակ կը բաժնէ մեզ:

Գուցէ նաեւ լաւ է, որ վրիպած է... մեր օրացոյցի էջերուն մէջ քիչ չեն տխուր տարեթիւերը...:

Քսաներորդ դարավերջը հայ ժողովուրդին համար դրականօրէն շրջադարձային եղաւ: Ազգային-ազատագրական պայքարի աննախադէպ վերելքը պսակուեցաւ Հայոց՝ Արցախ Աշխարհի լիակատար ազատագրումով եւ երկար ժամանակ իր պատեանին մէջ ժանգոտող Հայոց Զէնքի փառահեղ յաղթանակով:

Մեր ժողովուրդը յաջողեցաւ եթէ ոչ շրջել /վերջնականապէ՛ս շրջել/ ապա գոնէ կեցնել Պատմութեան Անիւին անբարենպաստ ընթացքը:

Ներկայ աշխարհա-քաղաքական իրողութիւնները նկատի առնելով կարելի է նաեւ ենթադրել, որ շուտով բոլորիս համար նուիրական ու խորոխտ "Հայաստան" անունը վերջապէս կը ձերբազատուի նաեւ այդ երկու տաժանելի կշռաքարերէն, որոնք կէս հազարամեակ անընդմէջ կը դժուարացնեն մեր պատմական երթը...

Հիմա վերադառնանք բուն պատմութեան եւ միասին անգամ մը եւս համոզուինք, թէ որքան տարբեր եղած են նոյն Արեւի ու Լուսինի տակ ապրող մարդոց աշխարհընկալումները, մարդու առաքելութեան մասին ըմբռնումներն ու մշակոյթի, մասնաւորաբար գրականութեան դերի ու նշանակութեան մասին ունեցած պատկերացումները:

Բաղդատելու, մանաւանդ հակադրելու եւ այդ ձեւով լաւն ու վատը կամ ճիշդն ու սխալը որոշելու խնդիր չկայ:

Քաղաքականութեան հակառակ՝ արուեստը /խօսքը անշուշտ ճշմարիտ ու մեծ արուեստի մասին է/ կը միաւորէ մարդիկ ու ժողովուրդները, եւ այդ պահը թերեւս ա՛յն եզակի ու ե րանելի պահն է, որ մոռցնել կու տայ բոլոր նուաստ ու անարժան երեւոյթներուն ճղճիմ գոյութիւնը...

Միասին վայելենք այդ պահը...

## ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԳԻՒԲԻԼԵԱՆԻ մահուան տխուր առթիւ փոխան ծաղկեպսակի հետեւեալ նուիրատուութիւնները եղան Նոր Սերունդ Մշակութային Միութեան, որոնց համար շնորհակալութիւն կը յայտնէ վարչութիւնը:

| | |
|---|---|
| Տէր եւ Տիկին Վարդան եւ Ծովիկ Քէօրօղլեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Սահակ եւ Անահիտ Գըլթֆեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Տիգրան Քէշիշեան | $100 |
| Քոքճեան եւ Ճանճանեան ընտանիքներ | $100 |
| Պախճէճեան եւ Հայրապետեան ընտանիքներ | $100 |
| Շիշոյեան ընտանիք | $100 |

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

ԱՐՄԷՆՈՒՀԻ ԳԻՒԲԻԼԵԱՆԻ մահուան տխուր առիթով Կլենտէյլի «Արսէն Կիտուր» մասնաճիւղը իր խորազգաց ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի համայն հազարազատներուն եւ պարազաներուն, յատկապէս Տէր եւ Տիկին Պետրոս եւ Լենա Խոտանեանին:

Առ այդ $200 տոլար կը նուիրէ Մասիսին:

# 100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ ԶՈՒԻՑԵՐԻՈՅ ՄԱՄՈՒԼՆ ՈՒ ՀՆՉԱԿԵԱՆ ՔՍԱՆ ԿԱԽԱՂԱՆՆԵՐԸ

***Շարունակուած էջ 8-էն***

*պատճառը: Ապրիլ ամիսէն սկսեալ, ամբողջ Հայաստանով մէկ անցաւ ապստամբութիւններու[103] ալիք մը: Նեխած պետութեան մը դէմ հարիւրամեակներ շարունակ ճնշուած պայքարը իր ճամբան բացաւ, գայթակղելով Ցարական Ռուսաստանի տուած խոստումներէն եւ երաշխիքներէն, իբրեւ թէ ռուսական զօրքը Հայաստանի ազատագրութեան ճանապարհին է, եւ միաժամանակ ապաւինելով հայ հասարակութեան գրեթէ բոլոր խաւերուն մէջ իշխող նմանօրինակ տրամադրութիւններուն վրայ:*

*Թրքական կառավարութիւնը որոշեց ճնշել այս յեղափոխական շարժումը, եւ ինչպէս նախատեսելի էր, յարձակեցաւ աւելի ընկերվարականներուն վրայ: Ի հարկէ, ան չանհնգստացաւ այն փաստէն, որ մահապատիժի ենթարկուած անձերը հակապետական որոշակի քայլերու չէին դիմած: Անոնք պատերազմի յայտարարութեան յաջորդ օրն իսկ ձերբակալուեցան, երբ դեռ երկրին մէջ ամբողջապէս խաղաղութիւն կը տիրէր: Պետութիւնը զանոնք գրեթէ ամբողջ տարի մը բանտը պահելէ ետք, ապստամբութեան օրն իսկ սպաննեց զիրենք որպէս պատանդներ: Երիտթուրքերը կ'ուզէին այսպէս գաւառական իշխանութիւններուն ցոյց տալ զաւեշտալի օրինակ մը, թէ ինչպէ՛ս պէտք է վարուիլ բնակչութեան այն մասին հետ, որ ամբողջութեամբ իր ուսերուն վրայ կը կրէ ասիական վարչակարգի լուծը եւ նեխած պետութեան մը աւերակները: Անհրաժեշտ էր հրահրել դժբախտ եւ տգէտ իսլամական խաւերուն մոլեռանդութիւնը, որոնք, առանց ատոր ալ, այս պատերազմին պատճառով այսպէս դաժանօրէն կը հիւծէին եւ կը կործանէին:*

*Նպատակին հասած էր: Հնչակեանները, որոնք չէին յոգներ Երիտթուրքական վարչակազմի դէմ ժողովրդավարական պետականութեան համար պայքարելէ, յանկարծ յայտնուեցան կախաղաններուն վրայ, որմէ ետք ամբողջ երկրին մէջ իրագործուեցան ահաւոր ջարդեր, վայրի բնաջնջումներ եւ համատարած կոտորածներ: Բայց այս սարսափելի ողբերգութեան մէջ՝ ընկերվարութեան ողբերգական ոչնչացման մէջ, կայ կէտ մը, որուն պէտք է լրջօրէն ուշադրութիւն դարձնել:*

*Գաղտնիք չէ, որ ներկայիս Թուրքիան կը հանդիսանայ պատերազմող Գերմանիոյ նահանգներէն մէկը: Թէեւ անոնց կառավարութիւնը եւ թէ զօրքն ու նաւատորմը անմիջականօրէն կ'ենթարկուին գերմանական կեդրոնական շտապին: Ասկէ բացի, զօրահրամանատար Ֆօն Տէր Կոլց Փաշան կը գտնուի Սուլթանի պալատին մէջ ու կրնայ իբրեւ ամբողջ Թուրքիոյ փաստացի միապետը նկատուիլ: Ասկէ ինքնին կը հետեւցուի, որ Սուլթանի վճիռին հաստատումը ու Քսան Ընկերվարականներուն մահապատիժը այս իրողութիւններուն տակ չէին կրնար առանց գերմանական հրամանատարութեան կամքին եւ համաձայնութեան իրագործուիլ: Այսպիսով, գերմանական իշխող օղակները մէկ ձեռքով իբրեւ թէ քաղաքացիական խաղաղութիւն[104] կը կնքեն ընկերվարականներու հետ, իսկ միւս ձեռքով կ'օրհնեն թուրք դահիճները, որոնք կախաղան կը բարձրացնեն անոնք, որոնք գերմանացի ընկերներու մօտ ուսանած են դասակարգային պայքարի տեսութիւնն ու գործադրումը, եւ մինչեւ վերջին վայրկեանը սերտ կապի մէջ էին միջազգային Բիւրոյի եւ գերմանական կուսակցութեան հետ:*

*Այս մասին իսկապէս կ'արժէ մտածել[105]: Երբ մեր Դումայի ընկերները սպաննուեցան, իշխող Ռուսաստանը ցոյց տուաւ ֆրանսական, պելճիքական, նաեւ գերմանական ընկերվարականներուն հնազանդութիւնը, կեղծաւորաբար զանոնք մեղադրելով սեփական հայրենիքի դէմ դրսեւորած կեղծ անհաւատարմութեան մէջ:*

*Մենք չենք գիտեր, եթէ թուրք փաշաները եւ իրենց գերմանացի ղեկավարները[106] սպաննուած ընկերներուն [երբեւէ] մատնանշեցին այն [վերոյիշեալ] սոցիալիստները, որոնք խաղաղ գործակիցներն էին իրենց կառավարութեան: Եւ միթէ ցոյց չտուի՞ն անոնք այն ռուս սոցիալդեմոկրատները, ի դէպ այն մասը, որ հանդիսաւորապէս խոստացաւ բանակի թիկունքին ապստամբութիւններ չկազմակերպել: Արդարեւ, սպաննուած ընկերները այստեղ է որ մեղանչեցին: Անոնք երբեք եւ ոչ մէկ պայմանով յեղափոխական գործունէութենէ չհրաժարեցան՝ ամօթալի համարելով որեւէ խաղաղ համաձայնութիւն կնքել դասակարգային թշնամիներուն հետ[107] :*

*Ինչքան ալ արտաքին հարուածներէ եւ ներքին անհամաձայնութենէ Ինտերնացիոնալը թուլացած է, միեւնոյնն է, ան պէտք չէ լուռ մնայ թուրքգերմանական կառավարութեան յանցագործութեան առջեւ: Բայց առաջին հերթին սոյնը գերմանական սոցիալդեմոկրատիայի պարտականութիւնն է՝ բողոքարկել այս իրողութեան դէմ, եւ իր իշխող շրջանակներուն պատասխանատուութեան կանչել: Ան պէտք չէ մոռնայ, որ իր կողմէ շնորհուած վարկերը կը ծառայեն ոչ միայն պատերազմող երկիրներուն մէջ Պրոլետարիատի ոչնչացումին, այլ նաեւ անոնք կը կիրարկուին մեր Ինտերնացիոնալի անդամներուն մահապատժի ենթարկման եւ փէսով կամ առանց փէսի դահիճներու հաւաքագրման համար՝ «Հայրենիքի փրկութեան եւ պաշտպանութեան» եւ «Ճնշուող ժողովուրդներու ազատագրման» նպատակով:*

*Բոլոր պարագաներուն, անկախ այս կամ այն ընկերվարականներու ըրածէն, պէտք է մենք, այսինքն անոնք որոնք յեղափոխական սոցիալդեմոկրատիայի դրօշին հաւատարիմ մնացած են, մեր ձայները բարձրացնենք բողոքելու համար:*

*Թող այս եղբայրական կոչը մեր թրքահպատակ ընկերներուն իբրեւ խրախուսանք ծառայէ իրենց դժուարին պայքարին մէջ, հասարակական կեանքի հինցած ձեւերու ճնշող մնացորդներուն դէմ[108]:*

***(Շարունակելի 4)***

[80} Հմմտ., BT, 7.08.1915 եւ VR, 13.08.1915.

[81] Մասնաւոր ուշադրութիւն պէտք է ընծայել յօդուածի սկիզբը հաղորդուող իրադարձութեան վրայ, որ միաժամանակ կը ներկայացնէ ժամանակագրական տուեալ մը. «Հազիւ քանի մը ամիս անցաւ մեր Դումայի անդամներուն դատապարտութենէն»: Նիկողայոս Բ. Ցարին կողմէ Պետական Բ. Դումայի արձակումէն վերջ, Գ. եւ յաջորդող Դ. Դուման Ռուսաստանի մէջ գործած է մինչեւ 1917 թուականը:

[82] «Համայն Սիւննի Մահմետականներու Խալիֆ» տիտղոսներէն մին էր Օսմանեան Սուլթաններունը:

[83] Հմմտ., BT, 7.08.1915 եւ VR, 13.08.1915.

[84] Նոյնը:

[85] Նոյնը:

[86] Նոյնը:

[87] Wilhelm Leopold Colmar Freiherr von der Goltz, իր կենսագրութեան մասին տես՝ Carl Alexander Krethlow, Generalfeldmarschall Colmar Freiherr von der Goltz Pascha, Padeborn, 2012: Տես նաեւ համացանցային հետեւեալ հասցէները. http://de.wikipedia.org/wiki/Colmar_von_der_Goltz

http://www.eslam.de/begriffe/g/goltz_colmar_von_der©htm

Wilhelm Leopold Colmar Freiherr von der Goltz-ի մասին տես նաեւ՝ Wolfgang Gust (Hg., Der Volker§mord an den Armeniern 1915/16, Dokumente aus dem politischen Archiv des deutschen Auswrtigen Amts, 2005, S. 87, 91, 95, 346f, 361f, 496, 594.

[88] Օսմ. բանակին եւ ընդհանրապէս Թուրքիոյ մատուցած բացառիկ ծառայութիւններուն համար, գերմանացի բարձրաստիճան որոշ զինուորականներու հաւանաբար Սուլթանին կողմէ շնորհուած է «Փաշա» տիտղոսը:

[89] Hans Freiherr von Wangenheim-ի մասին տես՝ Wolfgang Gust (Hg.), անդ, էջ 27, 52ff., 58, 74, 76ff., 79f., 90, 101, 105, 113ff., 137, 139, 149, 155, 185ff.

[90] Otto Viktor Karl Liman von Sanders, Կայսերական Գերմանիոյ այս բարձրաստիճան զօրահրամանատարին նոյնպէս տրուած է «Փաշա» տիտղոսը, հետեւաբար ան նմանապէս ծանօթ եղած է կրճատուած Լիման Փաշա անունով: Լիման Ֆօն Սանտերզի մասին տես նաեւ համացանցային հետեւեալ հասցէները.

http://de.wikipedia. org/wiki/Otto_Liman_von_Sanders

http://www.deutsche-biographie.de/sfz51440.html

http://de.wikipedia. org/ wiki/Liman-von-Sanders-Krise

[91] Հայոց Ցեղասպանութեան հարցին մէջ նաեւ Կայսերական Գերմանիոյ պատասխանատուութեան վերաբերեալ տես՝Johannes Lepsius, Armenien und Europa. Eine Anklage-Schrift wider die christlichen Großmchte und ein Aufruf an das christliche Deutschland. Berlin-Westend 1896; Bericht uber die Lage des ar-menischen Volkes in der Turkei 1916; Deutschland und Armenien 1914-1918: Sammlung diplomatischer Aktenstücke. Potsdam 1919; Der Todesgang des armenischen Volkes: Bericht uber das Schicksal des armen-ischen Volkes in der Turkei während des Weltkrieges. Potsdam 1919; Wolfgang Gust (Hrsg.), Der Volkermord an den Armeniern 1915/16, Dokumente aus dem Politischen Archiv des deutschen Auswärtigen Amts, Springe, 2005.

[92] Հմմտ., BT, 7.08.1915 եւ VR, 13.08.1915.

[93] Նոյնը:

[94] Նոյնը:

[95] Սոյն յօդուածը գերմաներէնէ հայերէնի վերածելու առթիւ, պարտք կը զգանք մեր խորին շնորհակալութիւնը յայտնելու մեր հոգեւոր եղբօր՝ Հայր Գարեգին Վրդ. Յարութիւնեանին՝ ցուցաբերած օժանդակութեան համար:

[96] Առաջին այս զոյգ հատուածները ամբողջապէս կը պակսին «Պերներ Թակվախթ»-ի 7 Օգոստոս 1915 թիւին մէջ տպագրուած Ա. Զուրաբովի յօդուածէն:

[97] Խօսքը Ստեփան Սապահ-Գիւլեանի եւ Վարազդատի մասին է, որոնց երկրէն դուրս գտնուելուն պատճառով մահավճիռը կը տրուի հեռակայ կարգով: (Նշումը մերն է):

[98] Այս նախադասութիւնը նմանապէս կը պակսի «Պերներ Թակվախթ»-ի յօդուածէն:

[99] Այս պարբերութիւնը կը պակսի «Պերներ Թակվախթ»-ի յօդուածէն:

[100] Նոյնը:

[101] Նոյնը:

[102] Բնագիրը չակերտներու մէջ կը նշէ «Կայծ»-ի գերմաներէն թարգմանութիւնը:

[103] Դժուար է գուշակել թէ հեղինակը ի՞նչ աղբիւրներու վրայ կը հիմնաւորէ իր սոյն՝ ամբողջ Հայաստանով մէկ անցաւ ապստամբութիւննե»րու ալիք մը" վարկածը: Արդե՞օք այդ ժամանակաշրջանին ինք անձամբ գտնուելով Եւրոպա իր այս մասին՝ ունեցած տեղեկութիւնները միամիտ քաղած է թրքական սուտակապակ քարոզչութենէն: Իրողութիւնն այն է, որ Հայոց Ցեղասպանութիւնը Երիտթուրքերուն քովն արդէն ամրագրուած գաղափարախօսական վարդապետութիւնն մըն էր, ուստի՝ կը մնար զայն միայն իրագործել, եւ առիթն ահա՝ Ա. Համաշխարհային պատերազմն էր, որու ընթացքին մահագոյժ տեսութիւնն իրագործուեցաւ արեւմտահայութեան հաւաքական մարմնոյն վրայ՝ տեղահանութեամբ, զանգուածային սպանդով եւ բռնի հայրենազրկութեամբ:

[104] Բնագրին մէջ Burgfrieden նշուած է, որ հայերէնի համապատասխան եզրը քաղաքացիական խաղաղութիւն հասկացութեամբ կը վերարտադրուի: Խօսքը՝ կուսակցութիւններու միջեւ միմիեանց դէմ չպայքարելու համար կայացած համաձայնութեան մասին է:

[105] Այս նախադասութիւնը նմանապէս կը պակսի «Պերներ Թակվախթ»-ի յօդուածէն:

[106] Բնագրին մէջ գերմաներէն համապատասխան բառը «FՖhrer»-ն է, որ կարելի է բովանդակային այս կառոյցին մէջ նաեւ «առաջնորդ» հասկնալ:

[107] Այս պարբերութիւնը նմանապէս կը պակսի «Պերներ Թակվախթ»-ի յօդուածէն:

[108] Այս պարբերութիւնը կը պակսի «Պերներ Թակվախթ»-ի յօդուածէն: